

Քանոն


Երևանի քրիստոնեական
սեփար

1896թ

Լսյ

316.

CITA IAK



Handwritten scribble

203.9

2000

Handwritten scribbles

316
L ապ
N 2103


ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

80 99
4 17

ԱՌՆՁԻՆ ԿԱԳՈՒՄ

Թէղոշի և անցուր.—Փողոց ավոզ մշակներ.—Մի պտոյտ
չաւարարում, Սև օրերից մինը.—ձանճ և սարդ.—Աղուէս.—
Էլի ողորմի հօ'րը.—Սրտացու դայլ.—Խոտորնակին խոտոր-
նակ.—Այդպէս էժան շի.—Արջի խաղերը.—Քեզ էլ շի մնալ.—
Հայ ժողովրդական նոր տարին.—Նուասարդ տօնի մասին:



2108



Մարտիրոսեանց Մ-ի և Լուիս Բոնգ. Տպարան.
Միքայելեան փողոց տուն № 81

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 11-го Апрелья 1896 года.



316-2003

(337) 28-315
41

ԱՆՅՈՒՈՐ ԵՒ ԹԵՂՕՉԻ

«Խնդրեմ ասես, թեղօշի,
Ինչիցն է բունդ մաշոււմ,
Բաւական տարուայ տունկ ես,
Միշտ նոյն տկարն ես մնում:

«Աչքս մնաց, որ դու էլ
Հասակ քչես, մեծանաս,
Երկար ու ձիգ ճիւղերով
Մարդու, կենդանու հով տաս:

—Գնց, սիրելի անցուոր,
Ցաւոտ սրտիս ականջ կալ:
Իմ ցաւերը քեզ բանամ՝
Լաւ տես իմ հալ ու ափալ:

Մի դժբաղդ օր շուկայում
Բերին բահով թաղեցին,
Արմատներս հողելով
Չուրջս ամուր քարեցին:

Գիշեր ցերեկ իմ շուրջը
Աղմուկ է ու զզրոց,
Այսչափ սարսափի մէջը
Ի՞նչ օր քաշեմ, սոսա, սնց:

Ոտի տակի կորած եմ,
Ո՞վքեր ասես խփում չեն.
Վախի ձեռից ճղներս
Ձեռն իմանում սուր թարջին:

Աչնքամօտ դեղնոտած
Տերևներս թափում են,
Գեռ գետինը չհասած
Աւրի ծէրով սրբում են:

Ախր սր ջուրն ընկնեմ,
Կամ ի՞նչ հողը գլխիս տամ,
Ձեռն էլ թողնում տերեխ
Հիւթը ծծեմ, զօրանամ:

Ափսոս չէր խոր ծմակը.
Հողը փխրուն, օգը ջինջ.
Ազատ կեանքով աճելու
Ես ունէի ամեն ինչ:

Թ՛նդ նդովուի այն ձեռը,
Որ ինձ անտառից հանեց,
Իմ մայրական սուրբ հողից
Ան յաւիտեան ինձ զրկեց:



ՓՈՂՈՅ ԱԻԼՈՂ ՄՂԱԿՆԵՐ

(Նոռէր ծառուրեան մեծ. պ. Ե-իւ)

1895 թ. ապրիլին էք, երբ լիռ ու քար, ծառ ու ծաղիկ, գետ ու աղբիւր ձմեռուայ շղթաները թօթափած, բնութիւնով կենդանացած՝ կարծես ամեն տեղ նուագահանդէս էին սարքած. լեռն իւր թնդոցով, ծառն իւր սլոյցով, գետն իւր վշոցով, թեւաւորն իւր ծլվոցով: Ապրիլ ամիսն էք, ամեն անկիւնից կենդանութեան շունչ էր փչում:

Այդ օրերից մէկին, Թիֆլիզի Օ. փողոցի վրայ լուսամտոս բաց քնած էի: Գեռ ադամամութը աշխարհից չէք հեռացած, ականջս ընկաւ մի ձայն, որ աղուական եղանակով մրմնջում էր ու զիլ արձագանքով սենեակս լցնում.

Առաւօտուն կելլես, արև կըցաթէ,
Բերանդ որ կու բանաս մեղր կու կաթէ,
Եկմը նստինք, անուշ անուշ խորաթէ...

Եղանակը մելամաղձիկ էր ու քնքոյշ. այդ ձայնաւորին տեսնելու համար շտապով տեղիցս ելայ ու շորս վրայ հաւաքելով լուսամտոսից դուրս նայեցի:

Փողոցն աւող մշակներից էր երգողը, որ նկատելով մօտեցող վերակացուին ձայնն իւրան քաշեց, լռեց:

Վերակացուն կարծես բազարած լինէր. հաստ մահակը ձեռին հետևում էր նրանց. երեսը լմեղած. թուշերը լապոռտած, մազերը լոտուած, մահուդէ գլխարկի կողքերը խոնացած, աչքերը դողար ու ճաղար, ունքերն ու ցրուած բեղերը շէկ. գրափէ հինմաշ վերարկուի գրպանատեղերը պատուտուած, կախուած. ոտի ծանր կօշիկները իւր քսած. ոտը փո-

խելիս պայտի չբխկոցն ու դրբխկոցը փողոցի ծայրն էր հասնում:

Վաղ առաւօտին փողոցի բնակիչները հանգըստանում էին Մորփէոսի գրկում, անց ու դարձ չկար դեռ, վաղորդեան քաղցրահոտ լուռութեան մէջ լսելի էին միայն աւելների ներդաշնակ շարժումն ու քարերին, մայթերին քսմտուելը: Մշակները գլուխնին կախ արած սրբում էին անձայն, որ մաղձոտ վերակացուի կողմից նկատողութեան շարժանանան: Սա տեսնելով, որ մշակները ջանասիրութիւնով իւրանց գործն առաջ են տանում, ինքն էլ ուզեց իւր գործն առաջ տանել, օդի կոնծելու ետնից կենալ, կօշիկները թեթեակի փոխելով ծլկեց գինետան կողմը, որ փողոցի ծայրին էր:

Մշակներից՝ որի ոտին ճաքաւոր չուշտ էր, կամ սաւղաւթի կոպիտ կօշիկ, արխաւորներ էլ կային հայրենի բուճով (գուլբա) հագած: Չատերի ծնկներին լեղակի գոյն փոխան էր, մի քանիսի վրայ էլ նեղ մահուգէ ըրիւկ, երկու երեք տեղ կարկատաններով պաշտպանած:

Հագներին մափի արխաւուղ էր, տակը հայրենի կարմրալանջ շապիկ. ուսներին հինմաշ սերտուկ, ժոկէ, կամ շայտտանի բրդէ բաճկոն:

Մէջքներին կաշէ քամար կամ հայրենի գործովի գօտիկ: Որի գլխին վրացու քեշա էր, որի գլխին ջարդուած շլապա, իսկ նորեկ պանդուխտների գլխին նախշուն արախշին էր կամ Բաղէշու թաղքէ գդակ:

Հասակները նոյնպէս տարբեր էին. կային 20, 30, 50 ամաց դէմքեր, որը ջոտ ու ամբակազմ, որը

հիւանդոտ ու նիհար: Որի հայեացքը պարզ, փայլուն էր, կասես մայիսեան ցողապատ արօտ, որն էլ տխուր, դալկահար, կասես ամառուայ տօթից խշկած հասկ:

Չարքով կանգնած ածում էին աւելները, կարծես իւրանց արտերի մէջ գերանդիով եօն բռնելիս: Տեփօն, որ 30 տարեկան թիկնաւէտ Աւղուացի էր, դարձաւ իւր առջևի ալոդին.

— Կարօ, դուրբան քրդի, մըզ մալուլ մի թողուր, հայի գարուն բացուելուն մօտ է, երգ ըսէ, լսենք:

Կարօն եօնջալուից էր, բարձրահասակ, 20 տարեկան, նայեց շուրջը, տեսաւ վերակացուն չկայ, դեց.

Աչքը ծով ծով ծիծաղադէմ
Ծաւալանայր առաւօտուն.

Երկու փայլակնաձե արեգական նման.

Դեռ Կարօն խօսքը չէր աւարտել, կողքի աւլոզը երբորդ տողը խլելով կրգեց:

«Բերանը երկթերթի, վարդ ի շրթանց կաթէր,
կաթ է է էր.

Կարօն քաղցր ակնարկ արաւ ընկերի վրայ և գլուխն օրօրերով լրացրաւ վերջի տողը.

«Ձայն քաղցրանուագ որ ի նմանէ հնչէր, հըն-
չէ է էր...

Աւղոյներից՝ որը ծոր էր պահում մեղմիկ, որը իւր աւլի ու աղբի հետ խօսում, բարկանում: Ծերունի Մկօն չկամենալով ջահէլների սիրտը կտարել իւր տխուր եղանակով, մի կողմ քաշուելով սկսաւ երգել այս խօսքերը.

Թող արկէր, թող որ իմ սիրտ
Կրակ ու բոց վառուած էղնի՛ր.

Թող իմ աչք կլկլացող
Պղտոր պղտոր արկալիւր էղնի՛ր:

Քիչ շունչ առնելով շարունակեց. —

էն դատար ենք խոնարհեր —
Զըմէն մարդ մեզ բեռ կըղնի.
Փոսի մէջ ընկած դար՛իւր. . .

էլ չկարաց խօսքն աւարտել. աւելն ածելիս մի
քանի կտոր աղբ քարերի արանքից չէին դուրս գա-
լիս, հերոսաց ու դառնացած ասաւ:

— Բե՛մուրվաթ զիբիլ, ինչ ձիւթ դառած կը
կպնիս քարերին, չէ՞ս զինայ քու սարբառ ինչ կու-
գայ իմ բալալու բաշ:

— Թող աշիմ, ադ ինչ զիբիլ է, օգնութեան
հասաւ Մկոյի աներ ձագ քաջակորով Սարօն, իմ աւ-
լիս սար չի զիմնալ, ինչ թէ գոռեիս ու աղբ:

Սարօն աղբը դէպի ուժասպառ ընկերը մղեց
աւելի ծայրով ու տոչորուած սրտով երգեց.

«Սիրտս նման էր, էն ա փլած աներ. . .

Կտարեր էր գերըններն, խախտեր էր աներ...
Իսկ ծերունին տխուր եղանակով շարունակեց.

«Թէ հովեր իրար դարնեն,
Տեղ մը շունինք պահկուելո՛ւ.
Թէ ամպեր կարկուտ թափեն
Տեղ մը շունինք սթարուելո՛ւ:

Չորս զիէն ծովերն առեր
Մենք չոր կղզի մնացեր ենք

Օրէօր ծով կը պարծրանայ
. . . . աման մէկ ճար:

— Սարօ, Մկօ, ինչ կըսէք, աշխարհ խաբարու-
թեն շունիք, ասաւ մշակներից մինը, որ սերտուկ
ունէր հազած. ուղիղ է որ հայու տունը փլուկ, գե-
րանը կտորուկ, սներ խախտուկ են, համա սրտեր չեն
փլուկ. աս տարուան գարուն բացուեր է սաղ աշ-
խարհի համար, մեր փլուկ աներ, խախտուկ սըներ
կը շիրուին նորից, լեցուկ ծովերէն կանցնինք շու-
տով, նոր տարուն մեր երկրում կէղնինք, նար ու
գունաւ կըփշինք, բարեկամաց հետ մէկտեղ ուրխու-
թեն կենինք: Հայ-հայ որ յաւիտեան փողոց արող
չենք մնայ Թիֆլիզ, տի գնանք երկիր, բաւ էր, ինչ որ
դարբութեն քաշեցինք:

Այս ասողն էր Սերօն՝ Գէօվանդուկցին, որ պան-
դխտութեան բաժակը մինչև մրուրը ծծել էր: Թե-
քը ոգևորուած շարժեց ու երգեց.

Եթէ զրուրու ու զումրի բերեն ինձ
երգասաց գուսան, չուրախանամ,
Եթէ հազար գոյնգոյն փետուրներ ինձ
բերին, խալաթ ամն, չուրախանամ.
Եթէ բիւր բիւրոց ինձ ծառայ բերեն,
անհամար հեծել ձիաւոր, չուրախանամ
Եթէ դարպաս ինձ շինին ոսկով զարդարած,
անգին մարգարտով, չուրախանամ.
Բայց եթէ լինէր թուշէի, բարձրանայի
իմ հայրենիս, իմ տունս,
Յայնժամ ուրախանայր, հովանայր
Սիրտ ու շիգեար դարբիլս, բաժանելո՛յս:

Այս երգի վրայ ամենը միաբերան հառաչեցին.

—Օ՛Ֆ, օ՛Ֆ, խորոտ հայրենիք, մեռանք քու կարօտով. շատն անցեր, քիչն է մացեր, զօրութեամբ Աստծու մինչ նոր տարի կարժանանանք քու տեսուն:

Ասին մշակներն ու ոգևորուած շարունակեցին ձեռները գործը. փողօցը վերջացնելու վրայ էին:

—Ի՞նչ կըսեն Թիֆլիզի բանգէտ մարդիկ, տացու, հարցրաւ արեակէզ դէմքով մի մշակ. քրիստոնեայ թագուորներ մզի ճար չենի տար զուլում տաճկի ձեռէն ազատուելու, որ շուտ հայրենիք դառնանք, նորէն արօրի մաճ բռնենք, լծվար դառնանք. մինչև երբ աս քաղքին զիբիներն ալինք:

—Հա՛, տացու, ըսէ՛, լսինք, դիմեցին ամենը, մխիթարելի նոր բան կայ գաղէթաներու մէջ:

Տացուն որ թիով նրանց ետնից գնում էր ու աղբէրը կոյտ կոյտ դիզում, կանգնեց ու այսպէս պատասխանեց.

—Ղուրբան ձեր արևուն, ինչ ըսիմ, ուրախալի լուրեր շատ կը պարտին. կըսեն քրիստոնեայ թագաւորներ թոփ էլած հայու ազատութեան իրագէ կուզեն սուլթանէն: Բայց չէք գինա, որ բանձր սարեր բուռն հովեր ալ կունենան, որ փշելիս մատաղ տունկեր արմրտահան կենին: Ես կը վախնամ, աղպրաիք, որ ադ լուրեր օդում զուր պարտին, ոլորտին ու պազեն, անօգուտ մնան:

Մշակների մի մասը տացուի զրոյցին էր ականջ դրել, առաջևից գնացող ջահէլ պանդուխտը յանկարծ միտ բերելով հայրենիքում թողած քաղցը յիշատակը, կանգնողներից բաժանուեց ու երգեց.

Ծառ նարընջենի, ծաղիկ ծովային,
Դու սալվի շինար, տունկ պալատանի.
Ծաղկեալ բուրաստան, հոտոզ դմայլելի,
Դու վարդ մանուշակ, ծով ես ծիրանի...

Միւսների տխուր մտածմունքները տեղի տուին սիրող սրտի արտայայտութեան առաջ ու միասին ծոր բռնելով խրախուսեցին:

—Ապրիս, Ե՛րօ, Աստուած վկայ, դրուտ կըսես, մեր աշխրի աղջիկ ու հարս՝ մանուշակ ու վարդ են, էնոնք դադը գիտցող չկայ... էնոնք վարդ են, մընք բլբուլ, էնոնք ծով են, մընք գեամի. բայց աչէ, էնոնք ս՛ւր, մենք ս՛ւր: Աւելի աղէկ չըլլար, որ հայրենիք մնայինք, էնոր կըրակում այրուէինք, քան դարբութեան մէջ ախ ու վախ քաշելով մոռնայինք մըր տուն, մըր խորոտ խայրենիք:

Այս խօսքումն էր եօնջալուեցի Աբրօն, որ կորեցի Ագօն վրայ բերաւ կարծեո գուշակելով նրա միաքը.

Օխտը տարի կանէ Թիֆլիզ ես գացե՛ր,
Թիֆլիզի մէյտանը դուքան ես բացե՛ր.
Ձեռացդ թղթիկն ալ ինչո՛ւ ես մոռցե՛ր...

Այլ ես Ագօն չուզեց շարունակել, որ ընկերներին չամաչեցնի, բայց Գսպօն անկեղծութիւնով լըբացրաւ մնացած տողերը.

Ադ տեղացը եարուն քուրք ես հագուցե՛ր,
Քու քամբախ եարիկը շատ ես լացուցե՛ր:

Այս բոպէին էր, որ մահակը պատերին չխկացնելով լոյս ընկաւ ծերունի վերակացուն, քիթը օղիլ

զօրութիւնից կարմրացրած, առանց սրբած փողոցին նայելու աղաղակեց ոռուսերէն.

— Ա՛խ, ծոյլ անպիտաններ. դեռ չէք վերջացրել. անասուններ, օրը բացուել է, դեռ մենք այս փողոցում:

Փողոց մաքրելը աւարտուելու վրայ էր. մշակներինց՝ որը ծոցից հացի ձոթը հանում էր, կամ գաղտուկ կծում կամ ձեռի գործը շարունակում, որը մայթերի տակին մնացած հողն ու փոշին ժողովելով պղքակոյտերին էր մօտեցնում:

— Տանմ, էլ ինչո՞ւ կըհերտոտի մեր ղզըլըռուրուն (կարմրաքիթ) վերակացուն, տրանջաց Մկօն, սրբելը ասկէց լա՛ւ կեղնի. ինքը կուգնայ բախի կը թարբէ, կուգայ մեզ վրայ գաւազան կըշարժէ, աս ի՛նչ արդարութեան է...

— Քիչ մ'ալ համբերէ, զո՛ւրբան, դարձաւ նրան տացուն, հայի ուս լուծքի սովոր է. դիմցիր մինչ նոր տարի, անկէ ետե ազատ ես: Քանի որ եղն ես ուրիշի արօրում լծուած, հօտաղի դէմ մի գանգըտիր. դիմցիր, ազատութեան ժամ շուտ գարկելու վրայ է: Հասկցող մարդիկ կըսեն, որ ամիս մ'էլ չի քաշի, ամեն նեղութեան կըվերջընայ. տաճկի լուծից ազատ կէղնին հայ ու հայաստան:

— Ա՛խ, շմեռնիմ, ազ օրն ալ տեսնիմ, հառաչեց մինր:

— Համբերէք, զո՛ւրբան ձեզի, կըտեսնիք, քաջախրեց տացուն. հայու գրկանք ու շարշարանք վերջնայու վրայ է: Մինչ նոր տարին մընք մեր երկիր կերթանք, մեր տան ու դաշաին տիրացած կէղնինք: Հասել էին փողոցի ծայրը և վերակացուի ահից

ձայները քաշացրել: Ես էլ թողի ունկնդրութիւնս:

Ալոդների նոյն խմբին երկրորդ անգամ պատահեցի աշնանամտիս: Չատ ջուր էր անցել մինչև այդ օրը Քոսան կամրջների տակով, շատ բան էլ փոխուել:

Գարնան պայծառ արևի փոխանակ մըլած աշունքը անձրև էր մաղում քաղաքի վրայ: Մշակները բանում էին ու տխուր տրտում քայլերը փոխում:

Լըրագրի ցրուիչն անցաւ նրանց մօտով, ալոդի մէկը կանգ առաւ, ընկերներին ասաւ.

— Մարդ իմնայ, գաղէթի մէջ ի՛նչ նոր խաբարմ կայ Մուշէն, Բաղէշէն, մեր երկրներէն...

— Ի՛նչ գաղէթա է. «Մշակ» է, «Արձագանք», թէ «Նոր-Դանք», հարցրաւ ուրիշ մշակ, որ զրագէտ էր երևում:

— Գործերնուզ անէք, հեղինակաբար խօսեց տացուն, յուսերնիդ մի թուլցնէք. կըսեն որ քրիստոնեայ թագաւորներ կը խորհին մեզ համար. աւլէք, Աստուած օղորմած է:

— Է՛, տացն, չիյտեմ, դու ի՛նչ կը զուրցես. խօսեց մի դժգոհ մշակ, Աստծուն ապաւինելէն բեղբանք, հէջ օգուտ մը չտեսանր:

Այս ասելով աւելը թանձր ցեխի տակ տուաւ ու հրեց առաջ:

Տացուն վիրաւորուած նրա նկատողութիւնից բարձրաձայն ասաւ.

— Լուէ՛, գրթօ՛, Աստծու դէմ խօսելը ի՛նչ է, առանց աշխատանքի բան առաջ կուգայ. աւելը թողնելով, Աստծուն ապաւինելով ցեխ ու գոռեխ չի

սրբուեր: Աւլէ ու իմցիր, որ առանց հայի նեղութեան հայի գործ չի դրստուիր. ուրիշի վրայ ումուզ դնելը մեզ աս օրին հասուց: Սպասելը կըսեն լաւ բան է, սպասեցինք, բայց օգուտ չունեցանք: Նահախ չի ասեր տաճիկը. «Եթիմա ումուզ վերան չոխ, արբակ վերան եօխ»:

— Տացնւ, ինչ կըսես. տխրադէմ գիմեցին մշակները, հապա մըր երկիր չենք դառնալու. գարունը ամառ դառաւ. ամառը աշուն, մենք լէ աստեղ:

— Քիչ մ'ալ համբերենք, ախպարք, յարեց տացուն, յոյսը տնանկի անբաժան ընկերն է, սպասենք նոր տարին կուգայ, կարելի է, նոր բարի բերէ:

— Ախ, ո՛ւր է, տացնւ, քո խօսքը Աստուած լսէ ու մեր խեղճ ազգին մի ինքեար ու ճար անէ, թողենք փոյոց ալելը, երթանք մըր երկիր, գութանի սուրբ մաճ բռնենք, մեր անուշ հայրենիքի հող հերկենք:

— Աստուած ձեր ըզձերին կատարումն ասայ, հայ եղբայրներ, ասի ու մշակների մօտից հեռացայ:

ՄԻ ՊՏՈՅՏ ՀԱՒԼԱՅԱՐՈՒՄ

(Նոռեր հայ վարժառեցիներն)

1894 թ. Մեծ-պատի վերջին շաբաթն էր:

Թիֆլիզ լուր հասաւ, թէ ողջ Ալաշկերտի ժողովուրդը պոկ եկած, թափուել է Կարսի նահանգը: Քրդերն ու զապթիաները (թուրք ոտիկանները) հայերի ստացուածները խլել, երկրից քշել են: Վտարանդի հայերը՝ կնիկ, աղջիկ, ծերունի, ցրտատար եղած լցուել են Բասսինի բարձրաւանդակների ձնի երեսներն ու անօթութիւնից շաղ անցած այս ու այն կողմը կոտորում են: Հաց չկայ ուտելու. ձիւնը փորում, տակից արմատներ են հանում, նրանով իւրանց սև օրը մթնացնում: Թիւր չէր իմացում, թէ քանի հողի են այդ հալածական հայերը. օր օրի վրայ աւելանում էին ու ծանրաբեռնում Կարսի նահանգի հայերի վրայ, որոնք առանց այն էլ չքաւոր էին:

Կայծակն այնպէս սրտայոյզ չէր անիլ հայերին, ինչպէս սովի լուրն արաւ:

— Մենք ինչացու ենք այստեղ, ասում էին Թիֆլիզի ու այլ տեղերի հայերը, հայուհիները, երբ մեր արիւնակիցները քշուած սիրելի հողից ու ջրից, շունչները բերանում հալածական եղած հասել են մեզ մօտ ու անօթութիւնից, սովի ձեռից կոտորում են:

Սովեալների ճօթը մուլորուած ոչխարների պէս հասել էր ս. Էջմիածնի պատերի տակը.— հաց ենք ուղում, Հայրիկ, օգնութիւն արա, մեռնում ենք, աղաղակում էին նրանք:

Մայր աթոռի ամբարները բացուել էին, ժողոված բոլոր ալիւրը, ցորենը բաժանուել սովալուովներ-

րին: Հալածականների ուրկունը ահագին էր, ջրի պէս անընդհատ գալիս էր Բասենի կողմերից. ամենքը օգնութիւն էին ուզում հայրիկից: Մեծ ջրի ուրկունին զօրեղ պատուար էր հարկաւոր, դրա համար հայրիկը հրաւէր կարգաց իւր ապահով, անկարօտ որդեկերանց. «Քացէք ձեր սրտի դռները. որդիքս կտորվում են»: Սրբատառ կոնդակը հասնելով ցնցեց ամենին և հեղեղի պէս հայերի ծոցերից հոսեցին նպաստները: Այդ միջոցին թոյլատրած էր ժողովաբարութիւն անելը:

Խմբակներ էին շրջում թաղէ թաղ, նրանցից մինը չորս հոգուց էր բաղկացած՝ երկուսն օրիորդ էին, մինը երիտասարդ, չորրորդն էլ մի երէց՝ գօտեւորուած Քրիստոսի այս խօսքերով. «Քանտուճն էի, եկար ինձ մօտ, սոված էի, ուտացրիք, տխուր էի, հագցրիք, տխուր էի, միխթարեցիք ինձ»: Այդ խումբը անցաւ թուրքի մէջիթի մօտից դէպի կամուրջը ու վտառհուլութիւնով սկսաւ խելի (զլխի) դուրաններին մօտենալ: Աջ ու ձախ դուրնատէրերը ամենքն էլ հայ էին ու շնչին վաստակով իրանց ընտանիքները պահող:

—Սրանց տուած կոպէկն աւելի արժէք ունի, դառնութիւնով են վաստակում, ասաւ օրիորդներից աւագը. հետաքրքիր է, թէ ինչպէս կը վերաբերուին այսպիսի մարդիկ դէպի սովեպաները: Պնդում են թէ դարգացումն է մարդու պարտաճանաչ ու կարեկցող դարձնում. այսօր փորձը, տեսնենք, ինչ ցոյց կը տայ. կամ կը հիասթափուեմ ու կը սկսեմ արհամարհանքով նայել հասարակ դասակարգի վրայ, կամ յարգանքիս հաւաստիքը աւելացնելով կը շարունակեմ պատուել, սիրել նրան:

—Սկսենք սիրելիք, առաջարկեց երէցը:

—Սկսենք, հաւանութիւն տուին խմբի միւս անդամները: Երէցն ու երիտասարդը մտան մտազործի խանութը, օրիորդները դուրսը սպասեցին: Մտազործներն երկու էին. մինի ձեռին լայնաչեղը սաթիլ կար, միւսի պողունցում արծաթապատ չիրուխ: Երէցը կարճառօտ պատմեց իւրանց շրջելու նպատակը. սաթիլով դասարը տխրեց ու անխօս մօտեցաւ գալսիին. ռափի առաջ եղած արծաթ փողերը քաշեց, որ տայ երէցին. չիրուխաւորը նայեց նրա բռան մէջ ու ասաւ.

—Թամամիր մանէթը, շես տեսնում ովքեր են եկել ման գալու:

Այդ ընդէին ոչխարածը ներս եկաւ յայտնեց. աղա, կուզես, մորթելու ոչխար բերեմ:


Նրան պատասխանելու տեղ դասարը տխրած կերպով ասաւ.—Մկօ. ձիր կողմիրը սով է ննզի:

—Աղա ջան, լսել եմ, կասեն տաճիկները խայիբին խուկել են տուն ու տեղից. էնոնք եկել են Ղարս. շատ նեղութիւն կը քաշեն: Տաճիկի իսարը կտրուի:

—Մի արասի էլ Մկօի կողմից տուր և իմ հաշուին գրիր, ասաւ չիրուխաւորը:

Խումբը թեքուեց այդտեղից, դեռ միւս խանութին ու կրպակին չմօտեցած, արդէն ամեն կողմից նայում էին ու կասես հայեացքներով կանչում. «եկէք ձիր հոգուն մատաղ, մինը էլ հայ ինք, մինը էլ միր կոպէկը տանք»: Ամեն կողմից սիրով հրաւիրում էին ու սե, սպիտակ, թուրթ փող տալիս՝ թէ դասարներ, թէ բուշաղչիներ, թէ թուանքչիներ, թէ զալթաղչիներ, թէ բաղկալներ՝ և թէ թարախ ման ածողներ:

(337) 316-2003



—Սովաժի դադրը իս լաւ գիղիմ, ասում էր կին-
տօ Տեփանը, իս պատի վուխտս շատ իմ սոված էլի-
առէք իմ գանձանակը:

Գանձապահ օրիորդը հրճուանքի մէջ էր. շա-
րունակ ժպիտ էր խաղում պատկերի վրայ, կարծես
նրա սիրան ասում էր՝ կեցցէ հասարակ ժողովուրդը.

Քախկալ Ս. որ ձկան գործով էր պարապում.
խմբի սպասածից աւելի նուիրեց ու աւելացրաւ.

—Եթէ կնիկս իմանայ, որ իր որդու վարժունհին
սովեալների համար փող է հաւաքում, նա էլ առան-
ձին կը տայ:

Քաղկալխանէն վերջացրին, խաշապանխանի մօ-
տից անցնելով խմբակն ուզում էր միւս կարգն անց-
նել, ուր մեծ մասը երկաթագործներ ու ներկարար-
ներ են, ահա կեչակալած շորերով մի խաշապան
մուշտարիներին թողած դուրս վազեց.—բաս ինձ
մարդու տիղ չիք գնում, ես էլ սոված մարդկերանց
համա իմ ամեն օր ծուխ ու մուխ կուլ աւալիս. հա-
մեցէք իմ գանձանակը, էս օր հէնց կիմանամ ծոմ
եմ պահել. առէք էս տաս շահին ու պակասը բաշ-
խեցէք: Վերջը վրայ բերաւ վրացերէն մի քանի դու-
րեկան խօսքեր ու աղամանը ձեռին գնաց իւր դու-
քանը, ուր երկար տախտակի շուրջը նստոտած էին
մուշտարիները և իւր ձեռովը աղ ցանեց, որ անպի-
բաժինները համովացնի:

Այդ վայրկեանին կողքի դուքանում մի վրացի
հաց էր թխում, տեսնելով խմբակի մէջ օրիորդներ,
պինչը կալած ետ մղուեց գէպի տախտի վրայ դարտած
անկողինը և կարպետի տակ եղած մանր փողերը քա-
շելով առանց համբելու բերաւ շտապով երէցին յանձ-

նեց ու դարձեալ շարունակեց թորնի մէջ կախուե-
լով հաց թխելը:

Նախ քան դարբինների շարքին մօտենալը երէ-
ցը տեղեկութիւն տուաւ, թէ ումնից ինչ կարելի է
սպասել, շատերին նա ճանաչում էր:

—Այստեղ ամենքը իւրանց ուժի չափ կը տան, բա-
ցի երկու մարդուց, որոնցից մի դալլաք է, այն էլ
լեզուանի դալլաք, ինչպէս լինում են նրանց մեծ
մասը. միւսն էլ էր դարբին՝ երեք եղբայր, լաւ կա-
րողութեան տէր, բայց ժլատ ու բկլատ. այնպէս
փողատէր են այդ օրհնեալ հոգիքը, որ եթէ Աստուած
նրանց շունչն ու վաստակած փողը կշեռքի նժարնե-
րում դնի և հարցնի—ո՞ր կուղէք որ վերցնեմ: Նրանք
կը պատասխանեն—շունչներս սու, փողը թո՛ղ:

Դալլաքի դուքանը ներքևի ծայրին էր. խումբը
դռանը մօտեցաւ թէ չէ, իսկոյն ժպտալով դիմաւո-
րեց ու ասաւ.

—Տէրտէր, այ տես, մուշտարիս նստած սովի
մասին է պատմում. ասում է երէխէքը ձնի վրայ դէն
են գցում կնանիքը, որովհետեւ իրանք օրերով սոված
են, ծծերում կաթ չունին, որ երեխանց կերակրեն:
Ա՛ռ էս արասին ու պակասը բախշիր:

—Օրհնեալ լինիս, ասաւ երէցը.—շնորհակալ ենք,
ասին միւս անդամները ու կարգով բարձրացան: Մրի
ու քրտնքի մէջ կորած արհեստաւորները, որոնք օրա-
կան հագիւ 20—50 կոպ. են վաստակում, խոնար-
հութիւնով լսում էին խմբակի յորդորները ու իրանց
լուման տալիս:

Վերջապէս խումբը հասաւ մեծ դարբնի խանութը,
ուր երեք տեղ սալ էր վէր թողած. աշխատանքը ե-

ուում էր. փութսի վշվշոցը, քուրայի վրչոցն ու թէժ պէժերի դէս ու դէն շող ընկնիլը, նրանցից գոյացած մրճեղն ու հուրքը, մուրճերի իւրար ետնից կռնաորր նարեկ գալը, գլխաւոր ուստայի հրամանն ու ճիշը մի տեսակ զլլան, եփուն կաթսայ էին ներայացնում: Գարընոցում մարդու ձայն չէր լսուում միայն վշոց, փշոց, ճվոց ու դարբոց:

Այդպիսի միջոցին էր, որ խմբակն անվտանգութիւնով կանգ առաւ դուքանի առաջ: Գլխաւոր վարպետը, որ աւագ եղբայրն էր, իսկի այնումը չպցեց թէ մարդիկ են եկել: Ձեռի երկաթը ծեծել տուաւ, նորից քուրան դրաւ, աւագ ցանեց կրակի վրայ հրամայեց, որ ածուխ աւելացնեն. հտով մօտենալով շէմքին հարցրաւ.

— Ի՞նչ էք ուզում, բան, կացին, թէ՛ շանգալներ:

— Մենք դրա համար չենք եկել, խօսեց երիտասարդը:

— Քա ի՞նչի համար էք կանգնել ստուր կերպով հարցրաւ դարբինը:

— Մի քիչ սարիֆաթով խօսելը, օրհնեալ հօգի, կողքից խօսեց երէցը. մի քանի անգամ հօ շես տեսել էս մարդկերանց քո դուքանի դռանը կանգնած:

— Չ՛ը, բաս ի՞նչ է, տէրտէր, ճրբաց դարբինը, փող ուզելիս կըլէք, էլի: Չէք տեսնում մեր շորերի հալը, սող տեղ չկայ, կրակից ծակծկուել է: Խեղճի անուն էք տալիս, մեզանից էլ խեղճ մարդ կայ աշխարհում:

Այդ պատասխանի վրայ էլ օրիորդները շմնացին, զգուհելով հեռացան դէպի վերև: Գարբինը բարձրը ձայնով լեզու թափելուց հար մի քանի սե փող

հանեց թիթեղի արկղիկից ու կիսաջան լինելով տուաւ: Երէցի նպատակն այն էր, որ այդ անդաւակ մարդից կօպէկ պոկի: Փողն առնելուց հար աւելացրաւ կատակով.

— Գարտական լինիմ, թէ տարու զլխին զաւակ չունենաս. դու փորձիր բարի գործերի համար առատ առատ փող տուր:

Երէցն ուզում էր կողքի դուքանն առանց մտնելու անցնի, որ օրիորդներին մօտ գնայ. երիտասարդն ասաւ. — տէր հայր, մի անցնիլ, արի այս ուստին (վարպետին) էլ այցելենք:

Գուքանում մի աշակերտ էր. չարուչ էր խփում: Երկու մանուկ պատերի տակ երկաթի կտորների հետ խաղում էին. նրանց հայրը ախալուզանց էր. զլխին հին մահուկէ գտակ, առջր կաշուէ գոգնոց, միջին հասակի մարդ էր. դուրեկան երեսով, քիչ նիհար:

— Մի տուն լիքը երեխէք ունի, դրանից փող ուղի կը լինի, նկատեց երէցը:

— Տէր-հայր, սխալուում էք, գութն ու ողորմը որդետէրերի մօտ է, պնդեց երիտասարդը, արի փորձի համար մանենք սրա խանութը:

Ասին ու մտան: Օրիորդները հեռու կանգնած էին:

Գարբինը տէրտէրին տեսաւ թէ չէ՛ կանգնիլը, ասաւ աշակերտին. — Օրհնեա տէր, ասաւ ու բանը թողելով մօտեցաւ աջն առաւ. բարի էք եկել, համեցէք. ձեռք տուաւ երիտասարդին. — ներողութիւն, գործլու մուրի մէջ կորած ենք: Տէրտէր ջան, ես թէպէտ բանի վրայ էի, բայց լսում էի նիգողոսի զոգոցը. նրանց աւել անունը «Կեղտակերանց է»,

մի նեղանալ նրա խօսքերից: Ես չիմացայ, ձեր ուզելիքն ինչ էր նրանից. եթէ Չափա չի ըլիլ, մի երկու խօսքով ասեցէք. կարելի է մի բանով կարենամ ձեր սիրտն առնել, հազարէց մի անգամ պատահել էք:

Երիտասարդն սկսաւ շրջելու նպատակը յայտնել, երէցն էլ պակասը լրացրաւ շեշտելով այն սոսկալի վիճակի վրայ, որի մէջ գտնուում են քրդերի ձեռից փախած հայ մարդիկն ու կնանիք: Գարբին Գէորգը ախ ու վիշ անելով լսում էք: Օրիորդները տեսան որ երէցն ու երիտասարդը ուշանում են, իրանք էլ մօտեցան: Այդ միջոցին դարբին Եագորը խօսեց:

— Էս բաներն էիք ասում հա՛ Կեղտակերանց Նիգողոսին և նա կոպիտ-կոպիտ բղաւում էր՝ փոխանակ ձեզ հետ ցաւելու, մղկըտալու: Հաջաթ չի, տէր-հայր, պէտք է ներել, նա որդի չունի, ինչ կիմանայ, սովն ինչ է, սբտի մղկիտն ինչ է, իր բայդուչ գլուխը—է, տէրտէր ջան, դու ասում ես, քուրդերը շատ հայեր են կոտորել, կողոպտել, նրանց մէջն էլ կնիկ, մանուկներ... մնացածներն էլ սովի ձեռից նեղ օրի մէջ կ'են...: Ասում են թէ կնանիքը ծծի երեխանց չպրտում են ձնի երեսը, որովհետեւ իրանք աննիւթ մեռնում են, կաթ էլ չունին, երեխին ուտացնեն: Վայ ջանս դուրս գայ նրանց համար: Օգնութիւնը հարկաւոր է, անպատճառ հարկաւոր է. տէրտէր ջան, ես էլ իմ կարողութեան չափ պարտական եմ ու կօզնեմ: Տէրին փառք, երեխէքս առողջ են, ոչ տկլոր են, ոչ քաղցած: Բն չեմ գիտում, ես ինչքան տամ, որ իմ սիրտն ինձանից շնորհակալ մնայ: Այ տղայ, ասաւ փոքրաւորին, բեր էստեղ մեր էսօրուայ դախլը:

Աշակերտը *ուա՛րի* գլխից վէր բերաւ արկղիկը: Գարբին Եագորը մատի ծայրով դրամները տնտղելով ինքն իւրան ասաւ.

— Աստուած ողորմած է. էգուց էլ իմ որդկերանց համար կը հասցնի. էսօրուայ քրտինքս թող սովեալներին լինի:

Այս ասելով արկղիկը ձեռին առաջ եկաւ դէպի գանձապահ օրիորդը, որին շատ անգամ էր նկատել իւր խանութի առջևով դարձոց գնալիս.

— Համեցէք, էս մէկը իմ Մաքուլիս տեղ (ամենափոքր տղային էր ակնարկում). էս էլ Գիգօլուս տեղ. էս էլ Նուշոյիս տեղ. էս էլ Արմենակիս տեղ. էս Բաբիկիս տեղ, որին կնքելիս տէրտէրն ասել է՝ երեւելի մարդ պէտք է դուս գայ. էս երկուսն էլ երկու տղերանցս տեղը (որ երկաթի կտորների հետ խաղում էին, բայց այժմ քաղցը հայտնաբերով մէկ իրանց մրաթաթախ հօրն էին նայում, մէկ ժողովարար խմբակի անդամներին): Մնացինք ես ու իմ պառաւը (կնոջն էր ակնարկում), մեր տեղը ես իմ ծոցից կըտամ: Ահա համեցէք:

Խմբակի օրիորդները մնացել էին հիացած աչքերով դարբնին նայելիս. «այ անարատ հողի, այ ընտիր մարդ», շշնշում էին նրանք: Ո՛ր նդովեալ բերանն է ասում թէ, հայ ազգը միայն վաշխառուններից է բաղկացած, բողոքում էր միւս ազնուամիտ օրիորդը, թող գան այդ կոյրերը տեսնեն, թէ ինչպիսի կացութեան մէջ ինչ առաքինի, պատուական հոգիք կան: Բազմանդամ ընտանիքի տէր մարդ Ասածու վրայ յոյսը դրած նուիրաբերում է իւր բոլոր վաստակը: Ո՛վ կանէ մեզանից այդ»:

Արդար էր օրիորդի բողոքը. դարբին Նագորը 180 կոպ. առաւ, մարդագլխի 20 կոպ. և վերջին էլ դարձաւ խրախուսեց.

— Սուրբ գործի համար էք աշխատում. Աստուած էլ ձեզ քաղցր և երկար կեանք տայ:

Հէնց այս խօսքն էր վարպետի բերանում, որ աշակերտն անհամարձակ ձայնով վրայ բերաւ.

— Բա ես, ուստա:

Գարբինը ժպտալով աշակերտի երեսին նայեց: Աշակերտը կարմրելով խօսեց.

— Բա ինձ վրայ Աստուած լաւութիւն չունի, ես նրա ստեղծածը չեմ. թող էս փշրանքն էլ իմ ծուցիցն ըլի, ասաւ ու երկու սիւլտակ դրամ պցեց դանձապահի թաշկինակի մէջ:

— Անունդ, անունդ ինչ է, հարցրաւ օրիորդը, Աշակերտն ամաշելուց շատաւ.

— Անունս ինչ հարկաւոր է. գրեցէք դարբնի մրաթաթախ աշկերտ»:

— Օրհնեալ լինիս դու էլ, քու վարպետն էլ, ասաւ երէցը:

— Ապրեն մրաթաթախ աշակերտները իւրանց բարեխրատ ուստաներով, օրհնեց խմբակն ու բարձրացաւ դէպի Չորաբաշի եկեղեցու փողոցները:

Սկսան ժողովարարութիւնը թաղամէջերից: Գրթո՞տ կանայք. էլ հարկաւոր չէր երկարապատում լինել նրանց մօտ. մի խօսքից նրանք զգում, իմանում էին, թէ ինչ է ասելու խմբակը. ով ինչ ունէր՝ սև, սիւլտակ, թէ թուղթ փող բերում էր տալիս ու հագար անգամ ներողութիւն խնդրում. որ պակասը բաշխեն: Ապա սկսվում էր անէծքի հեղեղը սրտա-

մորմօք բերաններից դէպի դաժան թուրքն ու քուրդը, որոնք աւերում են հայ ազգի տունն ու տեղը ու ժողովրդին դառարգուն անում: Կանայք զարմանում էին տեսնելով վարժուհի օրիորդներին խմբակի մէջ. որդեաքերը խնդրում, թախանձում էին, որ փոքր ինչ կանգ առնեն, մի բաժակ սուրճ վայելեն կամ նախաճաշիկ անեն:

— 2եւք կարող, ասում էին օրիորդները, շտապում ենք ժողովարարութիւնը մեզ յանձնած քաղաքամասում վերջացնել, այսօր եեթ ժողոված փողերը պէտք է առաքուին սովեալների յանձնաժողովին:

Կանայքը մէկը միւսից լսելով շտապում էին և իւրանց լումաները ձգում: Աղքատ պառուսները լսելով մօտենում էին խմբակին ու թաշկինակի ծայրին կշկռած հոգեպահուսաները հանում:

Խումբը հասաւ մէյքանի մօտ դարբինների շարքը, ետով էլ մանրավաճառներին, որոնք առաջ ապշած նայեցին, ապա սկսան իրարից օրինակ վերցնելով դանձանակ պցել: Հերթը հասաւ Ուկրալենց ջահէլ Սանդրոյին, որ մի հաստավիղ տկոած արարած էր: Անկիւնի վրայ լիք խանութ ունէր. երէցը նրան հարուստների շարքումն էր դասել և յոյս ունէր մի քանի ուուրլիների:

Երէցի առաջնորդութիւնով խմբակը դրա խանութը մտաւ, կարմրաթուշ Սանդրօն մնաց դուրսը կանգնած, աչքի տակով մանողներին նայելիս:

— Համեցէք ներս, բարեկամ, ձայն առաւ խմբի երիտասարդը, էդ ինչ քաղաքավարութիւն է, որ դու անում ես:

Հրաւերին ակամայ հնազանդուեց Սանդրօն, դէ-

պի շէմբը թերուելով մի անհամ, անալի հայեացք ձգեց խմբի վրայ ու բէգի նման հարցրաւ.

— Ի՞նչ էք ուզում: Երէցն իբրև ծանօթի դիմելով, առաջարկեց.

— Դախլը մտիւր, բան ենք ասում:

Սանդրօն ոչ տարաւ, ոչ բերաւ, թուշերն ու պուօշներն ուղցնելով խօտեց.

— Չորս հոգով հօ խէրով բանի չէք գալ:

Երէցը մի կողմից, երիտասարդը միւս կողմից սկսան սովի սարսափը նկարագրել աղէտալի և սըր-տաշարթ բառերով: Սանդրօն պինշը քաշ արած լըսեց ու ետով հարցրաւ.

— Հիմի ի՞նչ էք ուզում, էն ասեցէք.

— Մի՞թէ հասկանալի չէ քեզ, թէ ի՞նչ ենք ուզում, վշտացած վրայ բերաւ երիտասարդը:

— Որդի Սանդրօ, խօսեց երէցը. լսեցիր թէ ի՞նչ օրի մէջ են հայերը Ղարսի նահանգում. այժմ ի՞նչ որ սրտիցդ կը բղխի, քո կարողութեան չափ նուէր տուր: Մենակ դու չես, քաղաքի բոլոր հայերը օգնում, տալիս են:

— Չեր միտքն էն է, որ մենք էլ նրանց պէս աղքատանանք ու դռնէ դուռ ընկնենք, էլի, խօսեց արհամարհական ձևով Սանդրօն. ես ի՞նչ տամ, որ նրանք կշտանան:

Նա այս խօսքերն ասում էր ոչ թէ կամաց, այլ գուգուռալով: Դրսից լսողները զգուշելով նայում էին Սանդրօյին և ասում. «Ուկրալի տղէն ինքը շատ լափելուց խողի պէս ճրագուակալուակ է, հիմի մի մանէթ փող չի տալիս սոված հայերին, որ իրան պէս Լուսաւորչի աւազանումն են մկրտուած»:

Օրիորդներն ամաշելուց դուրս գնացին: Երէցը շարունակեց.

— Սանդրօ, քեզ պէս ջահէլ տղին ամօթ է էդպէս պատասխան տալը, հօ բոլոր կարողութիւնդ չե՛ն ուզում. ինչ որ սրտիցդ տալիս է, էն տուր:

Գաղգեահի վրայ սև փողեր կային. նրանցից մի շահանոց վերցրաւ և շարտելով դէպի երէցը, աւելացրաւ.

— Ամէն մի սովածի ու աղքատի շահի-շահի տալով վերջը մենք էլ ձեզ պէս դռնէ դուռը պէտք է ընկնենք:

Վերջին խօսքերն ասելիս նրա խանութում ոչ որ չէր մնացել, ինքն էր դախլում կանգնած և սև շահանոցը առջևն ընկած:

Այդ կարգում շատ դուքաններ կային, խմբակը վիրաւորուած Սանդրօյի կողիս վարմունքից, կարծես չէր ուզում ոչ մէկի դուռը բանալ ու մտնել. մտադիր էր ուղղակի հարուստ քարտաշի գործարանը գնալ: Այդ ըոպէին կողքի դուքանի դուռը բացուեց, մի միջահասակ մարդ երևաց ու ասաւ.

— Աղաչում եմ, մեզ մօտ շնորհ բերէք, ի՞նչու էք դուանը կանգնում:

Խմբակը անվստահ կերպով ներս մտաւ և տեսաւ մի քանի հոգի նստոտած աթոռների վրայ:

— Սրտով ներս համեցէք, խօսեց խանութպանը. էդպէս սուրբ գործի համար ման եկողը կ'ամաշի: Ես տեսայ, որ հարեան Սանդրօից նեղացաք. հիմի ասացէք, ձեր հոգուն մատաղ, ի՞նչ անեմ որ ձեր քէֆը բացուի: Թէ հայրեկի արևը կը սիրէք, դրուստ ասեցէք, ի՞նչ անուշ կ'անէք:

Խանութպանը տեսաւ, որ խմբակի անդամներից և ոչ մէկը չի յօժարուում խմիչք ընդունել, հրամայեց փոքրաւորին, որ դախլից մի մանէթ բերի:

—Արա՛, ախպերախը, դուք էլ ցնծացէք, դիմեց նստողներին, սրանք ազգի նամուսի համար են մանգալիս, գիտէք: Հարկաւոր է փող, օգնութիւն ուղարկելը, որ մեր խեղճ հայերը սովից չմեռնեն:

Նստողներից ամեն մինը իւր քսակը բացաւ՝ գոհութիւնով տուաւ:

Երբ խմբակը դուրս եկաւ խանութից, օրիորդներից աւագն ասաւ.

—Հազար անգամ Քեզ փա՛ռք, Աստուած, որ Սանդրօներէց ետը այսպիսի պատուական հոգիք էլ ես տուել մեր ազգին, թէ չէ...

Օրիորդն այլ ևս խօսքը չկարողացաւ շարունակել. նրան ընդհատեցին ջրկիրները, որոնք իմանալով բանի էութիւնը, ձին փողոցի մէջտեղ անտէր թողած գալիս՝ կաշուէ քսակից փող էին հանում, գանձապահ օրիորդին տալիս, և Աստծու անունը տալով, երեսները խաշակներելով դառնում ձիու մօտ:

Քեռնակիր մշակը բեռն ուսին կանգնում փող էր հանում, «ահա, էս էլ իմ գանձանակը. Տէր Աստուած, դու օգնութիւն հաս» աղէխարչ ձայնով աղաղակում ու ճանապարհը քրտնքամխած շարունակում: Ժողովարարութիւն անելով խմբակը հասաւ Չաւի գեղի տակը. բաւական համարելով ժողովածը որոշեց այդտեղից վերադառնալ. Լուսաւորչի եկեղեցու բակից այդ մըտքով էլ դուրս եկան: Յանկարծ երէցը դէպի արևելք նայելով մի առաջարկութիւն արաւ.

—Սրանից քիչ հեռու մի շատ հարուստ հայ կայ,

այն երեոզ բոլոր շինութիւնները նրանն է. միայն մի հատիկ որդի ունի, եթէ գնանք նրա մօտ, յոյս ունիմ 10 մանէթ կըտայ:

—Տէր հայր, նորաքիսա հարուստներից արի ձեռ վեր կալ, խօսեց երիտասարդը, մեղք են մեր ոտները, կը գնանք ու փոշմանելով ես կըզանք: Էլի Աստուած կեանք տայ խեղճ աշխատաւորներին, նրանց բուրդը ինքն իւրան պոկ է գալիս. մարգիկը տալու սովոր են:

—Ի՞նչ ես ասում, եղբայր, շատ ճանապարհն եկած ենք, փոքր էլ գնանք, նրա խանութներին կը հասնենք: Օրիորդներ, դուք ի՞նչ կըհաճիք, հարցրաւ երէցը. գնանք, թէ դա՛ռնանք:

—Տէր հայր, մենք դէմ չենք ձեր առաջարկութեան. այսօրուայ մեր շրջագայութիւնը մի կազմուրիչ զբօսանք է, եթէ լիայոյս էք այդ մարդու վրայ, մեծ նեղութիւն չէ, գնանք:

—Այո, այո՛, օրիորդներ, յոյս ունիմ, քարվանսաւրայ, անթիւ շինութիւններ, սեպհական կառքեր ունի. քանի անգամ է խնդրել հրաւիրել իւր մօտ, չեմ գնացել. այժմ կարելի է, ձեզ էլ որ տեսնի, աւելի շատ տայ:

—Տէր հայր, այնքան գովեստներ էք ասում, քիչ է մնում մարդու բերանի ջուրը գնայ. գնանք, տեսնենք էդ ձեր հարստին: Թէ որ արժան չի լինիլ ձեր գովասանքին, այն ժամանակ ես գիտեմ թէ ի՞նչ ներկի կարասը կը քաշեմ, ասաւ երիտասարդն ու միացաւ խմբակին:

Քիչ չէ, որ բաւական ճանապարհ էր մինչև հարուստ Վ-ի դաստակերտ հասնելը: Հասան նրա

խանութներին, մասն ներս. գործակատարն էր գախալի մէջ:

—Ո՞ւր է տէրդ, հարցրաւ վտահ երէցը:

—Մեծն էստեղ չէ, տէր հայր, փոքրն էլ քնած է:

«Փոքր» ասելով ակնարկում էր միակ ժառանգին, որ անկիւնի թախտի վրայ բաց պառկած փըշ-չացնում էր: Երէցն ուղեց գարթեցնել:

Գործակատարը հետաքրքիր աղայ էր երևում. երբ իմացաւ, թէ ինչու են հարցնում տիրոջը, այս խորհուրդը տուաւ.

—Տէր հայր. մեծ խաղէինն այստեղ չի. ափսո՛ս: Տղին վերկացնելը չաժի, եկէք 2 արասի ինձանից ասէք, գնացէք:

Երէցն արժան չհամարեց իսկի, որ գործակատարի խօսքը լսի, գնաց ինքը «փոքր» խողէինին գարթեցրեց. «Չահէլ տղայ է, սրա սիրտը աւելի կը ցաւի սովեալների համար», ասաւ երէցը:

Քնածն աչքերը ձմրուելով նստեց, տեսաւ ազգքին քահանայ է կանգնած, աչքերը նորից հաղաղեց ու հարցրաւ.

—Չը՞, ինչ կայ, տէրաէր. ինչ էք ուզում, հայրս էստեղ չի, գիտեմ ձեր գործը հօրս հետ կըլինի:

—Վերկաց Գ..., էսօրուայ գործը դու էլ կարող ես լսել ու կատարել: Արի էս կողմը: Երէցն սկսաւ սովի պատմութիւնը սրտամորմոք եղանակով. օրիորդները դուքսը երկար նստարանի վրայ շարուած նայում էին երկար ու ձիգ շինութիւններին, որոնք պատկանում էին այդ քնող երիտասարդին իբրև միակ ժառանգի: Երէցի յորդորները լսելուց ետը «փոքր խողէինը» աւելացրաւ.

—Տէր հայր, լաւ բան ես հրամայում, բայց որ հայրս այստեղ չի, ինչպէս անեմ. առանց նրան կարող եմ բան բռնել:

—Կարելի է հայրդ մինչև իրիկու չի գալիս, մենք հօ չենք կարող սպասել, ասաւ երէցը, Գ... ամօթ է, էն օրիորդներն էնտեղ նստած սպասում են, ինչ որ սրտիցդ բղխում է, տուր, մեկ ճանապարհ դիր, հայրըդ աւելի շնորհակալ կըլինի, երբ իմանայ թէ այդպիսի գործի համար փող ես տուել:

—Տէր հայր, ես ասում եմ, որ առանց իմ հօր իրաւունք չունիմ, դուք ստիպում էք: Ե՛մ իմանում իմ հօր բնաւորութիւնը: Ետով դառնալով գործակատարին ասաւ.

—Քեր էդտեղից 6 շահի տուր:

Գործակատարը հնազանդութիւնով կատարեց պատուէրը և հեզնական ժպիտով նայեց երէցին. կարծես ասում էր—այ տէրտէր, ես որ ասում էի մի վերկացնիլ: Երէցը 6 շահու ձայնը որ լսեց, գոյն տուաւ, գոյն առաւ. ամօթից շէր կարողանում իւր ուղեկից երիտասարդի երեսին նայել, որ շտապով շուռ եկաւ ու օրիորդների մօտ գնաց:

Ինչ երկարացնեմ բանը. երէցը իւր բոլոր ձարտարախօսութիւնը թափեց և շկարողացաւ նպաստը 30 կողէկից աւելացնել: Կէս ժամ ժամանակ էր կորել գրողի տարած հարստի պատճառով. այդ էր ծանրը թվում երէցին. ուստի խանութից դուրս գալիս կէս սպառնական ձևով ասաւ.

—Ես ձեր տեղը՝ կըտամ ինչ որ ձեր անուան արժան է, նրանից ետը գուր գիտէք ձեր մարդութիւնը:

Խմբակի միւս անդամները բաւականացան 30 կողպէկով, թոյլ շտուկին որ երէցը իւր հարուստ ծխի փոխարէն տուգանք քաշի:

Խմբակի տրամադրութիւնը դարձեալ գէշացաւ, եկած ճանապարհը շատ երկար էր թփում: Նոր էին Լուսաւորիչ եկեղեցու դէմը հասել, տեսան սրընթաց կառքով երեք հոգի են գնում. նրանցից մէկը քարվանսարանների տէրն էր, կամ «անպիտան ժառանգի» հայրը: Սա երէցին գտակով ողջունեց, բայց իսկի չկանգնացրաւ կառքը, որքան էլ քահանան նրան ձեռով նշան արաւ:

Խմբակը մտախոհ և լուռ քաղաքն էր մանում նոյն փողոցի վերի խանութների առաջով: Ահա մի փոքր կրպակ, մէջը գրեթէ դարդակ, այս ու այն տախտակի վրայ փոքր ստպրակներով, խունացած արկղիկներով մանրունք դարստատած. տակ ու գլուխ որ հաւաքես, մի երկու ուրբու ապրանք չի լինի: Տէրը մի նիհար երիտաճարդ, կիսամաշ վերարկու ուսերին, դախլի մէջ նստած օրուայ լրագիրն է կարգում:

— Տէր-հայր, խօսեց խմբի երիտասարդը, դուք ձեր հարստին գովելով դուզս տարաք և ոչինչ ստացար, համեցէք, փորձենք այս աղքատ խանութպանին, տեսէք «ձեր հարստից» շատ կըտայ թէ չէ:

— Այ եղբայր, թարկը տուր, գնանք, խեղճը ո՞վ գիտէ ուտելու ցամաք հաց շունի, մենք էլ մի կողմից ցաւը սաստկացնենք, ինչ խղճմտանք է:

— Գու չես դիմիլ, վրայ բերաւ երիտասարդը, ես կը մօտենամ, անհոգ կաց, ես ձեռս կտրեմ, թէ այն անթիւ խանութների ու տների տիրոջից շատ շտայ:

Ասաւ ու մօտեցաւ: Ողջոյններ փոխանակեցին.

— է՛, ինչ նորութիւն կայ այսօրուայ համարում, հարցրաւ երիտասարդը:

— Տխուր, սրտաճմլիկ լուրեր, պատասխանեց խանութպանը տխուր ձայնով: 4000—5000 ընտանիք լցուել են Կարսի նահանգը, ոչ ուտելու հաց ունին, ոչ օթեան. անհաց, անտուն մնացել են բաց երկնքի տակ: Այժմ Մարտ ամիսն է. իսկ գիտէք Կարսի կողմերում այս բոպէիս ինչ սոսկալի ցրտեր են լինում:

Երիտասարդը համակրութիւնով նայեց համեստ խանութպանին, միւս անդամները եկել էին մօտիկ. խօսակցութիւնը նրանց էլ լսելի էր: Խանութպանն աւելացրաւ, — լրագրում ապոււած է, որ ժողովարարութիւն է լինում սովեակների օգտին, ես էլ կուզէի մասնակցել. խմբազրատուն ուղարկել ամաշում եմ, որովհետեւ նպաստս թումաններով չպէտք է լինի, ժողովող խմբերից մէկը գոնէ այս կողմ չի անցնում, որ նրան յանձնեմ տուրքս:

— Այ օրհնեալ լինիս դու էլ, քո ծնունդն էլ, վրայ բերաւ երէցը. Աստուած քո մէկը հազար անի. քեզպէս սրտացաւ երիտասարդներն էլ մեր ազգից անպակաս անի: Այս թաղը մեզ է յանձնուած, թէ այդպէս բան ունիս մտքումդ, օրհնեալ լինիս, մեզ տուր. ժողովարարութիւնը վերջացրած համարելով գնում էինք, ինչ լաւ էր, քեզ պատահեցինք:

Խանութպանը հանեց երկու թուղթ փող տուաւ: Երէցը հիացած երեսով բացականչեց. «Տէր Աստուած, դու սրա սրտով իրա խանութը լցնես»:

Խմբակը դուարթացած այդ կրպակի մօտից հեռացաւ: Հէնց ուզումէր կողքի ալափի դուքանի դռնով

անցնել, լսեց ներսը ճաշողների բերանից հետևեալ մաղթանքները: Մէկն ասում էր.

—Տէր Աստուծ, դու միր խիղճ ազգին քու մտեմէն չզցցիս: Միւսը թէ՛

—Աստուծ ջան, դու մեր Հայրիկին վուզղ պահիս, իս նրա շարը տանիմ:

Երրորդն էլ բաժակը շխկացնելով առաջարկեց.

—Մխարտինք, մինք կերանք, լիացանք, էս էլ խնդրենք Աստուծեմէն, ինչ տիղ տարեկուսած մարդիք կան, նրանց օգնութիւն հասնի. դիւի լիս միղ պէս տուն ու տիղ շունին աշխրբում, դիւփունանց ջանը խօ միղ պէս սաղ չի:

—Ի՞նչ լօթի, դարդիմանդ տղէք իք, ձեր հոգուն մատաղ, ներս մանելով խօսեց խմբի երիտասարդը գուարթ ձայնով. էր ուրախարարից մի ստաքան էլ ինձ տուէք, թէ ախպէր էք: Ձեր խմած կենացները հոգումս նստեցին, տարեկուսած ընկերին օգնելը էդպէս քաղցր բան է էլի:

—Բան, վճնց գիտիս, անճանանչ ախպէր, պատասխանեցին միաբերան ներս եկող երիտասարդին ու շորսն էլ իւրանց բաժակները լցնելով համեցէք արին:

Մի բաժակ վերցնելով ինքնակոչ երիտասարդը, ուրախասիրտ հարցրաւ նրանց.

—Խեղճ ննգերի կունեմէն բունիլ, վիքաշիլը լաւ է, գաննա:

—Բան, քու հոքուն մատաղ, ասին միաբերան, դրա համա չինք ապրում էս աշխրբի վրայ:

—Եփ որ էգպէս սրտի տէր էք, անծանօթ տեղովս խմում եմ ձեր կամպանիի կենացը, ասաւ խրմ-

բակին պատկանող երիտասարդը ու մի ակնարկով երէցին ներս հրաւիրեց: Քահանային տեսնելով ալափները տեղներից վեր կացան բոլորն էլ գտակները վերցրին ու անուշ «օրհնեա տէր» ասին:

—Տէր Հայր, այսօր ինչի ենք շրջում, հարցրաւ երիտասարդը:

—Սովեալների համար փող ժողովելու, պատասխանեց երէցը:

—Ո՞վքեր են այդ սովեալները, խօսիր, հասկացրու այս պատուական հոգիներին, առաջարկեց երիտասարդը:

—Մեզ հետ մի աւազանում մկրտուած հայ քրիստոնեաներ են, որոնց ձեռից քրդերն ու թուրքերը ամեն բան խլել են, իրանց գուրս խուկել անուշ հող ու ջրից:

Այսքանը լսելով ալափները, էլ միջոց չ'տուին, որ երիտասարդն ու երէցը հարց ու պատասխանը շարունակեն, իւրար երեսի նայելով հանեցին զըրպաններից քիսաները, սպիտակ ու թուղթ փող խառն ածին երէցի բուռը:

—Համեցէք, ստացէք մեր բաժինը, տէրտէր ջան, թէ քիչ է, էլի տանք. վճնց թէ հայերին իրանց երգրեմէն, քաղցր վաթանեմէն դուրս ին արել, ձների երեսը գցել. սո՛հ անօրէն քրդեր, ասին մեր բարեսիրտ լօթիքը գլխները թափահարելով:

—Հանաթ չի, Սոսիկօ, ալափներից մէկն ասաւ կողքինին, վունցոր էրեւում է միր ազգի ապաշխարանքի վիրջն է. Ֆալսազը մէ դուռը բաց կօնէ. շան ու գէլի ձեռին համեշա չի թողի:

—Չան ու գէլին վուր իրանց քէֆի թողնին, շատ

գառններ փարշափարայ կօնին, մարդ պիտի ջահտ ա-
նէ, նրանց ատամները փշրտէ, վուր չկանենան կծի:

— Էդ լաւ իս հրամայում, բայց ամեն բան իր վուրսն
ունի, վրայ բերաւ երբորդ ալափը, ջէր էսօր օգնինք.
վուր քաղցածները չը կոտորուին. վիրշն էլ. Աստուծ
օղորմած է, կամ մէտի կու ապրինք կամ մէտի կու
մեռնինք: Չիս լսել վուր թուրքն ասիլ է. «էլինան
գարա գուն բայրամ դուր»*):

Խմբակը շնորհակալութիւն անելով դուրս եկաւ
ալափի դուքանից: Օրը մթնելու վրայ էր, դեռ նը-
րանք անօթի էին, բայց պէտք էր տեսնել այդ ըոպէին,
թէ ինչպէս գուարթ քայլեր էին փոխում օրիորդ-
ները յոգնեցուցիչ պտոյտից ետը:

Հասան գանձապահ օրիորդանց տուն. սիրալիր
կերպով նրա բազմափորձ ու բարեհամբոյր պառաւ
մայրը դիմաւորեց խմբակին ու ասաւ.

— Բնա դուք հաց ուտիլ չէք ուզի՞, որդիք, օրը
մթնեց, դեռ դուք ոտի վրայ ման էք գալիս:

Երէցն ու երիտասարդը ուրախ-ուրախ դահլիճ
մտան, որ մի երկու ըոպէ սպասելով գանձապահ օրի-
որդից ժողովարարութեան արդիւնքն իմանան ու
գնան: Օրիորդը թաշկիւնակը ձեռին միւս սենեակից
դահլիճ մտաւ և ցնծասիրտ մօտենալով մեծ կլոր
սեղանին, խնդադէմ յայտարարեց:

— Կեցցէ ժողովուրդը. այն անաւատ հոգիքը, ո-
րոնց ես պատահեցի այսօր, արժան են ամենի կող-
մից խորին յարգանքի և համակրանքի. չհաշուած մի

*) Հասարակութիւնով քաշած սև օրը Զատիկ հա-
ւասար է:

երկու ապականուած Սանդրօներ, մնացած բոլորն
էլ դուտ ոսկի են հողի ու ցեխի հետ խառնուած:
Հարկաւոր է հողն ու ցեխը հեռացնել և նրանք կը
փայլեն աղամանտի պէս:

— Ո՛րդի, դու անճաշ ո՞նց դիմացար, դարձաւ պա-
ռաւր ժպտալով իւր դասերը. դու հիւանդ դըմին
ինչպէս պտտեցիր էսքան ժամանակ առանց կերակրի:

— Մայրիկ, խօսեց դուստրը, կեանքումս շատ ճա-
շեր եմ կերել, բայց այս օրուայ պէս սիրտս չի ու-
րախացել:

— Ի՞նչն էր քեզ անհաց ուրախացնողը, սրդի:

— Ժողովրդի վարմունքը, մայրիկ, նրա անկեղծ
խօսքը, կարեկցութիւնը դէպի Գարսի սովեալները:

Պառաւր մի ըոպէ լուս նայեց դասեր ուրախ
աչքերին. մայրական այդ հայեացքի մէջ ամէն բան
կար, և՛ գորով, և՛ անուշութիւն և՛ հիացումն:

— Ժողովրդի վարմունքը քեզ էդպէս ուրախացրել
է, սրդի, խօսեց հիասքանչ մայրը:

— Այո՛, մայր, պատասխանեց օրիորդը և կուացաւ դէ-
պի սեղանը, որպէսզի մետաղէ դրամների միջից թղթե-
րը ջոկի ու համարի: Միւս անգամները բազկաթու-
ների վրայ նստած նայում էին՝ որը պատի վրայի պատ-
կերներին, որը բաց դաշնամուրի ճերմակ ստեղինե-
րին: Ետևի դուռը մեզմ բացուեց, պառաւր ձեռը կըրծ-
քին դրած դուրս եկաւ, մօտեցաւ երէցին ու խօսեց.

— Տէր-հայր, իմ աղջիկը չըջել է փողոցէ փողոց,
սովեալների համար փող հաւաքել, դրանով իրան
բաղձաւոր և ուրախ է համարում, որովհետև իւր պարտ-
քը կատարել է, էս էլ իմ մասը, թող ես էլ բաժին
ունենամ էդ վարձքի մէջ:

Տուաւ հինգ ռուբլի և սիրալիւր առաջարկեց.
— Համեցէք, խնդրում եմ, ճաշը պատրաստ է:

Խմբակի անդամները հետեցին քաղցր պառա-
ւին ու մեծ ակտորժակով վայելեցին պասեղէն կերա-
կուրները, որովհետև ժողովարարութեան արդիւնքը
սպասածից անց էր:

Ս Ե Ի Օ Ր Ե Ր Ի Յ Մ Ի Ն Ը

(Նուէր պարտաճանաչ երեցնելիւ)

«Սար ըլեր՝ փուլ կը դար, ծով
ըլեր՝ կը ցամաքէր, երկաթ ըլեր՝
կը հալէր»...

Վէրը Հայաստանի:

Հայոց 1053 թուին հայ աշխարհը օսմանցոց
ու պարսից պատերազմները՝ երեսից հասել էր սո-
վի դուռը: Ոսնակոխ ու հարստահարուած հայ ժո-
ղովուրդը թողել էր տուն ու օթեան, հայրենի ջրից
ու հողից ցիր ու ցան եղել, փուռել էր ողջ երկրա-
գնդի երեսով: Մի մասը հասել էր Կիպրոս, մի ճո-
թը Կ. Պօլիս ու նրա շրջակայ քաղաքները: Աւելի
ահակալած հայերը գլուխներն առել, փախել էին
Ռումէլիա, Իլախների երկիրը, Եաֆա կղզին, Պոնտո-
սի հեռաւոր եզրները:

Փոթորկից խրկուած տերևների պէս այդ աս-
տանդական հայերից՝ սրը թոշ առաւ, կանգնեց
Ատրպատականում, սրը Երևանի նահանգում, սրը
Գանձակում, սրը Թաւրիզում, սրը Արդաբիլումն ու
նրա կողքի գաւառներում:

Պարսից Խուղարանդ շահը մի պատուհաս որդի

էր թողել աշխարհում, անունը Աբբաս: Այս Աբբասն էր, որ մի տարուց առաջ քար ու քանդ էր արել հայոց բարեչէն աշխարհի գեղերն ու քաղաքները, և հրով ու սրով մղանելով, քշելով բոլոր բնակիչներին, թափել էր իւր աշխարհի ամայի անկիւնները:

Այս շահը գիշատիչ բաղէի նման սուր աչքը ձգեց ու տեսաւ Ատրպատականում մոլորուած ոչխարի պէս կիտուած հայերին, կտակածի եկաւ, որ չլինի թէ նրանք ծածուկ ետ փախչեն դէպ իւրանց աշխարհը ու նորից այնտեղ բնակութիւն հաստատեն, իսկոյն մտքումը վճռեց ու զարհուրելի կոխնշով հրամայեց, որ փայտով, մտրակով հայերին քշել դէպի Պարսկաստանի խորքը:

Հրամանը անյապաղ կատարուեց:

Հայերի մի մասին ածին Փահրատարաղ, որ այնտեղ շէնացնեն, մարդահոտ դցեն, իսկ մնացածներին ջարդելով հալածելով տարան բնակեցրին Ասպահան քաղաքում ու նրա շրջակայքում:

Հայ մարդը շատ էլ չէր ուզում իւր հող ու ջրից հեռանալ, օտար երկնքի տակ ապրել, բայց սով էր նրա կամքը հարցնում կամ նրա խօսքը շուանի դնում: Մի անգամ նրա քարը ծովն էր ընկել, նրա բաժնի մէջ հող լցուել, և այդ բոլորը իւր կարճամտութեան, անհեռատեսութեան շնորքով: Քար էլ որ բարձէին, պէտք է կրէր, մինչև ապաշխարութեան օրերը լրացնէր ու խելքի գար:

Աբբաս շահի միտքն այն էր, որ ճոխ և արգաւանդ հայաստանի գաւառները բրիչակ անի, քանդի ու նրանց բնակիչներով, բարիքներով իւր ամայի աշխարհը լցնի, բարեկրթի. էլ ինչ նրա փոյթն էր,

թէ հայերը տեղահան և տնահան լինելիս կը լան, կարտասուէին: Նա մի անգամի տեղ եօթ-ութ անգամ մեծ-մեծ խմբերով սուրգուն արաւ և քշել տալով տարաւ իւր կիսավայրենի աշխարհը:

Ասպահան քաղաքը բերած հայերի բնակութեան համար որոշեցին Փուլթկա անունով տեղը, որին հալածական ժողովուրդը անուանեց «Գէջ - գիւն», այսինքն «անց կաց, օր»:

Խուճուած ժողովուրդները առանձին գեղերի և թաղերի բնակիչներ էին և ջոկ-ջոկ բերուած. դրա համար էլ առանձին համայնքներ էին կազմում:

Համայնքի մինի գլխաւոր կամ պետ նշանակուած էր Մուրազ մելիքը, որին փուտ անուճով կանչում էին Ղրրխ-եալան մելիք. միւսինը՝ Յովսէփ մելիքը, որի փուտ անունն էր Ղարաքաշ մելիք:

Ասպահան օտ զնող հայերը, բացի ջուղայեցիներից ու երևանցիներից, ամենն էլ տնանկացան: Ժողովրդով բերանէ բերան լցուեց, քաղաքում անասելի կերպով թանգացաւ թէ ուտելիքը և թէ հագնելիքը: Ամեն վաճառք պարոսիկների ձեռին էր, որոնք ուզում էին հայ գաղթականին տկոբել, ամեն միջոցից զրկել, որ նա ընկճուի, խեղճանայ:

Պարզամիտ հայ երկրագործը պանդխտութեան մէջ առանց վարի, առանց ցանքի ինչ անէր, որ չադքատանար: Չարաթներն անցնում էին՝ ամիսներ դառնում, սոված փորը հայ էր ուզում, բաց մարմինը շոր, տկոբ ու սոված հօ չէին կարող մնալ. ստիպուած էին ծանր և թանգ գներով ձեռ բերել ամենահասարակ մթերքները: Ինչ ունէին՝ չունէին, զարդ թէ զարդարանք ծախձը խեցին, կերան ու մը-

նացին ձեռները ծոցումը ետին չքաւորութեան մէջ: Որոշ, հաստատ բնակութեան տեղ չէին տուել դեռ, քաղաքացի թէ գեղացի՝ ամենն էլ խառն ի խուռն թափուած էին:

Ամենից շատ ուժից ընկան, աղքատութեան դուռը հասան Ղըրխ-եալան և Ղարաբաշ մելիքների համայնքները: Երկրագործ մարդիկ էին, չէին ցանկել, որ հնձեն, կառավարուեն, չորու փող էլ չունէին, որ հարկաւորութիւնները հոգան:

Սովը եկաւ բկներից կախ եղաւ: ձարները կրտարած ձեռներն ածում էին ամեն կողմ. ամեն մի պատահողի իւրանց ցաւը այսպէս լալիս. «սե լինէր այն օրը, որ մեր աշխարհից օտարութիւն ընկանք, ինչէ՛ւ այնտեղ մեր հողի ու ջրի վրայ չունչներս չէինք փչում»:

Աբբաս շահը հայերի վրայ նշանակած իշխաններ ունէր, որ անձամբ կամ ուրիշների միջոցով լըրտեսում էին, իմանում նրանց խորհուրդները, արած խօսակցութիւններն ու բռնած գործերը: Ապահով լինելու համար շահը հսկել էր տալիս, չլինի թէ հայերը ծածուկ խօսք մին անեն ու յանկարծ Ասպահան քաղաքից դուրս գան, փախչեն դէպի Ատրպատական աշխարհը կամ ուրիշ կողմի վրայ:

Սովալուկ համայնքից շատերն աղաչանքով դիմեցին պարսիկ վերակացու իշխաններին, նրանց դիտուորներին, մէկ մէկ յայտնելով իւրանց ցաւը, աղաչեցին, որ իւրանց չքաւորութեան մասին շահին իմաց անեն, մի օգնութիւն տայ ապրուստի համար:

Աղա-Չաղաբը, որ աւագ վերակացուն էր, իմացաւ հայերի թախանձանքը, բայց բանի տեղ չդրաւ,

սովասանջ հայերն էլ չդադարեցին, դիմեցին կրտսեր վերակացուն, որի անունը Ուզուրու բէկ էր, և ոտներն ընկնելով իւրանց խնդիրը կրկնեցին: Սա չհակառակուեց աւագ վերակացուի պէս, մեղքացաւ ու գնաց շահին յայտնեց հայերի դրութիւնն ու խնդիրը:

Չայ գաղթականների դառն վիճակի նկարագիրը լսելիս շահը գլուխը շարժեց: Նրա սրտում մի խորհուրդ էր ծնել. դիւական խնդութիւնով երեսը մէկէն պայծառացաւ ու հրաման տուաւ Ուզուրու բէկին, որ համայնքների մելիքներին, երեւելի անձերին կանչի իւր պալատի դուռը:

Վերակացուն մարդիկ ուղարկեց, բոլոր նշանաւոր հայերն իսկոյն խմբով ներկայացան շահին և խոր գլուխ տուին:

Չահը դէմքը սուտ տխրեցնելով խօսեց հետեւեալը իրբև մխիթարանք.

— Ես լսել եմ, որ չքաւորութեան մէջ էք ընկել. ուղիղ ասած, սիրտս շատ ցաւեց: Մէկ էլ յայտնեցին, որ դուք չէք կարողանում կառավարուել, ինձանից, իբրև ձեր ողորմած թագաւորից, օգնութիւն էք ուզում: Ուրախութիւնով կընդունեմ ձեր խնդիրը, միամիտ մնացէք և կը հրամայեմ, որ ձեր ուղածները սան՝ փող լինի թէ այլ պիտոյքներ: Բոլոր ձեր հոգսը թագաւորական գանձարանը կը քաշի, որ դուք ապրէք ու ձեր ընտանիքները ապրեցնէք: Ես ձեր հայրն եմ, դուք իմ որդիքն էք:

Քիչ լռելուց ետը շարունակեց.

— Բայց այս անցաւոր աշխարհի կարգը նորանով է վատ, որ առանց պայմանի հայր ու որդին էլ չեն կառավարում. միշտ մի պայման նրանց մէջ լի-

նում է: Չնեղանաք, ես էլ պայման եմ առաջարկելու ձեզ, բայց շատ հեշտ պայման: Օրինակի համար, ես հրամայելու եմ—ինչ որ ձեզ հարկաւոր է—երեք տարի ժամանակով փոխ տան. լսում էք. երեք տարին անցնելուց ետք ստացածը պէտք է վերադարձնէք:

Միամիտ հայերը շահի բերանից «փոխ», «վերադարձնել» բառերը լսելիս կասես թէ դիւահարուեցին: Նրանք կարծել էին թէ ինչ որ շահը տայ, ողորմութիւն պէտք է համարի կամ իւրանց քաշած զրկանքների փոխարէնը: Բայց նրանք այնպէս անձար տեղն էին, որ առանց տրտունջի շատ բեռը կը վերցնէին: Զարունակեցին առանց ծպտուն հանելու նախկին հլութիւնով շահին լսելը:

Չահը շարունակեց խօսքը.

—Այդ փողը, որ իմ հրամանով ձեզ տալու են գանձարանից, ոչ շահ կունենայ, ոչ վերադիր: Ձեզանից ստացած շահը ինչիւն է պէտք, նրանով հարստանալու հօ չեմ: Իմ սրտի փափագը և օգնելու նպատակն այն է, որ դուք այն փողով առուտուր անէք, օգուտ տեսնէք:

—Ո՞րք մնայ շահը, հաստատ լինի նրա գահը, բացականչեցին ունկընդիր հայերը:

—Փողը անշահ տալու միտքս այն է, որ առանց նեղութիւն քաշելու առուտուր անէք, գործ շարունակէք, բայց հէնց որ երեք տարի միջոցը լրանայ, փողի գլուխը բերէք, ետ տաք: Դա թագաւորական գանձ է, կորուստն անկարելի բան է, մի սև փողն ինչ է, այն էլ չի կարելի պակսեցնել: Երբ որ ժամանակին փողը կը վերադարձնէք, ես թուղթ կը տամ, որ պարտքից ազատ էք:

—Կը բերենք, երեք տարուց ետը փողի գլուխը կը բերենք, վրայ բերին հայ երեւելիները, հաստատ մննայ ողորմած շահի գահը:

—Լսեցէք ուրեմն, խօսեց շահը, հրամայում եմ գանձապետին, որ ինչքան փող հարկաւոր լինի ձեզ՝ տայ: Դուք մեղքներդ ու երեւելի հայերդ ստացած գումարի համար ստորագրութիւն կը տաք նրան ու փողն ստանալով կը տանէք ձեր համայնքի անդամներին կը բաժնէք՝ որին ինչքան կուզէք:

«Ստորագրութիւն» խօսքի վրայ մի խուլ քըրթմնջիւն, դժգոհութիւն ընկաւ ունկընդիր հայերի մէջ:

Երևում էր, որ նրանք դժուարանում էին ամբողջ համայնքների փոխանակ պատասխանատուութիւն յանձն առնել: Մինն ասում էր. «Ձեռ քաշեմ ժողովըդի տեղ ու փողը բաժանեմ, որ տանեն, ուտեն ու ետ չամն. ետով թագաւորի պատասխանը ո՞նց տամ»: Միւսն էլ յանդիմանում էր. «Ինչո՞ւ հիմիկուց չկամութեան հոգին բերում էք մէջ խառնում: Դուք որ ժողովըդի տեղ գլուխներդ գրաւ էք դնում ու նրանց փող բաժանում, ինչ է—կառավարուին, սովից չմեռնին, բն նրանք այնքան անասուն են, որ ձեր լաւութիւնըն ուրանան ու թագաւորի մօտ ամօթով թողնեն: Սրի ու կրակի միջից անցկացած հայ մարդը այդպէս բան չի անիլ, ես հաւատում եմ, որ նա որդին կը ծախի ու սևերես չի մնալ պարաքաթիրոջ մօտ»:

Չահը նրանց խօսք ու զրոյցի բովանդակութիւնը չէր հասկանում, պարսիկ իշխանի միջոցով տեղեկացաւ ու նախկին լրջութիւնով շարունակեց.

—Գանձարանից տարած փողը կը բաժանէք ու ստացողի անունը կը գրէք: Ով որ երեք տարուց ետք

կըքերի, կըվերադարձնի, ազատ կըհամարուի, իսկ նա՛ որ անշահ ստացած փողը չի վերադարձնիլ, անշնորքի պէս կուտի, կը վատնի, այդպիսի հայը անպատճառ պէտք է պատժուի: Նրա պատիժը գիտէք ինչ կըլինի:

— Զահր ողջ լինի. ինչ ուզում ես, թո՛ղ լինի, գոչեցին հայ երեւելիները:

— Այդպիսի մարդը պէտք է իւր հաւատը թողնի և մեր սուրբ օրէնքն ընդունի, վրայ բերաւ Աբրաա շահր:

Այս խօսքի վրայ հայերը քթները կախ արին. իսկի այդպիսի պայման կամ առարկութիւն չէին սպասում թագաւորից: Ունքները քաշ արած, կողքանց աս ու դողով սկսան իւրար վրայ նայիլ:

— Զահր աչքը սրատես էր, նկատեց իւր առաջարկած պայմանի խիստ տաւառութեւնը և մեղմացնելու նպատակով աւելացրաւ.

— Ինքս չեմ ուզիլ, որ սիրելի որդիներիցս մինը իւր հաւատը թողնի. բայց այն էլ լաւ չի, որ թագաւորական գանձը անդարձ կորչի: Ուրիշ պայման կառաջարկեմ, որ կարծեմ ձեռնառու կը լինի ամենքիդ: Իմ առւած փողը հօ բոլորդ չէք վատնելու: շատ շատ մի քանի հոգի: Թողէք պայմանի մէջ գրուի, որ ով ստացած փողը չկարողանայ վերադարձնել, նա իւր աղջիկը կամ տղան թագաւորին տայ, որ պալատում մշտական ծառայութիւն անի: Այս պայմանին ինչ կասէք: Համաձայն էք: Եթէ՛ այն, իսկոյն հրամայեմ, որ փողը տան, եթէ՛ չէ, գնացէք ձեր շքաւորութեան մէջ տապակուելով մեռէք: Մեծամիտների վերջն այդ է:

Զահր այս յանդիմանախառն առաջարկին չհա-

մարձակեցին ընդդիմախօսել ոչ մեղքները և ոչ միւս հայերը:

Թագաւորի ոտը տեղ բռնեց, նրանց լուսթիւնից գուշակեց, որ իւր առաջարկն ընդունելու է. շարունակեց խօսքը.

— Ես չառ լաւ գիտեմ, որ դուք փող ուտելու ոչ միտք ունիք և ոչ շնորհք: Որովհետեւ անշահ է, հաւատացած եմ, որ հեշտութիւնով փողի գլուխը վերադարձնելու կաշխատէք, էլ ինչ կը թողէք, որ ձեր որդիքը կամ աղջկէքը թագաւորի պալատում ծառայ մնան: Բայց գիտէք նախնեաց դրոյցը, թէ մինչև չարը չխօսենք, բարին վրայ չի գալ: Եկէք մի բան ասեմ. երբ որ պայմանաթղթի մէջ «խօսքի համար» մտցնում էք աղջկայ ու տղի անունը, որ փողի տեղ ներկայացնէք թագաւորին, աւելորդ չի լինիլ որ հիմիկուց «ձևի համար» գին կտրենք, թէ մի հոգին ինչ է աժենալու:

Այս առաջարկի դէմ զանազան կարծիքներ յայտնեցին հայերը. բայց կրկին վախելով և իւրանց մէջ միայն շնջարով: Մինն ասաւ. իմ որդու գինը հողար թուման է, միւսը թէ՛ իմ տղէս աշխարհի հետ չեմ փոխիլ. երբորդն էլ թէ՛ իմ զաւակն անգին է:

Երկար այդպէս փոփոսում էին, բայց ոչ մինը չէր համարձակում իւր սրտինը բարձրաձայն ասել: Տատանում, տարուբերվում էին՝ որ անկարծ շահր դարձաւ նրանց.

— Լսեցէք. եթէ մէկի առաջարկելու լինին, որ իւր որդին ծախի, ինչ ասել կուզի, որ նա կըմտորուի, չի իմանալ՝ ինչ գին ասի: Զեղ չեմ մեղադրում, որ հիմի սիրտ չէք անում ձեր որդկերանց

փողով գին կտրել: Բայց ես «ձևի համար» որոշում եմ շատ թեթև գին. ամեն մի տղայի արժէքը չորս թումանն *), իսկ աղջկանը երեք թումանն: Զաւակ ունեցող մարդուն միայն կը բաժանէք, եթէ ստացած գումարը որոշեալ միջոցից ետը չի վերադարձնիլ, թող տղան կամ աղջիկը տայ թագաւորին:

Քիչ լուռ նայելուց ետը վրայ բերաւ.

— Դէ, կարծեմ ասածս հասկացաք ու ընդունում էք. երևում է որ ձեր օգուտը հասկացող մարդիկ էք. այժմ ասէք. ինչքան փող էք ուզում, մի հարիւր, երկու հարիւր, թէ երեք հարիւր:

— Զահր սղ մնայ, թող չորս հարիւր լինի, լսուեցին մի քանի ձայներ, ժողովուրդը շատ է, գումարն այնքան լինի, որ ստացողի աչքը բան տեսնի:

— Լաւ, խօսեց շահր, թող չորս հարիւր լինի: Գնա՛, գանձապետ, ինչպէս պայմաններ որոշեցինք, այնպէս թնղթ առ ու փողը սուր:

Զահր այս խօսքերի վրայ հայերը խոր գլուխ տուին ու խնդալով ցրուեցին թաղերը և ամբողջ համայնքին հաղորդեցին թագաւորի նենգաւոր առաջարկները: Սովն ու կարիքը յաղթել էին զգաստութեանը, մեծ ու փոքր փողի անունը լսելուն պէս իւրար պիտով անցան, պայմաններն ընդունեցին ու մեղքներին շտապեցրին, որ գնան, փողը բերեն, բաժանեն:

Էլ վեր ու դիր չէին անում այն պայմանները, որոնցով յօժարւում էր թագաւորը փող տալ: Ժողովրդի քիչ մասն էր միայն հակառակ շահից փող վեր-

*) Պարսից թումանը 3 ուրլի է:

ցնելուն. սրանց մէջն էր մի փորձառու երէց, Բաղդասար անունով:

— Խելքի եկէք, այ տխմար որդիք, ասում էր նա, այդ փողը, որ թագաւորի գանձարանից ստանում էք, ճանճի մեղր չէ, որ ծծէք ու ապրէք. դա օձի մահաբեր թոյն է, ձեզ պէտք է կորուստ տանի: Զգոյշ եղէք, թագաւորի աչքերը ձեզ համար ցաւելուց չեն ուռել, որ կարեկցութիւնից զրդուած այդքան գումար փոխ տայ, այն էլ առանց տոկոսի. գանձի դրամները օձի մահաուիթ փուշ ու քստեր են, ապագայում ձեր մարմինը պէտք է ծակծկեն:

Անխոհեմների թիւը շատ էր, շտեցին երէցի այդ զգուշացնող ձայնին:

Ղարաբաշ մեղիքը իւր համայնքի համար գանձարանից վերցրաւ երեք հարիւր թուման և բաժանեց ընտանիքներին՝ անդամների թուի համեմատ:

Միւս համայնքի պետը՝ Ղըրխ-եալան մեղիքը միայն հարիւր թուման վերցրաւ. Տէր-Բաղդասարը այդ ժողովրդի հովին էր, այդչափ վերցնելուն էլ հակառակ էր:

Այս բանը որ պատահեց՝ ուղիղ հայոց 1059 թ. էր: Սովի բերան ընկած պարզամիտ ժողովուրդը ուրախացաւ և փողն ստանալու օրը ցնծումով և խնդումով հանդիսաւոր տօն կատարեց:

Ասած է՝ զգալի շուռ տուր, մէկ էլ կը տեսնես տարին բոլորուած: Երեք տարին այնպէս շուռ մթնեց, որ իւրանք հայերն էլ չիմացան, թէ ինչպէս վրայ հասաւ 1062 թ., պարտքի վճարման միջոցը:

Չահն իւր լրտեսների միջոցով տեղեկութիւններ էր հաւաքել երեք ամիսը մի անգամ; նա լաւ գիտէր, թէ հայերը ինչ են բերել իւրանից ստացած փողի գլխին: Ականջը կախ արած համբերեց մինչև մի քանի ամիս էլ աւելի անցաւ, ետով կանչեց Աղա-
չահար և Ուղուրլու բէկ վերակացուներին ու յանդի-
մանելով ասաւ.

— Ի՞նչ տեսակ էք ձեր պարտականութիւնը կա-
տարում, մի՞թէ մոռացել էք, որ հայերի վերցրած
փողի ժամանակը վաղուց լրացել է: Նրանք խորա-
մանկ աղուէսի պէս քուն են մտել, իբր ոչինչ չկայ:
Յիշեցնելու են սպասում, ախ, անամօթներ. նրանց
ցոյց կը տամ մոռացկոտութիւնը: Իսկոյն եեթ կան-
չեցէք մեկիքներին ու երեկիներին և պահանջեցէք
տուած գումարը:

Վերակացու իշխանները շատ վշտացան շահից
նախատինք լսելու համար, իսկոյն հրապարակ իջան,
զինուորների միջոցով թոփ արին երկու համայնքի
ժողովրդին ու սպառնալիքներով յայտնեցին շահի
պահանջը:

Հայերը եզների պէս մնացին շուարած. փողե-
րը ստացել էին այն յուսով, որ շահեցնեն, նրա սո-
կոսով ընտանիք պահեն և գլուխը վերադարձնեն.
բայց ստացած աննշան գումարով իւրանց պակա-
սը լրացնելուց ետը էլ բան չէր մնացել, որ նրա-
նով որ և է գործ սկսեն: Չատերը ձեռն ընկած
փողը կերել, զարգակ նստել էին, իսկ մի քանիսը
առևտրին անտեղեակ լինելով՝ խաբուել, տանուլ էին
ատել:

Այս բոլոր պատճառները մէկ մէկ ասին հայերը

պարսիկ վերակացուներին, որ շահին իմաց տան իւ-
րանց մեղքանայ, բաշխի տուած փողը, կամ եր-
կար միջոց տայ, որ վաստակեն ու վճարեն:

Չահը նրանց պատճառարանութիւնները լսե-
լով ոչ բանի տեղ դրաւ և ոչ ժամանակ տուաւ.
խիստ հրաման արձակելով Ուղուրլու բէկի վրայ՝ պա-
տուիրեց, որ փոխ տուած գումարը կարճ միջոցում
հայերից ստանայ և գանձարանին պահ տայ:

Խստասիրտ վերակացուին այդպիսի հրաման էր
պակաս: Մի խումբ դաժան զօրականներ ժողոված
գնաց հայոց թաղը և մէկ մէկ կանչելով ստիպեց, որ
գանձարանից առած գումարը վերադարձնեն: Ահի
ու սարսափի մէջ պաշարուած ժողովուրդը միաբե-
րան գոռում էր:

— 2ո՛ւնինք, սրտեղից ասնք. հիմի ինքներս էլ
չքաւոր ենք: Սովի ձեռից ազատուելու համար թէ
թագաւորից ստացածն ենք ծախսել և թէ մեր ու-
նեցած չունեցածը:

— Այդ ինչ որ ասում էք, ես վաղուց գիտեմ. դուք
նոր բան ասացէք, նոր բան, գոչում էր Ուղուրլու
բէկը:

— Նոր բան չենք գիտում, ինչ ասենք, այ Ու-
ղուրլու բէկ, պաղատելով թախանձում էր հայ ժո-
ղովուրդը:

— Երբոր նոր բան չէք գիտում ու չէք ասում,
ուրեմն թագաւորի փողը ետ տուէք:

— 2ու՛նի՛նք, չունի՛նք, լսում էր խռնուած ժո-
ղովրդի այս ու այն ծայրից:

— Ի՞նչպէս թէ «չունինք», ուտելը հեշտ է եղել,
վճարելը դժուար հա՛: Ես ընդհակառակը լսել եմ,

որ ունիք և շէք ուզում թագաւորին ետ տալ իւր փողը: Դրա համար հիմի հրամայում եմ զօրականներին, որ ստիպելով ձեր ջանից հանեն կերած փողերը:

Իիրա զօրականները արիւնածարաւ գայլերի նման հրամանը լսելուն պէս թափուեցին ժողովրդի ջանին. առանց մեծ ու փոքր հարցնելու, որին ճանկեցին, սկսան շարշարել, տանջել. մէկին ոտներից գլխի վրայ էին քաշ անում, մէկին թօկերով կապկապում էին սիւնից, ետով ծեծում: Չատերին էլ անգթաբար թակելուց ետը լոյս աշխարհից կտրում էին, մութ խշտիները կոխում:

Հայ ժողովրդից փող էին պահանջում, բայց այդ եղկելին ինքը ուտելու, հագնելու բան չունէր, ինչ թէ փող: Հայերը զօրականների գլուխները տեսնելուն պէս քաղցն էլ էին մոռանում, մերկութիւնն էլ: Մօտների եղած չեղածը ծածուկ տալիս էին զօրականներին, կաշառում, որ հրապարակական ծեծից ազատուին: Պարսիկ վերակացուների կարգադրութիւնով պարտապան հայերը զօրականներին հերթով հիւր էին պահում, կերակրում, թէ նրանց և թէ ձիերին: Վա՛յն եկել էր այն հային, որ զօրականի բերանը արժանապէս չէր քաղցրացրել.— էլ ազատում ու խնայում չկար նրան.— փայտի անգութ հարուածներ էին, որ դիպչելով նրա մարմնին կապտացնում էին, լեզակ դարձնում:

Կաշառք տալով կամ յամառութիւնով ծեծին համբերելով հայերը թէպէտ պարտքի վճարումը ձրգձգեցին, ուշացրին, բայց աղքատութեան դռանը տեղի մօտեցան:

Զօրականները փայտ ու մտրակ բանացնելուց յոգնել էին: Ուղարկու բէկը տեսաւ, որ ծեծելով ու պատժելով փող չի դուրս գալիս, ուղղակի վերկացաւ, դնաց, թագաւորին ասաւ.

— Չահն ապրած կենայ, հայ ժողովուրդը բոլորովին աղքատ է, փող չի դուրս գալիս, ինչ անեմ:

— Ո՞նց թէ փող չի դուրս գալիս, գոչեց շահը գայրագին. բնո հօ իւրանց չեմ բաշխելու: Մենք պայման ունինք. աշխարհքս կապուտ-կողոպուտ չի: Հանեցէք հայերի տուած ձեռացազիրը և անպիտան ժողովրդին այստեղ կանչեցէք:

Չահն հրամանը կատարուեց և ժողովուրդը անու գողով հաւարուեց պալատի դուռը:

Նենգամիտ շահը հանդարտութիւնով սկսաւ իւր խօսքը.

— Հիմի որ ձեզ կանչել եմ պալատի դուռը, որ ի՛չ բան չանցկացնէք ձեր մտքով ու շասէք, թէ թագաւորական ուժով և իշխանութիւնով կամենում եմ պահանջել տուած փողս: Իսկի էլ չէ: Ինչ որ անում եմ, արդարութիւնով և իրաւունքով եմ անում: Ձեզ երեք տարի առաջ գումար փոխ տուի, կարծեմ չէք մոռացել, ես այն փողն եմ պահանջում ձեզանից: Ինչ օգուտ որ տեսել էք իմ փողից, հալալ լինի ձեր մօր կաթի պէս. միայն գլուխը բերէք: Եթէ ես սուա եմ ասում, անարդար պահանջ եմ անում, դիմեցէք դատաստանի. կատարեալ իրաւունք ունիք իմ դէմ բողոքելու: Մեր քաղաքում դատաւորներ էլ կան, դատարան էլ. ես և դուք գնանք դատաստան կանգնենք, ինչ որ դատաւորները Աստծու կոյս կողմից վճռեն, ինձ էլ ընդունելի լինի, ձեզ էլ:

Հայերը մնացին լուռած, չէին գիտում ինչ ասեն, որ թագաւորի բարկութիւնը չբորբորեն: Մի քանի օր մտածելու իրաւունք խնդրեցին, որ այդ միջոցում պարսիկ իշխանների ստներն ընկնեն, միջնորդ ու բարեխօս գցեն, որ թագաւորի սիրտը կարենան կակղացնել:

Չահն այդ միջոցն էլ տուաւ, բայց բոլոր խընդիրները, բարեխօսութիւնները զուր անցկացան, թագաւորից միշտ բացասական պատասխան էր գալիս: Հայերը կարծելով որ իւրանց բանաւոր խնդիրները պարսիկ իշխանների միջոցով տեղ չեն հասնում, սկսան գրաւոր ներկայացնել իւրանց աղերսներն ու աղաչանքները,—էլի չեղաւ ու չեղաւ: Թագաւորը դէպի հայերը դարձել էր անողոք, ոչ ժամանակ էր տալիս մի կամ երկու տարի, որ վաստակեն, իւր փողը տան, և ոչ գումարից որեւէ բան պակասցնում:

Մինչև անգամ դադարեցրաւ այդ մասին խընդիրներ ընդունելը և Ուզուրլու բէկին կանչելով այսպէս հրաման տուաւ.

—Կը գնաս այդ պնդերես ժողովրդից իմ փողը կառնես. փող չեն ունենալ, հոգիները հանելով կաշիները կը քերթես:

Ուզուրլու բէկը նոր զօրականներ ընտրեց, որոնք հռչակուած էին անգթութեան, վայրագութեան մէջ. զնաց պարտապան հայերի գլխներին կանգնեց հոգէտո հրեշտակի պէս ու պահանջեց, որ փողերը տան: Էլ գթալ ու խնայել չկար. հէնց որ մէկըն ասում էր՝ չունիմ, իսկոյն զօրականները ծեծում էին ու մութ նկուղների մէջ փակելով կռնե-

րից թոկ կապում, ըարձը տեղից կախում ու թախում օտները, թիկունքը:

Ծեծն ու ջարդը այդպէս շարունակուեց մի քանի օր: Պարսիկ վերակացուն տեսաւ, որ փող չի կանանչում, ամենն էլ ասում են՝ չունինք, նա պահանջն այսպէս փոխեց.

—Երբ որ փող չէք ճարում, ուրեմն հաւատներդ ուրացէք: Եթէ հաւատներդ չէք ուրանում, ինչպէս պայմանի մէջ գրուած է, փողի տեղ ձեր աղջիկն ու տղան վերցրէք, տարէք թագաւորին տուէք:

Հայերը մնացին շմուած, ինչպէս լինում են երկու կրակի մէջ ընկածները: Նրանք չէին ուզում հաւատից ու զաւակներից ձեռ քաշել, բայց սև եղած փողն էլ չունէին, որ տային, պրծնէին:

Ջօրականները անագորոյն պատուէրները ճշտութիւնով կատարելու մէջ իւրար առաջ էին ընկնում. գաղան դարձած՝ ամենին հալածում էին, հոգի չէին թողնում անարատ ու անվնաս. տղամարդի թէ կինարմատի ջարդելով իւրար կուլով էին ածում, աներից, բնակարաններից վռնում:

—Մի նստէք, գոռում էին նրանք. կամ ետ տուէք ստացած փողերը կամ ձեր տղան ու աղջիկը տարէք պալատի դուռը:

Տէր-Բաղդասարը մէկ յանդիմանում էր, թէ ինչու հայ երեկիները իւրան չլսեցին, շահի հետ գործ ունեցան, մէկ էլ դառնում յորդորում էր, որ յուսահատուելով անմիտ քայլ չանեն, մինչև որ փողը կը ճարեն, կը տան: Բայց ծեծն ու նեղութիւնը հայերի մի մասին բոլորովին ընկճել էին հաւառակ Բաղդասար երէցի խրատներին. այս վերջին-

ները վճռել էին դաւակներից ձեռ վերցնել:

— Աւելի լաւ է հարիւր աղջիկ ու աղայից ձեռ լուանանք, քան թէ հազար հոգով հաւատներս ուրա- նանք:

Այսպէս ասելով պարտապան հայերը բռնեցին իւրանց դաւակներէ ձեռից, միատեղ ժողովուելով պատ- րաստուեցին, որ գնան թագաւորի պալատի դուռը:

Հեշտ է ասել դաւակներից ձեռ վերցնել, բայց ո՞ր սիրտը կը զօրի... Գնացողը մէկ չէր, հարիւր չէր. որդեատէրն էլ էր գնում, բարեկամն ու աղգականն էլ: Հազարաւոր հոգի՝ մեծ, փոքր, աղջիկ, կնիկ իւրաք խառնուած՝ գնում էին լալով, ծնկներին խփելով, գոռգոռալով: Պալատական պարսիկները միամիտ ձեանալով առաջ էին գալիս, հարցնում.

— Այ ժողովուրդ, այդ ի՞նչ բան է, թագաւորի դէմ կռիւ հօ չէ՞ք գալիս. ի՞նչ էք լսել, որ ձեզ հեռ ընտանիքներ էլ էք վերցրել:

Նրանց նենգաւոր միտքը տարաբաղ հայերը հասկանալով պատասխանում էին.

— Ի՞նչ կուտարան ունինք. հարկաւոր, կարիք ժա- մանակ փող վերցրինք գանձարանից, մեր պակասու- թեանն արինք, ետով աշխատանքի դուռը շունեցանք, որ վաստակենք, փոխ առած գումարը ետ տանք: Ողորմած թագաւորը ինքն էլ է տեսնում, որ աղ- քատ ենք, ոչինչ չունինք, ինչքան աղաչում ենք, չի լսում, ոչ պարտքին ժամանակ է տալիս և ոչ բաշ- խում: Զօրականների ձեռին փայտ ու միս ենք դա- ուել, տանջուելուց հոգիներս եկել է, բուկներս հա- սել: Հիմի նոր ենք հասկանում, թէ ինչու շահը այն գլխից մեր որդկերանց գնահատեց: Նա լաւ գիտէր,

որ այս պանդխտութեան մէջ իւր տուած փողը մեր ձեռից կեղաի պէս գնալու է: Նրա համար պայման դրաւ, որ փող շունեցած ժամանակ կամ հաւատնե- րըս փոխենք կամ մեր որդիքն իւրան տանք:

Մենք մեր լոյս հաւատը փոխողը չենք. մեր տանից, տեղից թափառական դառնալով, սովին ու մերկութիւնը լիուլի ճաշակեցինք, այդ բաւական չէ՞, որ հիմի էլ հաւատներս փոխենք: Զէ այդքան տեղն էլ յիմար չենք. ահա մեր աղջիկն ու աղան բերել ենք իւրան դուռը, թող փողի տեղ ստանայ ու մեր հոգին աղատ անի, մենք մեր հաւատի անկիւնից յօ- ժարակամ մի փշրանք պոկողը չենք:

Այս ասելուց ետը գոռն ու գոշիւնը ձգեցին: Մօ- տենում էր բաժանուելու ժամը: Մուգն ու շիւանը, կանանց ծվոցն ու ճշոցը երկինք էին հասնում: Ամ- բողջ քաղաքը թամաշա էր եկել: Դուստրը պառաւ մօրից չէր ուզում բաժանուել, որդին ծերունի հօրից. ջրատարները իւրար գիրկ ընկած, իւրար վզով փա- թաթուած մղկտում, հեծկտում էին: Փողի տեղ զը- բաւ գնացող աղջիկն ու աղան մէկ իւրանց ընկեր- հարեանի հետ էին գրկախառնուում, մնաս բարով ասում խեղդուած ձայնով, մէկ իւրանց աղգականնե- րի վզով փարուում: Եղբայր, քոյր, հայր, մայր ձայնն ու ողբը իւրար խառնած գոռում էին ու արտա- սունքներով գետինն ողորում:

Նրանց լացն ու կոծը շատ անօրէն պարսիկ- ների սրտերն անգամ շարժեցին:

— Այս անօրէնութիւնը Աստուած չի վերցնիլ, եր- կինքը գլխներին փուլ կ'ածի, ասին մի քանի մեծա-

մեծներ ու ներկայացան շահին, որ խղճայ աղքատ հայերին, տուած փողը բաշխի.

Յայտնի չէ՝ արդեօք շահը այդ մարդկանց խնդիրքը լսեց, թէ ինքն էլ զգաց, որ հայ ժողովրդի լացից քարերն աղաղակում են, դուրս եկաւ դէմքը տխրացրած ու հայերի հետ այսպէս խօսեց:

— Թէպէտ պայմանի մէջ գրած է, որ իրաւունք ունիմ ձեր աղէքն ու աղջկերքը պահանջել փողի տեղ, բայց ես էլ հայր եմ, գիտեմ թէ ձեր սիրտն ինչքան կը ցաւի, եթէ զաւակներից զրկուէք միանգամից: Ես սրտումս գուժ ունիմ, ոչ մի ժամանակ չեմ հրամայիլ, որ ձեր որդիքը խլեն. այդ բանը վերակացու իշխաններն իւրանց ու գլխու են բռնել: Վերցրէք ձեր դաւակները և ետ տարէք. ես ձեզ փող եմ տուել, փողերս բերէք, ինչքն են պէտք ձեր աղջիկն ու աղան:

Մի քանի հայեր աղերսալիչ ձայնով վրայ բերին.

— Զատ լաւ ես հրամայում, ողորմած թագաւոր, քու փողը չենք ուրանում, բայց փող չունինք, ինչ անենք, տեղներս շատ է նեղ, աղաչում ենք՝ բաշխիր, քու ծառաներն ենք, քու ոտի հոգն ենք:

Զահը ոչ մի բառով չպատասխանեց նրանց աղերսին, այլ Ուղուրլու-բէկին մի կողմ քաշած վրէն բարկանում էր:

Այդ միջոցին հայերից պարզամիտները խնդալով ասում էին կամաց.

— Աստծուն փառք, շահի սիրտը գուժ ընկաւ, այսօր աղջիկն ու աղան ետ տուաւ, էգուց էլ փողի պարտքը կը բաշխի, կը պրծնենք, Աստուած ողորմած է:

— Զէ, այդքան էլ միամիտ միք լինիլ, պատասխա-

նում էին փորձաւունները. թագաւորը մեր արեւ չի խնդում, զուր տեղն էք խաբւում: Երանի այսօր հարիւր աղջիկ ու աղայ վերցնի ու հողիներս աղաւի: Նրանց որ ետ է տալիս, նպատակն այն է, որ մենակ նրանցով չբաւականանայ, այլ մեզ՝ այսքան հազար հոգուս հաւատափոխ անի:

Այս վերջին կարծիքն ուղիղի նման էր: Զահը բարկանալով Ուղուրլու բէկին այս էր ասում.

— Կարճամիտ մարդ, ս'ըր ես բերել այս մի քանի աղջիկ ու տղաներին, ինչ օգուտ զբանցից: Ես մտադիր եմ զբանց աակով, արմատով մեր կրօնին դարձնել, որ երկու երեք տարուց ետը հայի հոտ չլինի իմ հողի վրայ:

Ետով ցուրտ երեսով դառնալով դէպի ժողովուրդը խօսեց.

— Լաւ էք յիշում, թէ ձեր պայմանաթղթում ինչ է գրած, կրկնելն աւելորդ է: Եթէ կարճ ժամանակում ինձնից փոխ վերցրած գումարը կը բերէք, լաւ, աղատ կը մնաք ձեր կրօնին. եթէ չէք վճարիլ, այն ժամանակ բոլորդ մեծ ու պատիկ պէտք է ձեր հաւատը թողնէք և մեր սուրբ օրէնքն ընդունէք: Այս խելօք բանը, որ անէք, ոչ թէ ձեր բոլոր պարտքը կը բաշխուի, այլ և ամենքիդ առանձին առանձին պարգևներ կը տամ: Լսեցիք: Դէ հիմա գնացէք, մինչև մի շաբաթը կամ փողը պատրաստեցէք, կամ մուրը հաւատներդ թողէք, մեր ուղիղ կրօնն ընդունեցէք:

Հայ ժողովուրդը մտամոլոր, արեան ծովն ընկածի պէս ետ դառաւ պալատի դռնից: Իսկ Զահը Ուղուրլու բէկի վրայ ունքերը հուպ տալով պատուիրեց.

— Կրնկակուիս կը գնաս ետևներից, մի բուպէն ինչ է, մի բուպէ հանգստութիւն չես տալ, կը հարկադրես, որ գետնի միջից է, երկնքի երեսից է, թէ սրակեղից, կամ իմ փողը ճարեն տան կամ հաւատաները փոխեն:

Սրանեղած, աղքատ հայերը ցրուեցին, բայց խեղճերը դեռ այնքան չէին հանգստացել իւրանց օթեաններում, որ գոնէ մի բաժակ ցուրտ ջուր խմեն, մէկ էլ տեսան արիւնխում զօրականները խումբ-խումբ երևացին թաղամէջերում:


Պարտապան հայերից ամենաբամբաղըր նա էր, ով սիրուն աղջիկ ունէր կամ գեղեցիկ կին. այդպէսի երկու ոտը դնում էին մի կաղապարում ու ստիպում, որ կամ փողը ճարի կամ կնիկն ու աղջիկը իւրանց կամքին թողնի: Զօրականների անպատկառ առաջարկները ամեն տեղ մերժում էին:

Զօրականներն էլ հակառակու ամենին՝ թէ մեծի թէ փոքրի անխտիր տներից դուրս էին անում, փողոցներն ածում, դռները փակոտում, բանալիներն իւրանց գրպանը դնում: Հարիւրաւոր ընտանիքներ թրև էին գալիս փողոցէ փողոց փող ճարելու համար. ծածուկ ահ ու սարսափ էին տարածել, որ ով հայերին փող տայ, պէտք է նրա ստացուածքը ձեռից խլուի: Լրտեսները հետևում էին, որ իմանան, թէ ինչ հայեր են ձեռ մեկնում, որ գնան շուտ տեղեկացնեն շահին:

Այդ պատճառով ոչ մի երեւանցի կամ ջուղայեցի հայ սիրտ չէր անում Ղարաբաղ մեկըրի և Ղրխեալան մեկըրի ժողովրդին փողով կամ խորհրդով օգնել, այնպէս պաշարուած էին լրտեսներով: Խեղճերը տեսնում էին թէ ինչպէս իւրանց համազգիներին ծե-

ծում են կնկալ, քուր աչքի առաջ, քարչ են տալիս, կախում են գլխի վայր ոչխարի պէս: Անճարացած մնում էին հեռուից նայելիս և կարեվէր սրտով ցաւելիս:

Պարտապան աղքատ հայերը գիշեր, ցերեկ թափառում էին փողոցներում. կնանիք, աղջկեքք, մարգիկ, աղերք ուտում էին փողոցում, նղղում՝ քնում էին փողոցում: Այս բոլոր դառնութիւնները քաշելով երբէք մտքներով չէին անցկացնում թողնել իւրանց կրօնն ու հաւատը, այլ ում տեսնում էին՝ հայի թէ օտարազգու, այն էին պնդնոտում, խնդրում, որ ձեռ բռնեն իւրանց, ինչ տոկոսով ուղում են, փող տան Չահ-Աբասի պարաքը վճարելու, որ կրօնափոխութեան վտանգից պրծնեն:



Թշնամիս չընկնի անօրէնի ճանկը: Երբ տիրողը բռնաւոր է, հպատակի օրը նղոված՝ լինի գիւղացի, թէ ազնուական, լինի ստորին պաշտօնեայ թէ հոգեւոր տէր: Մարգարիտը խոզի աչքում ինչ գին ունի:

Դեռ հայոց 1034 թ. Ս. էջմիածնի գահի վրայ բաղմած էր Առաքել կաթողիկոսը, բայց այնքան դառն և անտանելի էին ժամանակները, այնքան բարբարոսաբար էին վարում օսմանցոց մեծամեծներն ու բզեշխները, որ նա երկու տարին չլրացրած իւր տեղը կաթողիկոս էր ձեռնադրել Դաւթին, ինքը տառապանքներից յոգնած մի վանք էր քաշուել և մնացել այնտեղ մինչև մահը:

Ժողովրդից նշանաւոր թէ աննշան, զիւղապեա թէ մելիք, բոլորն էլ օսմանցոց բռնութիւնից փա-

խել էին դէս ու դէն: Միակապահով անկիւն իբր թէ համարում էին Պարսկաստանը: Բայց կաթողիկոսն ուր փախչէր բիւր նեղութիւնների ձեռից: Հարկապահանջները դադար չէին տալիս նրան, ամեն ցաւի համար Մայր-աթոռի եախիցն էին կաշում:

Դաւիթ կաթողիկոսը հարկադրուած չըջում էր կեղեքուած ժողովրդի մէջ, փող հաւաքում և օսմանցոց պաշտօնեաներին տալիս: Մէկ, հինգ կրկնելուց ետը կաթողիկոսը աեսաւ, որ ժողովրդի մէջ ոյժ չը կայ, հարկապահանջների ձեռից փախաւ անձանօթ տեղեր, ամիսներով հեռու մնաց. բայց նկատելով որ աթոռի վիճակը չի բարւոքում, հարկերը իւրար վրայ դիզում են, ինքն էլ փախուստ տուած է ապրում իւր աթոռից, վեց տարի միայնակ չարչարուելուց ետը որոշեց եպիսկոպոսներից մէկին իւրան օգնական շինել, կաթողիկոսի հաւասար իրաւունքներ տալ, որ պարտքեր վճարելու մէջ իւրան աջակցի:

Այս բանը 1042 թ. էր, նրան օգնական ընտրուեց Մելքիսէթը: Սա աչքի ընկնող արժանաւորութիւն չունէր, չկարողացաւ այնքան գումար ժողովել, որ աթոռի հարկերը վճարի:

Աթոռի եկամուտը միաբաններին հազիւ էր բաւականացնում:

Աթոռի անունով պարտքեր էին անում կաթողիկոսները, այդ պարտքերը տոկոսների հետ հասել էին յիսուն հազար դահեկանի:

Պարտատէրերը մի կողմից էին նեղացնում, հարկահանները միւս կողմից: Դրանց ձեռից գլուխ թափելու համար կաթողիկոսները այս ու այն կողմն էին քաշում և գաղուած մնում: Երեք օրն ինչ է,

երեք օր չէին կարողանում մի տեղ դադար առնել. պարտատէրերից ու հարկահաններից ահ և ամօթ քաշելու պատճառով գիշերներն էին պտրտում: Մեկիքսէթը գնաց Կ. Պօլիս այնտեղի հայերի մէջ ժողովը անելու: Մեծատունները խնդրել էին, որ իւրանց պատրիարք լինի, կաթողիկոսութիւնից հրաժարուի, աթոռից երկուութիւնը վերանայ, ժողովուրդը մի հոգեւոր տէր ճանաչի: Գլուխ չէր եկել այդ պայմանը: Մի տարուց ետը վերադարձել էր Ս. Էջմիածին և ընկել պարտատէրերի ձեռը:

Դաւիթն այդ ժամանակ աթոռից փախած էր, Մելքիքսէթն էլ իմանալով նրա տեղը՝ փախաւ նրա մօտ, երկուսով ծածուկ պահուած ապրեցին:

Բաւական չէին խեղճ ժողովրդին այդ ժամանակի սրածուլթիւնն ու հարստահարութիւնը, սովն էլ վրայ հասաւ:

Սաստիկ երաշտից ցանքերը չորացել էին. աւօթութիւնից սովամահ եղան անթիւ մարդիկ, ցորենի գոռը (27 գրվ.) ութ դահեկանով հազիւ էր ճարւում: Բարձր Հայքում՝ Կարինից մինչև Երզնկա, Վասպուրականից մինչև Այրարատ և Սիւնիք սովն էր իւր ճարակող թիւերը փռել:

Սովը հերիք չէր կարծես, մահտարածամն էլ ետնից լոյս ընկաւ ժողովրդի մէջ: Ինչ որ սովի ձեռից ազատուել էր, սրան կուլ գնաց:

Ճարահատած կաթողիկոսները պարտատէրերի ու կոպիտ հարկահանների ձեռից փախան Տաթևու վանքը և Մայր Աթոռը թողին Օսմանցոց ձեռին անաէր, անխնամ:

Չարաբաստ հանգամանքները երրորդ կաթո-

դիկոս ստեղծեցին. վստարանդի աթոռակալները տեղ ջուղայեցիք և այլք աշխատեցին, Ամդա քաղաքի համբաւաւոր Սրապիոնին Ս. Էջմիածին բերին և օծել աւելին կաթողիկոս հայոց 1052 թուին:

Չահը խելօք և խորամանկ մարդ էր. իւր երկիրը փախած այնքան հայերի համար մի կաթողիկոս չունէր. օգուտ քաղեց կաթողիկոսների այս աստանդական և աղքատ գրութիւնից, հրաւիրեց նրանց իւր մօտ: Միայն Մելիքսէթը գնաց, որ շատ էլ խոհեմ բնոյթ չունէր. պատուով ընդունուեց ու միամտի պէս նստաւ ցաւերն ու սիրտը օտար արքայի առաջ բաց արաւ. մինչև անգամ խնդրեց, որ Սրապիոնին գահընկէց անի:

Չահը հաճութիւնով ամեն զրոյցներին ականջ դրաւ ու սրտում նրա միամտութեան վրայ ուրախացաւ:

Այդ միջոցին երևանն ու Ս. Էջմիածինը գեռ Օսմանցոյ իշխանութեան տակ էին:

Չահն ամեն տեսակ խոստմունք արաւ Մելքիսէթին, գլխի տակ փափուկ բարձ գրաւ, որ եթէ Արարատեան աշխարհը օսմանցիներից խլի, համ Էջմիածնի պարտքերը կը բաշխի, համ իւրան այնտեղ կաթողիկոս կը հաստատի:

Մելքիսէթն էլ երախտագէտ երևալու համար իւր կողմից ոչ մի ջանք չխնայեց. հայերի մտքերը դէպի պարսից թագաւորը շահեց թէ խօսքով քարոզելով և թէ նամակներ գրելով Արարատեան աշխարհի մեծամեծներին:

Այդ տարին Չահն արշաւեց դէպի Երևան, Մելքիսէթ կաթողիկոսն էլ հեան էր:

1053 թ. Օսմանցիք երբ լսեցին, որ Աբբաս շա-

հը Նախիջևան է հասել, շտապեցին Ս. Էջմիածին և Սրապիոնից պահանջեցին աթոռի պարտքերը: Կաթողիկոսը շատ պատճառներով հաստատեց, որ իւր պարտքը չէ, ինքը տեղեկութիւն չունի, Աթոռը օրէնքով չպէտք է հարկ ունենայ, Աստուծոյ աղօթատուն է. նրանք չլսեցին, ինչ որ տեսան կողոպտեցին: Կաթողիկոսին՝ իւրան ցանկանում էին պարտքերի ու կայքի տեղ յափշտակել, տանել, ժողովրդականը խոշոր գումար տուին, ազատեցին:

Ժողովուրդն ու Ս. Էջմիածինը կողոպտելուց ետը օսմանցիք Երևանում ամրացան, իսկ հարստահարուած կողոպտուած կաթողիկոսը պարտքով կրակով ծանրագին ընծաներ պատրաստեց և շտապեց, որ նոր բռնակալին դիմաւորի: Չահը ընծաներն ստացաւ. բայց Սրապիոնին իւր տեսութեան չարժանացրաւ, գրանով կամեցաւ շահել Մելքիսէթ կաթողիկոսի սիրտը: Սրապիոնը գրանից ետը չմնաց աթոռում, իսկոյն հեռացաւ Ջուղա ազգի Խխուր վիճակի վրայ ողբալով:

Ազգի երեք կաթողիկոսը մի աթոռի պարտքը վճարելու անկարող էին, էլ սրտեղ կտրենային դարման տանել բիւրաւոր ցաւերին տառապեալ որդկերանց, որոնք հառաչում էին երկրագնդի հեռաւոր ծայրերում:

Երկար չբաշեց, շահը իւր գորքի ու հայերի օգնութիւնով Երևան քաղաքն առաւ: Երբ Դաւիթն ու Մելքիսէթը ներկայացան շնորհաւորելու նրա յաղթութիւնը, շահը հրամայեց նրանց, որ շտապեն Ս. Էջմիածնի բոլոր պարտքերն իւրան վճարեն. «աշ-

խարհի տէրը ես եմ, նրա մէջ եղած փողն. ու հարստութիւնն էլ ինձ են պատկանում»:

Կաթողիկոսներն այս հրամանի վրայ մնացին ապշած. նոր իմացան որ սխալուած են եղել շահին իւրանց տղգի բարեկամ կարծելով: Չահը ոչ խնդրելու միջոց տուաւ, ոչ համբերելու, խիստ հրաման արաւ, որ կաթողիկոսներէից անյապաղ պահանջեն այն պարտքերը, որ օսմանցոց վճարելու էին:

Խեղճերը որքան կարողացան այս ու այն հայից խնդրելով, մուրալով զըստեցին, վճարեցին:

Իրանով գոհ չմնաց արծաթասէր շահը. խըստաբարոյ մարդիկ ուղարկեց Տուղա, որ Սրապիտնից էլ ջոկ պահանջեն Աթոռի հարկերը: Չատ մեծ գումար էին ուզում, կաթողիկոսը չունէր. զրին լանար: Ամենայն օր արգելանքից հանում էին հրապարակով ծեծում, անպատում:

Տանջանքներ կրելուց առաքինի կաթողիկոսը տկարացաւ. մեծամեծ հայերը բարեխօսեցին, երաշխաւորութիւնով ազատեցին: Հիւանդ մարմնով շըրջեց ժողովարարութիւն արաւ հայերի մէջ ու պարսիկների աչքը լիացրաւ: Նրանց ճանկից պրծնելով գնաց Վան քաղաքը՝ բոլորովին ընկճուած և ծեծի հարուածներից խոշտանգուած:

Ի Տէր հանդեաւ հայոց 1055 թուին:

Չահը 1052 թ. ոչ միայն հայ ժողովրդին էր տեղահան անելով ոչխարի պէս քշել դէպի Պարսկաստան, այլև զոյգ կաթողիկոսներին հրամայել էր, որ ժողովրդից անբաժան մնան մինչև Ասպահան: Այն,

Դաւիթը գնացել էր հլու ծառայի պէս և մնացել Ասպահանում, իսկ Մելքիսէթը կիսաճամբի ետ էր փախել Ս. Էջմիածին, որով շարժել էր շահի զայրոյթը: Այնուհետև շահը մի քանի անգամ պարբերաբար արշաւելով Հայաստան՝ կողոպտել տարել էր թէ ապահով ժողովուրդը և թէ նրանց գոյքերը. անող մնացել էին չոր հողը և բնակիչներից անճար աղքատները:

Ամենավերջը շահը հրամայել էր, որ գնան մի անգամ էլ աչք ածեն հայ աշխարհը—ինչ որ կը վրտնեն, այն էլ բերեն:

Ղարաբաշ ու Ղըրխ-եալան մելիքների խնամքին յանձնուած համայնքներն էին վերջին բերուածները:

Հայ աշխարհը անտէր մնալով՝ ասպարէզ էր դառել ելուզակների, մարդասպանների. նրանց ահից երկրագործ ժողովուրդն էլ փախել էր լեռների լանջերը, ձորերի խոռոչները:

Գետին ու դաշտ մնացել էին անվաբ, ոչ մարդկանց կերակուր կար, ոչ անասունների. եղած ցանքը մորեխն էր կտրել: 1056 թ. սովն այնպիսի ահռելի կերպարանք էր ստացել, որ մարդիկ սկսել էին կեկակուել ձիու, էջի, շան և կատուի մտով:

Չատ տեղ այդ անսուրբ կենդանիները չճարելով, դիակներ էր կտրտել, կերել սոված ժողովուրդը:

Այս ցատումները աւելի զօրեղ էին եղել քան թէ նզովեալ Չահ-Աբբասները: Աշխարհի մէջ թագնուած ժողովուրդը փախել էր ուրիշ կողմեր առանց հեռաւորութեան վրայ ուղ դարձնելու:

Հարստահարութեանց, ասպատակութեանց, գերութեանց ցասումների երեսից Հայաստան աշխարհը գրեթէ անապատացել էր, փարթամ քաղաքներն ու լիք աւանները ամայացել, անմատոյց ամրոցներն ու անառիկ բերդերը քանդուել, ճոխ անդաստաններն ու սիդաւէտ մարմանդները խոպանացել, բազմամբոխ ուխտատեղիները լքեալ մնացել, եկեղեցիները անշքացել, վանքերը փակուել, և կրօնաւորները չէին իմացել իւրանց կարգը սրտեղ գործադրեն:

1060 թ. Դաւիթ կաթողիկոսը գնաց Ս. Էջմիածին. բայց Մելքիսէթը չուզեց զահը նրան ղիջանել: Դաւիթը շահի մօտ գանգատ գնաց 1061 թ., որ այդ միջոցին Վրաստանի Գորի քաղաքումն էր: Չահը Մելքիսէթի վրայ արդէն զայրացած էր, զարհուրելի հրաման ուղարկեց Երևան՝ Թահմազ Դուլի խանի վրայ, որ Մելքիսէթին իւր անհնազանդութեան համար պատուհասի. պատուհասն այն էր, որ մտից կտրի արցանով և ուժով ուտացնէ:

Այդ զազրելի հրամանը կատարել տուին Վերափոխման պատ շաբթում:

1062 թ. Մելքիսէթը կապկապած Ասպահան ուղարկուեց, իսկ Դաւիթին հրամայուեց որ գնայ Ս. Էջմիածին և իւր պաշտօնը վարի:

Հէնց այս տարին էր, որ շահից վերցրած փողի ժամանակամիջոցը լրացաւ ու մենք տեսանք թէ ինչ տանջանքների մատնեց հայ ժողովրդին: Նրանց լաց ու կականի ձայնը որ քարեր էր սասանեցնում, հասել էր Ասպահանում ապրող մի բարեսիրտ լատին եպիսկոպոսի ականջը, որ երեւելի հռչակ ունէր և Չահի մօտ մեծ համարում:

Դա կանչեց Բաղդասար երէցին և ասաւ.

— Բնջ կաց, առաքինի պաշտօնեայ, մեծ է Արարչի զօրութիւնը. մանրամասն լսել եմ, ինչ նեղութիւն որ քաշել էք թագաւորի ձեռից: Եթէ ձեր ուղեկիբը փող է, միամիտ կացէք, հարկաւոր գումարը ես կը ձարեմ, կը տամ, ոչ թէ հաւատարութեան նպատակով, երբէք, այլ իբրև ընծայ իմ քրիստոնեայ եղբայրներին, որոնք մեր Տիրոջ անուան համար այսքան տանջուում են: Թող նդօվուի այն անձը, որ ուժի կամ նպատի միջոցով կը ձգտի երբ և իցէ ձեզ պէս ընտիր հաւատացեալներին շեղել կամ գայթակղեցնել. մի կերպ ձեր պարաքը վճարեցէք և ձեր հաւատին ամուր կացէք:

Բաղդասար երէցը ուրախութեան արտասուքն աչքերին եպիսկոպոսի աջը համբուրելով շնորհակալութիւն արաւ ու գնաց այդ աւետիբը իւր տառապեալ ժողովրդին յայտնելու:

Անհուն ցնծութիւն պատճառեց այդ լուրը համայնքների բոլոր անդամներին: Մելիքներն ու մի քանի հայեր Բաղդասար երէցի հետ ներկայացան լատին եպիսկոպոսին, և ստացան երկու հարիւր յիսուն թուման փող, որ իբրև ժողովրդի լիազօրներ բերեն, պարտքերը վճարեն:

Եպիսկոպոսի բնակարանից դուրս եկան թէ չէ՝ վճռեցին ուղղակի տանել, յանձնել Ուղուրլու բէկին, և մնացորդ պարտքի համար էլ միջոց խնդրել, որ այն էլ մի տեղից ձարեն ու հօգիներն ազատեն:



Բայց սատանան երբ է մեռել, որ մատնիչները հոտը աշխարհից վերանայ:

Հէնց այն ժամանակ, երբ հայերը առանց կեր ու խումի ուրախութեան մէջ էին պարտքի փողը ճարելու առիթով, անկարծ երկու գարշելի հոգի՝ Ղարբաշ մելիքի համայնքից անդգամի պէս ազահութեան կողմնալով, հակառակի ձին նստան և ասին.

— Եպիսկոպոսի տուած փողից թէ տաս տաս թուման մեզ կը տա՞ք, սուս կը կենանք, բան չենք փշացնիլ, իսկ եթէ չէք տալ, կը գնանք վերակացու իշխաններին կ'ասենք, որ հայերը գնացին լատին եպիսկոպոսից փող ստացան ձեզ տալու համար ու իւրանց հաւատները փոխեցին:

Վշտի ու տառապանքների ձեռից վերջին թելն ընկած հայերը ապշեցին, զարհուրեցին, որ այս գէշութիւնը երկու փուշ հոգիներից լսեցին:

Մի քանի այլևոր մարդիկ նրանց մօտենալով աղաչեցին.

— Ի սէր Աստուծոյ, քիչ համբերութիւն ունեցէք, մինչև այս ճարած փողը տանենք պարտքին տանք, շահի սարած ու սարքած թակաբղից պրծնենք, ետով ինչ ուզում էք կատարենք: Միթէ դուք հայեր չէք, հայի սիրտ չունիք, որ այդպէս բան էք բռնում: Ձեր ուզելիքը քսան թուման է (60 ու.), միամիտ եղէք. շահի հետ հաշիւներս վերջացնելուց ետը մեր մէջ ժողովարարութիւն կանենք, վերջին զարգարանքի կտորները կանանց վրայից կը պոկենք, կը ծախենք, միայն թէ ձեր ուզածը տեղաց անենք:

— Ձէ, յօժար չենք, գոռացին յուզաները, ապառիկ բան չենք ուզում, տալիս էք, հիմի տուէք նաղղ փողից:

— Ասածուն հաւատացէք, խօսեց Բաղդասար երէցը, ձեր ուղածները տալու ենք, քիչ համբերեցէք, քար միք խառնիլ ու հազարաւոր ժողովրդի կորստեան պատճառ լինիլ:

Չարութեան անօթ յուզաները ոչ ժողովրդի թախանձանքին ականջ դրին և ոչ առաքինի երէցի յորդորին. հակառակ սատանայի պէս վերկացան ուղիղ գնացին պարսիկ վերակացուների մօտ և բամբասեցին իւրանց համազգիների վրայ.

— Հապա չէք ասիլ, ողորմած իշխաններ, մեր ապերախտ հայերը գնացին լատին եպիսկոպոսի մօտ, նրանից փող ստացան, որ բերեն ձեզ տան և նրա հաւատն ընդունեցին: Սաիպում էին որ մենք էլ յօժարուինք: Ասինք.— եթէ հաւատներս պէտք է ուրանանք, աւելի լաւ է, արդարամիտ շահի լոյս հաւատն ընդունենք:

— Այ դօշաղներ, գովեցին վերակացուները, շատ լաւ էք արել, որ այդպէս էք մտածել. մենակ դժուր էք ձեր մոլար հաւատից դառնում, թէ ձեր ընտանիքն էլ:

— Նրանք էլ, նրանք էլ, պատասխանեցին վատթար հոգիքն ու շտապեցին աները, բռնութիւնով ատեան բերին իւրանց կանանց ու երեխանց, պարսկական կրօնի համեմատ թլփատել տուին:

Դրանց թլպատելով կրօնափոխութեան սկիզբը դրին պարսիկները, մնաց հայերից վրէժ հանելը: Վերակացուների ձեռին դժուար չէր այդ, իւրանց լսածների վրայ մի քանիսն էլ աւելացնելով գնացին յայտնեցին թագաւորին:

Չանը կատարեց հայերի վրայ և փրփուրը բե-

բանին հրամայեց կանչել ժողովրդի գլխաւորներին:

Չահի մարդիկը մի ակնթարթում հասան. Ղարաբաշ մեկիքին, որտեղ որ էր, գտան և շատ հայերի հետ սարան թագաւորի առաջ:

Կրակ դառած Աբբաս շահն էլ մեղադրանք ու կշտամբանք շթողեց, որ շթափի հայ ազգի գլխին:

—Ո՛վ շար, ապերախտ ազգ, բնաջինջ լինելու արժանի ազգ. այս բան է, որ դուք արել էք: Ես ձեզ ողորմալով այնքան փող սուբի, այնքան տարիների շահը բաշխեցի, խոստացայ դարձեալ վարձատրեմ, եթէ յօժարուիք մեր ճշմարիտ հաւատին դառնալ: Դուք ասացիք, որ փողի ու գանձի համար մեր հաւատից դառնողը չենք: Հիմի ինչն էր պատճառը, որ գնացիք լատինների հաւատն ընդունեցիք և նրանցից փող ստացաք: Եթէ գանձի համար հաւատներդ փոխելու էիք, ինչ նուաստն ու պակասաւորը մեր օրէնքն էր, որ չէիք ընդունում:

Ղարաբաշ մեկիքը և իւր ընկերներն սուաջ եկան ու պատասխանեցին.

—Ո՛վ հրաշափառ թագաւոր, ինչ հաղորդել են քեզ, մեզ վնասելու մտքով են արել: Աստուած այն օրը մեզ մահ տայ, եթէ մենք մեր հաւատից դառնանք և ուրիշն ընդունենք: Մենք կրկին մեր հաւատի մէջն ենք, ինչպէս առաջ էինք: Ուղիղ է, չենք ուրանում, մենք լատին եպիսկոպոսից փող վերցրել ենք: Այդ գումարը փոխ ենք առել, որ պարտքը վրձարենք և ոչ թէ նրա տեղ մեր հաւատն ուրանանք: Հաւատը շափիկ չէ, որ օրէնք մէկը փոխենք:

Նրանց խօսքերի վրայ թագաւորը գլուխը թափահարեց ու գոռաց.

—Սուտ էք խօսում, ապերախտ հայեր, լատին եպիսկոպոսից փող վերցրել էք հաւատներդ ծախելու համար: Եթէ փոխարինութիւն էիք ուզում, և ձեր սիրտը հալալ էր, ինչո՞ւ ուրիշ ազգից չէիք առնում: Սուտ էք խօսում, դժոխքի ծնունդներ, ես ձեզ ցոյց կը տամ:

Մեկիքներն ու գլխաւոր հայերը չէին գիտում ինչ հնար գտնեն, որ շահին հասկացնեն թէ իւրանք անմեղ են, ամբաստանութեան և սև մատնութեան դո՛հ են: Հեքսից քիչ էր մնում մէջներից տրաքունն, որ իւրաքանչիւր պարսիկ լուսանք ու անարգանք էր թափում նրանց գլխին հաւատուրացութեան պատճառով:

Լուել, չպատասխանել—չէին կարողանում, ճարհատած գնում էին իշխան վերակացուների երեսը, նրանց մօտ երգումնաճաք լինում, որ գոնէ նրանց միջոցով ճշմարտութիւնը վերականգնեն, թագաւորի առաջ կրօնափոխութեան արատը իւրանցից վերացնեն. չէր յաջողում, չէր լինում: Միամիտ հայերը անտեղեակ էին, որ Չահ-Աբբասը շատ լաւ գիտէ թէ բանն ինչումն է, բայց իւր շար նպատակն առաջ ասնելու համար կրկնում էր հայերին.

—Եթէ ձեր հաւատը կը թողնէք և մեր կրօնը կընդունէք, ինչ որ պարտ էք, համ այն կը բաշխեմ, համ ուրիշ պարգև ու ընծաներ կը տամ: Ամեն կողմով կը լիանաք, լաւ կը հագնուիք, լաւ կապիք. երկրագործին լծկան ու սայլ կը տամ, առևտրականին խանութ ու ապրանք: Իսկ եթէ դարձեալ կը յամառուիք, իմ առաջարկը չէք լսիլ, վերջին անգամըն եմ ձեզ ասում, մի այնպիսի տանջանքների կը

մատնեմ, որ հոգիներդ բերաններդ կը գայ, շունչներդ կտրուելով կը սատակէք:

—Մի օր ծնուել ենք, մի օր պէտք է մեռնենք, սրտի եկած միաբան պատասխանեցին հայերը, ինչ ուզում ես, արձա՛, թագաւոր, մենք մեր հաւատից դառնողը չենք:

—Դահիճներ, գոռաց Չահ-Արբասը, բռնէք այս անհնազանդներին և տանջանքների մատնեցէք, չը թողէք մի բոլակ հանգստանան ու աչք բանան: Դատաստանը ձեզ եմ յանձնում, այնտեղը գցեցէք այս շուն հայերին, որ կամ հաւատներն ուրանան կամ շունչները փչեն:

Անազորոյն դահիճները, տարտարոսի գաւակերըն հրամանը լսեցին թէ չէ՛ աչք ճպելում սարք ընկան, տանջանաց գործիքները ձեռներին թափուեցին հայ ժողովրդի վրայ:

Աշխարհը հայերի գլխին սևացաւ. դահիճները տասնով, քսանով իւրար ետնից վազում էին հայոց թաղով, մէկ այս տունն էին մտնում, մէկ այն: Ինչ տեղ տղամարդ էին գտնում, բռնում մահը նշանց էին տալիս: Կռները կողքերին ամուր կապում էին թոկերով, գետնին երեսի վրայ փռում, տրորում, փայտով ջարդում, կամ սրով խոցոտում, վիրաւորում: Չատին էլ կամ ոչխարի պէս օտներից գլխիվայր կախելով էին գանակոծում, կամ երեսի վրայ քաշքշում: Աղղեցիկ ու գորեղ հայերին շղթայակապ անելով, սոված, ծարաւ տանջում էին, օտներն էլ կոճղերի մէջ պնդացնելով ստիպում էին, որ օրերով մնայ անշարժ նստած:

Մարդիկ գոչում, աղաղակում էին, կանայք ճը-

չում, ծվում էին. ոչ որ կար, որ նրանց խղճար և անիրաւ բռնաւորի ձեռից ազատէր . . .

Ժողովրդին տանջող դահիճները միամիտներին խարելու մտքով լուր տարածեցին, որ Ղարաբաշ մելիքը տաճկութիւն ընդունեց, համոզուելով որ հայի հաւատը ոյժ չունի:

Բայց եղելութիւնն այսպէս էր. երբ Ղարաբաշ մելիքին խիստ զանահարեցին, ցաւից ուշաթափուեց, այդ ժամանակ՝ պարսիկները շտապով նրա վրայ թլպատութեան ծէսը կատարեցին:

Հայերը այդ լաւ գիտէին, ինչ կը խարուէին: Պարսիկ դահիճներն ու իւրանց պետերը երբ տեսան, որ անթիւ նեղութիւններ քաշելով հայերը հաւատափոխ չեն լինում, լաւ համարելով հայ կրօնի մէջ մեռնելը, քան թէ մահմեդական կրօնով ապրելը, այն ժամանակ նրանք սրոշեցին ու տուին հետևեալ պատուէրը —էլ հայերին միք հարցնիլ, հաւատդ փոխում ես, թէ չէ, այլ ձեռ ընկածին ուժով վէր գցելով թլպատեցէք և մեր դաւանութիւնը գլխին կարդացէք:

Այս միջոցը ամենից ձեռնտու երևաց իշխան վերակացուներին: Դահիճները սրերը ձեռին շարունակ կալնում էին հայերին և խումբ խումբ թլպատողների մօտ տանում: Կաշառքը թլպատողների մօտ աւելի յարգի էր, որին ուզում էին, թլպատում էին, որին չէ, փող առնելով աչքահուպի էին անում, արձակում: Երբ թլպատածների թիւը մինչև իրիկնագէմ հարիւր հոգու հասաւ, պարսիկ իշխանները ներկայացան Չահին և հետևեալը ծանուցին:

—Անսասան լինի արեգակնափայլ Չահիդ գահը, Ղարաբաշ մելիքը և իւր ժողովուրդը յօժարութիւնով

կատարեցին քս հրամանը. թլպատուած են և մեր հաւատի դաւանանքը ընդունելով դարձել են մեծ մարգարէի որդեգիրներ:

Թագաւորն այս լսելով ցնծութիւնով լցուեց, ճակատը ետ բացուեց, ժպիտն երեսին այս հրամանը տուաւ:

— Զտապեցէք, իշխան վերակացուք, և հրամանս անթերի կատարեցէք. նորահաւատ հպատակներին ոչ միայն առաջուայ պարտքերը բաշխեցէք, այլ և նորանոր պարզեցներ տուէք: Քաղցը վարմունքով ու նուէրներով այնքան լիացրէք նրանց սրտերը, որ մինչև օրս քաշած վշտերն ու դրկանքները իսպառ մոռանան:

Թագաւորի այս հրամանը լսուելուն պէս ծառաները վաղեցին, բոլոր թլպատուածներին կապանքներից ազատեցին. իշխանների որոշած ընծաները առատ-առատ բաժանեցին, իւրաքանչիւր ընտանիքի երէք թուման (9 ու.) փող տուին, որ լաւ ապրուստ անեն ու չուրացող հայերի նախանձը գրգռեն:

Սարսափի առաջին օրը դրանով չվերջացաւ, թէպէտ օրը մթնելու վրայ էր:

Ղարաբաշ մելիքին բռնութիւնով թլպատելուց և մահմեդական հուշակելուց ետը հերթը հասաւ Ղըրխեալան մելիքին և նրա ժողովրդին, որի մէջ էր, ինչպէս ասել ենք, բարեպաշտօն Բաղդասար երէցը:

2 թողին պարսիկ վերակացուները, որ օրը ետ լուսանայ, իրիկունէց դահիճներն ուղարկեցին Ղըրխեալան մելիքի ետնից, բռնեցին, բերին, որ մինչև առաւօտը չթագնուի: Ատենար լիքն էր պարսիկ ժողովրդով: Մելիքը կապկապած կռններով կանգնած էր

պալատականների, նախարարների մէջտեղ. քիչ հեռու երկու անեղատեսիլ առիւծներ գառագիղի մէջ ման ու ման էին անում:

Բաղմուտիւնը կամաց կամաց խոնուում էր, նոր հանդիսականներով սրահի մուտքերը բռնուում, որոնք հետաքրքիր էին իմանալու, թէ ինչ պատասխաններ պէտք է տայ քրիստոնէայ մելիքը պարսից զօրեղ Չահին, որից դողում էին սարերն ու ձորերը:

Հանդիսականների մէջ հայեր ևս կային, որոնք ծածուկ եկել, ամենից ետև կանգնել, սրտատարով սպասում էին մելիքի տալիք համարձակ պատասխաններին:

Ամենը ժողովուած էին, ամեն ինչ պատրաստ էր. միայն Չահն էր պակաս:

Ահա երևաց Չահը վեհ քայլուածքով, բեղերը ոլորած, մինչև օկանջի տակերը հասցրած: Ամենքը երկրպագելով ողջունեցին: Չահը նստաւ գահին: Մի քանի րոպէ լուութիւն տիրեց և այդ լուութիւնը կործես կանգնողներին շինեց փայտի կտորներ. ո՛չ շո՛ւնչ կար և ո՛չ ծպտուն: Ամենի փոխարէն հայ մելիքի սիրտն էր շուտ շուտ ուռչում, վէր նստում, և դէմքի վրայով պէս պէս գոյներ տանում ու բերում: Ամենի աչքերը նրա վրայ էին չուած ու անկած. մնում էր շահը, ահա նա էլ իւր կատաղի հայեացքը ուղղեց մելիքի վրայ և այսպէս սկսաւ խօսել.

— Մելիք, այսքան բաղմուտիւնը ժողովուել է, որ լսի, թէ ինչ խելօք պատասխաններ ես տալու քո շահին: Ահա ասում եմ քեզ քաղցը կերպով, եթէ կը թողնես ձեր յիմար հաւատը, կընդունես Մահմեդի կրօնը, ինձնից կը ստանաս ամեն տեսակ պարգև-

ներ—Թէ բարձր պաշտօն և թէ կեանքի ապահովութիւն: Քեզ չի սաղալ, որ անխելքութիւն անեա՝ Ղարաբաղ մելիքի նման և անձդ տանջանքների մատնես: Աչքերդ լաւ բաց արա և տես. սրանք, այս առիւծները քեզ համար են բերուած այստեղ: Եթէ յանգը գնել ես առաջարկութեանս ներհակ մի խօսք ասել, վերջացած է բանդ: Իսկոյն մօտիդ դահիճները իւրանց ուսի կացիններով քեզ մաս մաս կանեն և առիւծների առաջ կը շարտեն:

Արքիւ-եալան մելիքը անձայն, անծպուտ դողում էր Չահի սարսիչ խօսքերը լսելիս ու աչքի տակով նայում գառազիղի մէջ պտտուող ահարկու գազաններին:

Ամենը նրա բերանին էին նայում, որ խօսի, բայց բերանը բաց չէր լինում: Կարծես մի բան էր որոճում մելիքը թէ բերանում, թէ գլխում:

—Մելիք, ասա շուտով, հրամայեց Չահը, յօժար ես մեր օրէնքն ընդունելու, թէ չէ. . .

Արքիւ-եալան մելիքը՝ յայտնի չէ, սպառնալիքից էր, թագաւորական ատենից էր, թէ տանջանքների երկիւղից կամ առատ խոստմունքներով հրապուրուելով, յանկարծ գայթակղուեց և լսելի ձայնով ասաւ.

—Յօժար եմ ողորմած շահի առաջարկը կատարելու:

Այդ մի նախադասութիւնը մոլեռանդ պարսիկների խնդութիւնը վառեց, բորբոքեց, իսկ մի քանի հանդիսական հայերի գլխին ջուր մաղեց, սրտները շամփրեց, դադաղորեց:

—Կորանք, լուրեայն արտասանեցին խեղճ հայերը ու հեռացան մահմեդական ժխորի միջից: Առանց

մի վայրկեան ուշացնելու՝ ատեանի մէջ Արքիւ-եալան մելիքին թլպատեցին ու մահմեդական կրօնի դաւանութիւնը կրկնել տուին:

Արքիւ-եալան մելիքի յօժարակամ կրօնափոխ լինելը տեսնելով, պարսիկ մեծամեծները մօտեցան մէկ մէկ և սկսան գովել նրա խոհեմութիւնը:

—Բարաքեալա, շատ խելօք վարուեցիր, որ առանց ծեծուելու կամ տանջանքներ քաշելու ընդունեցիր մեր սուրբ հաւատը: Ղարաբաղ մելիքը հիմի նոր կը փոշմանի, թէ ինչու այնքան ծեծուեց, երբ վերջը իւր յիմար կրօնը թողելու էր:

Ուրիշ պարսիկներ մօտենալով մի քանի հաճոյական խօսքեր ասելուց ետը խորհուրդ տուին.

—Մելիք, իբրև խելօք մարդ, դու այսուհետև պէտք է քո մոլորուած ժողովուրդն էլ մեր հաւատին դարձնես, որ մերի քաղցր ճաշակն առնեն, իւրանցից զղուեն: Այն ժամանակ յայտնի կերևայ, որ դու սըրտացաւ հոգաբարձու ես քո համայնքի համար:

Արքիւ-եալան մելիքը շահից ստացած պատիւներով հարբած և շրջապատողներից լսած գովասանքներով ախմաբացած, սկսաւ բոլորովին մորթուց դուրս գալ և վեր թուածի պէս տակից գլխից բաներ ասել: Պարսիկներին դուր գալու համար սկսաւ իւր ազգայիններին բամբասել. դրանով չբաւականանալով բանը հասցրաւ մատնութեան:

—Ողորմած իշխաններ, խօսեց մելիքը, ինձանից պահանջում էք, որ իմ ժողովրդին մոլորութիւնից ազատեմ, ինչպէս ես ազատուեցի: Չատ արդար պահանջ է, հոգով յօժար եմ. մանաւանդ գիտում եմ, որ իմ ժողովուրդը Չահին ընդգիմացող չի: Չահին ողջ

Վրաստանն ու Հայաստանը գլուխ ծռելուց ետը՝ այս մի բուռն աղքատ հայերն ինչ են, որ ընդգրկմանն: Բայց...

— Ինչ «բայց», մի ծածկիլ, սոսա լսենք, ինչ կայ, ստիպեցին պարսիկ վերակացունները:

— «Բայց»-ն այն է, որ մինչև օրս եթէ ձեր աշխատանքը զուր է անցել հայերին կրօնավորի անելու գործում, խանգարող է եղել մի մարդ, որին հայ ժողովուրդը Աստու պէս սիրում է: Ինչ էլ ես անեմ, փուճ կանց կենայ, ոչ մի հայ իւր հաւատից յօժարակամ չի դառնալ: Ամբողջ համայնքի հոգին այդ մի մարդու ձեռին է. եթէ ասի, գնացէք ջուրը թափուեցէք, մեծ ու փոքր առանց ետ նայելու կը գնան, կը թափուեն:

— Ո՞վ է այդ մարդը, անունն ասա, գայրացկոտ դէմքով հարցրին նախարարները և դարձան դէպի շահը, որ Արքի-եպրանը ուղղակի նրան պատասխանի:

— Այդ մարդը իմ համայնքի հոգեւոր հովիւն է, Բաղդասար քաջ երէցը, վրայ բերաւ Արքի-եպրանը: Եթէ կարենաք մի հնարքով նրան իւր հաւատից դարձնել, այն ժամանակ առանց ձեր խնդրելու բոլոր ժողովուրդը ոչխարի պէս կը հետևի իւր քահանային:

Լսող պարսիկների մոլեռանդութիւնը իւր վերջին ծայրը հասաւ, ամեն կողմից կատաղած գոչեցին.

— Ուր սր է, բերէք այդ Բաղդասար քեշիշին. մենք ատամներով նրա միտը կը քաղենք. որ իմանայ թէ ժողովրդին խելքից հանողը ինչ պատուհաս պէտք է քաշի:

Բայց արդէն ուշ էր. Բաղդասար երէցին գանձին ու բերելը ձգեցին առաւօտը:

Պարսիկները ատամները կրճատելով ցրուեցին աները, իսկ Արքի-եպրան մելիքին նախարարները առօր-փառօր տարան իրիկնահացի:

Այդ գիշերն և եթ մելիքի մասնութեան լուրը հասաւ Բաղդասար քահանայի ականջը: Նրան սիրող ու պաշտող ժողովուրդը վերահաս վտանգի պատճառով մահուան դուռն էր գնացել, իսկ բարեկրօն հովուի իսկի այնուձը շէր:

Զինուած հաստատուն հաւատով այն գիշերն և եթ բոլոր ժողովրդին հրաւիրեց աղօթատուն և մըլխիթարեց այս խօսքերով.

— Ամենեկին մի վհատէք, ապաւինեցէք միմիայն Աստու: Այն աստուածը, որ եղունգի տակ շունչ է պահում ու բարեպաշտ ազգերի կեանքը հաղար ցաւերից պաշտպանում, նա Չահ-Աբբասի կրակն ու սուրն էլ կընկճի, որ մեզ պէս քրիստոնեայ ազգի շունչն էլ հնչուի աշխարհի վրայ ազատ, անարգել:

Ժողովուրդը ծնկաչոք մնաց երկար: Բաղդասար երէցը ժամասացութիւնն սկսելով գիշերային բոլոր աղօթքներն ասաւ, խրախուսական սաղմոսները քաղեց ու երգեց, բոլոր ներկայ եղողներին խոստովանեց, Աստուն պատարագ մատոյց, ճաշակեց ամենին, խրախուսելով, որ բոլորը մի ուխտի մէջ մնան. — մեռնեն հայ քրիստոնեայ, չդառնան երբէք Մահմէդի պաշտօնեայ:

Առաւօտուայ լոյս ու մութը իւրարից դեռ չբաժանուած, հոգեւոր պաշտամունքը վերջացրել էր:

Լուսադէմին մէկ էլ տեսնես տասնեակ զօրականներ ձիերը քշած հասան հայոց աղօթատան դուռը. արիւնածարաւ գաղանների պէս ներս խու-

ժեցին, Բաղդասար երէցի շորս կողմը կտրելով վրայ ընկան, մինը մի թեկից բռնեց, մինը միւս, երրորդը հանդերձը ձգեց, շորրորդը ծոծրակի կողմից գլխին հրեց. այդպէս անպատիւ քաշչելով հանեցին դուրս: Կոպիտ զինուորները ձիանը հեծան ու կապկապած կռներով քահանային իւրանց առաջ գցելով՝ քշեցին նրան մտրակ խփելով, մէջքին հրելով, վրան ճշայով դէպի թագաւորի դուռը:

Մոլեռանդ պարսիկները բորբոքուել էին, վայրենի ակնարկ, ատամի կրճրատոց էր, որ այս ու այն կողմից ցոյց էին տալիս խեղճ քահանային: Բայց նա այդ անարգանքների դէմ ոչ մի տրտունջ չէր անում, այլ հեղութիւնով մրմնջում էր. «Երանի այնոցիկ, որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածիցեն և ասիցեն զամենայն բան շար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս»: Թագաւորն իսկոյն ատեան եկաւ, այգտեղ նախքէ՛ծաց օրից աւելի բազմութիւն կար: Բաղդասար երէցին զօրականները անպատիւ դրութիւնով հրեցին ներս:

Թագաւորը մի արհամարհական ակնարկ արաւ դէպի նա ու թթուելով այսպէս խօսեց.

— Զեր ազգի հոգեւոր տէրերը այս բոպէիս իմ խոնարհ ստրուկներն են, դու ինչ սրտի տէր ես, որ համարձակուում ես հակառակ գնալ բարձր հրամանիս: Առանց երկարարանութեան՝ ահա կտրական ասում եմ. դու այսօր և եթ պէտք է քրիստոսական անարգ ու մոլար հաւատը թողնես: Եթէ կը յամառուես ու չես բնդունիլ մեր կրօնը, դո՛ւ գիտես: Նայի՛ր, ահա այն

գաղաններին, նրանք քեզ համար են բերուած: Եթէ հակառակութիւն անես, պէտք է մէջիցդ կէս անել տամ ու նրանց առաջը գցեմ: Լսո՛ւմ ես:

Տէր-Բաղդասարը այդ խօսքերը լսեց ու այնպէս սառը մնաց, կարծես քարափի էին ասած այդ խօսքերը, ոչ թէ կենդան մարդու:

Քաջ երէցը միտ բերաւ Տիրոջ խրատը, թէ «երբ որ ձեզ դատաւորների և թագաւորների առաջը կը տանեն, հոգս մի անէք, թէ ինչ պէտք է խօսէք: Այն բոպէին ձեզ կը տրուի թէ խօսք, թէ խելք և Ս. Հոգին օգնական կը լինի ձեզ».

Առանց վախի փոքր նշան ցոյց տալու առաջ գնաց դէպի շահր և այս համարձակ պատասխանը տուաւ:

— Հօր թագաւոր, ճշմարիտ է, որ այժմ մեր աղգի հոգևոր պետերը քո ծառաներն են, ինչ ամօթ: Զէ որ աշխարհակալներն էլ Արարչի ստրուկն ու ծառաներն են: Մի քանի տարուց ետը նախախնամութեան տնօրէնութիւնով դու էլ քու բոլոր փառքերը այնպէս պէտք է թողնես ու գնաս քո Տէր Արարչի մօտ, ինչպէս մենք հայերս քո տնօրէնութիւնով ամեն ինչ թողինք մեր երկրում ու եկանք այս օտար երկիրը: Զատ մի գոռոզանալ, քեզանից բարձր Ատուած կայ: Քո փառքն էլ այնպէս անցուկ է, ինչպէս վայրի շուշանի գեղեցկութիւնը: Ճշմարիտ է դու զօրեղ ես, բայց ամեն մահկանացուների պէս ստորադրեալ, ծառայ ես Ատածու ձեռին: Եթէ ինձ առաջարկում ես, որ յօժար կամքով իմ հաւատն ուրանամ, այդ անողը չեմ սչ մի ժամանակ: Երկու առիւծի տեղ եթէ յիսուներ այստեղ կանգնացնես, ես վախեցողը

չեմ: Իսկ եթէ վճռել ես ուժով, բռնութիւնով ինձ իմ հաւատից շրջել, տէր թագաւոր, իմացիր որ իբրև մահմետական իրաւունք չունիս: Ձեր սուրբ գիրքը ես ծայրէ ի ծայր գիտեմ. նրա մէջ ձեր օրէնքի հիմնադիրը այդպիսի բան չի հրամայում:


Եթէ այսքան նեղութիւնները քեզնից վերցրած փողի համար ես հասցնում, դարձեալ խղճի և Աստու գէմ է: Մեծ բաժինը վճարել ենք, ինչո՞ւ միջոց չես տալիս մնացածն էլ ձարենք, տանք: Քեզ էլ է յայտնի, ողորմած թագաւոր, թէ ինչ ցաւ ու ցասումներ կրեց հայ ազգը այս տասը տարուայ ընթացքում: Ծով էինք ցամաքեցինք, գետ էինք՝ ծածման առուներ դառանք. գթւ՛մ, մեղք արի, տէր:

Բաղդասարի զրուցի վրայ թագաւորի գայրոյթը այնպէս վեր նստաւ, ինչպէս պղնձի եփը կտարւում է ցուրտ ջուր ածելուց ետը. սիրտը հանգարտեց, փըրփուրն իւրան քաշեց: Էլ երկար չկարաց խօսել, աչքերը մեզմ ու հանգիստ դարձրաւ գէպի նա ու այսքանն ասաւ:

—Քէշիչ բարա, քո ժողովուրդը քեզ բաշխեցի, գնւ՛մ և մնացած փողը ճարի:

Բոլոր պալատականները այս որոշման վրայ մնացին ապշութիւնից արձանացած:

Տէր-Բաղդասարը խոր գլուխ տուաւ Չահին և յաղթական քայլերով անցաւ խուռն բազմութեան միջից:



Սարսափահար հայերը Բաղդասար երէցի կենդանութիւնից արդէն յոյսները կտրած, վաղուց էին արել իւրանց սուգն: Գիտենալով նրա համարձակախօսութիւնը, հաւատացած էին, որ Չահը նրան մաս մաս արել առիւծների բաժին է շինել: Ձեռներն առ Աստուած տարածած թշուառները իւրանց ընտանիքների կորստեան համար էին արտասուք թափում, երբ որ յանկարծ լուր բերին նրանց, թէ «մեծ տէր-տէրը» ահա ողջ առողջ գալիս է:

Խնչ լեզու պէտք է լինի, որ կարենայ լքուած ժողովրդի այդ բոպէի զգացածը ետ պատմի: Խօսքերն անզօր էին իւրանց ուրախութիւնը արտայայտելու. մօրը գտած գառների պէս «բն-բն» գցելով ընկան երէցի օտներն, որը հանդերձի քղանցները համբուրեց, որը ձեռները լիզեց, որը երեսը նրա օտների կոխած տեղը քսեց:

—Չահը ողորմաց հա, հեկեկալով ասին նրանք, մեռնէ՛նք Արարչի ողորմութեանը, քեզ առիւծների բերանից աղատեց, հապա մեզ, երբ պէտք է ազատի, աջիդ մատաղ, տէրտէր, աչքներն արտասուալից ազաչական ձայնով դիմեցին խեղճերը նրան:

Հազիւ հազ իւրան ազատելով անճար ու սպաւոր հօտի բուռն ողջագուրանքից՝ ձեռները հովանաւոր հրեշտակի պէս վրաները տարածեց ու քաջալերեց.

—Աստուծոյ ողորմութիւնով ամենքդ փրկուած էք, սիրասուն դաւակներս, քնջ եղէք և մի լքանէք:

Քահանայ և ժողովուրդ մտան աղօթատունը և միաձայն սկսան ջերմ փառարանութիւններ վեր առարել Բարձրելոյն սեղանի առջև:



Չքաշեց մի շարաթ, մնացած պարտքի գումարը ճարեցին, տարան թագաւորի գանձարանին վճարեցին և ազատման թուղթ առան:

Այդքան բռնութիւններից ետը Չահի օգուտն այն եղաւ, որ ժողովրդի մի մասին և երկու մելիքներին թլպատելով կրօնափոխ արաւ:

Քայց Քաղզասար երէցը չհամբերեց այս անարդարութեանը. «համ լատին եպիսկոպոսին փող պարտ մնանք, համ էլ այնքան հողիք մեր ս. եկեղեցու ծոցից հեռանան. չէ, այդպէս պայման չենք ունեցել»: Այդպէս մտածեց անվախ քահանան և ուղղակի գնաց Չահի պալատը: Յարգանքով ընդունեցին՝ կանգնեց այսպէս խօսեց.


— Չահը ողջ լինի, քեզ հետ դատարանի գործ ունիմ: Դու ինքդ օրէնք ես դրել, որ դատաստանի առաջ Չահն ու վերջին հպատակը իւրար հաւատար են, չէ:

— Այն, այդպէս է, ես եմ դրել, խօսեց Չահն ու մնաց զարմացած, չգիտէր վերջն ի՞նչ է ասելու: Քահանան շարունակեց.

— Դու հայերիցս սոււած քու փողն էիր պահանջում, ուրիշ ո՛չինչ: Եթէ չտայինք, պէտք է հաւատներս ուրանայինք: Լատին եպիսկոպոսից փող վերցրինք, քու պարտքը վճարեցինք: Նրանցից ետը ի՞նչ արդարութիւն է, որ շատ հայերի կրօնափոխ արիր: Դու քո հաստատած օրէնքը ոտնակոխ ես արել. կամ մեր փողերը ես տուր, կամ գնանք դատարան: Իսկ եթէ փողերը ես տալու չես յօժարուիլ, այն ժամանակ իրաւունք տուր, որ ուժով կրօնափոխ եղած հայերն իւրանց հաւատին դառնան:

Թագաւորը նկատեց տեսաւ որ ճշմարտութիւնը քահանայի կողմն է, չուղեց դատաստանի կանգնել նրա հետ, հրամայեց որ ստացած փողերը վերադարձնեն:

Քաղզասար երէցը ստացաւ ու տարաւ լատին եպիսկոպոսին իւր փողերը, անշափ շնորհակալութիւնն էլ հետը:



Ղարբաշ-մելիքը և իւր հետ ակամայ կրօնափոխ եղածները մի քանի ժամանակից ետը կրկին շարունակեցին իւրանց հաւատը պաշտել: Նորածին երեխաները մկրտել, մեռելները թաղել էին տալիս հայ քահանայի միջոցով, հայի ժամն էին յաճախում, խոստովանում, հաղորդում:

Մէկ-երկու անգամ Չահը այդպէս վարւողների սաստեց, տեսաւ՝ չեն լսում, վերջը թողաւ իւրանց կամքին: Երեք-չորս տարուց ետը հայերն էլի ազատ կերպով իւրանց կրօնը պաշտեցին. բացի Ղըրխ-եալանից, որի վիճակը իսկի նախանձելի չէր: Ինչքան խիղճն էր տանջում նրան, եօթն այնքան կնիկն էր նախատում, թէ ինչո՞ւ իւրան մայրենի եկեղեցուց զրկից ու կարօտ թողաւ հայ գրացու ու բարեկամի: Մելիքը չէր իմանում ինչ հնար գտնի, որ իւր արած փոքրոգութիւնը քաւի, համ խղճի խայթից պրծնի, համ կնկայ կշտամբանքներից, թուր ու մուրից ազատուի:

Երկար մտածելուց ետը հետեւեալ որոշման վրայ կանգնեց ու ասաւ.

—Այ կնիկ, հողիս տանջանքից թափելու համար պէտք է գնամ Երուսաղէմ ուխտ, ինչ կասես:

—Ասածու դուրեկան բան կանես, այ մարդ, գորովով պատասխանեց կինը:

Ղըրխ-եալանը դրանից ետը առանց յապաղելու գնաց նախարարներին ներկայացաւ, իրաւունք խընդրեց որ Թավրիզ գնայ կարեւոր գործի պատճառով. իւր ունեցածից ինչ որ թեթե էր ու գնոջ բան, վերցրաւ ու կնկայ հետ գնաց Թավրիզ, այնտեղից ճանապարհը թեքեց դէպի Երուսաղէմ Տիրոջ տնօրինական տեղերը տեսնելու և երկրպագելու:

Գնացին մարդ և կին ու մշտական մնացին այնտեղ, որ կարենան ապաշխարելով սրտի անդորրութիւն գտնել. այդ նպատակով հետներն ունեցած բոլոր հարստութիւնը բաժանեցին աղքատներին. կինը դարձաւ սպասաւոր և սկսաւ վանքի տնտնկներին ու մշակներին ծառայել, իսկ մեկըը աշխատեց եկեղեցական շինութիւնների վրայ, Կրովհետև արհեստով լաւ քարտաշ էր:

Մինչև իւրանց մահը Ղըրխ-եալանն ու կինը ձրի ծառայեցին Երուսաղէմի վանքին ու այնտեղ էլ թաղուեցին:



Յ Ա Ե Վ

(Ազգային առակ)

Չմեռն ու հիւսիս իւրար հետ սիրով հոսան էին անում, անձրև ու ձիւն թափելով, մաղելով՝ ամբողջ աշխարհը իւրանց տակ ծածկում, ողողում: Թացութիւնից ցամաք անկիւն չկար. տաքութիւն էլ Աստուած տար:

ձանճը մրսում էր, ցնւրտ էր անողս՛րմ, անասելի ցնւրտ: Խեղճը իւր դառ վիճակը լալով ասում էր.

«Ո՛հ, անպաշտպան արարած եմ. այժմ ո՛ւր պատսպարուեմ ես, ո՛ւր մի տաք տեղ գտնեմ, որ այս սոսկալի ցրտից չմեռնեմ»:

Այսպէս խօսելով դէս ու դէն էր թռչկոտում ու ցրտի ձեռից վրովթում:

Հատ թափառելուց ետը խեղճ ձանճը հասաւ մի պատի ու նրան կպաւ. նրա կրծքին հեալով շունչ քաշեց ու ասաւ.

—Ա՛խ, Աստուած, չես տեսնում, որ մահից ազատուելու համար որքան ոյժ կայ թեքրիս մէջ գործ եմ դնում. մի ճար կը լինի՛ փրկութեան, թէ այսպէս սրլած ոտներով, ցրտից կապտած մարմնով

պէտք է մնամ այստեղ կպած ու սատկեմ:

Այս ասաւ ճանճն ու յուսահատ լաց եղաւ: Արտասուելով սիրտը քիչ հանգստացրաւ ու պաան ի վեր նայեց. տեսաւ հիւսիսային անկիւնում սարգի ոստայն փռուած.

—Վերջապէս բաղդը յաջողեց, էլ չեմ մեռնիլ, մտմտաց ճանճը. իմ ազգական սարգն այժմ այնտեղ հանգիստ պառկած կը լինի. սրի, ձեռ կարկառեմ նրան. կարծում եմ բոլոր արարածներէից շատ նա կը ցաւի ինձ վրայ ու մահի ձեռից փրկուելու հնար կը տայ: Գնամ, ձայն տամ, նա կ'ողորմի և իմ շարքաչ կեանքին վերջ կը տայ:

Ասաւ ու վերև բարձրացաւ.

—Ազգական քուրիկ, ուժասպառ ճուաց անդօր ճանճը. ինչ կը լինէր կշտիդ պատառ տեղ տայիր, հանգստանայի մինչև այս մահաշունչ ձնի ու ցրտերի անցները: Աղաչում, մի խնայիլ օգնութիւնդ, քեզնիյ ոչ մի կեր ու խում չեմ ուզում, միայն թո՛ղ ոստայնիդ անկիւնում շունչս հաւաքեմ, ցրտից չսատկեմ:

Սարգը գոհութիւնով լսեց ցրտատար ճանճի ողորմուկ ձայնը. վիզը ձգելով հանեց ոստայնից ու այսպէս խօսեց.

—Գո՛ւ ես ձայն տուողը, ազգական քուրիկ. համեցէք վերև: Ում համար պատսպարան չունենամ, քեզ համար չգիտես, որ միշտ և հանապազ տեղ կունենամ՝ տար ու ապահով: Էլ մեր ազգականութիւնը սր օրուայ համար է: Համեցէք, ընդարձակ ոստայնս քեզ վերմակ, լիուլի փաթաթուիր մէջը, և սր անկիւնում ցանկանաս, հանգիստ քնիր: Կեր ու խումի կողմից էլ անհոգ կաց, ինձ մօտ ամեն ինչ առատ է ու

լի: Այս լաւութիւնը, որ քեզ ուրախութիւնով անում եմ, ի հարկէ բոռերը, դռաւանները իւրանց երազում չեն տեսնիլ. թո՛ղ նրանք գնան, ցրտում կոտորուին. այդ դեռ քիչ է նրանց: Նրանք այնքան ինձ ատելի են, որ փուշն ինչ է, փուշ չեմ ապ, որ աչքները զնեն: Իսկ դու իմ հարազատ, խոնարհ ազգականն ես, բռռի ու դռաւանի պէս ոստայնս պատառոտող չես. կեանք էլ ուզես, չեմ խնայիլ:

Ճանճի տեղը այդ բոպէին շատ նեղ էր, բայց մեծ պատուհասն այն էր, որ միամիտ էր. հաւատաց սարգի խօսքերի անկեղծութեանը, սքլած թեւերն ուղղելով վերև թռաւ, ոստայնը մտաւ:

Սարգն ուրախերես գիմաւորեց ազգական ճանճին, բարև տուաւ, բարև առաւ ու ձեռը նրա խոնարհ գլխին քսելով ականջն ի վեր ասաւ:


—Իմ խեղճ ազգական. ս'հ, սրբան ցաւում եմ քու վրայ. բոլորովին սառել, կապտել են ոտներդ, թեւերդ: Աշխարհիս վրայ շարքաչ կեանք ունենալը անչափ դառն է. սրտիս խորքից կարեկցում եմ: Լաւ արիւր, հոգեակո, որ եկար ինձ մօտ, ինչո՞ւ դուրսը դուր նահատակուես: Ե՛ս, միայն ես կարող եմ քու ապահով տեղը տալ:

Սրտացաւ սարգը այդ խօսքից ետը ճանճի վզից բռնեց ու աւելացրաւ.

—Արի, իմ փորիս մէջ տաքի՛կ, տաքի՛կ, հանգիստ նստիր, ս'վ իմ քուրիկ:

Ա ո ա ծ

Երեսից հայելի, տակից ածելի:



Ա Ղ Ո Ւ Է Ս

(Ազգային առակ)



Մովածուծիւնից աղուէսի փորը վեց վեց էր անում. օրը մթնելու վրայ էր. որս չէր գտել, մնացել էր շուար. բունը դառնալիս յանկարծ մի ծմբոց ընկաւ նրա ականջով: Ետ խլըչեց, գլուխը վեր տնկեց տեսաւ եռանդի (թումբ) վրայ մի սիրունիկ բան.

—Ա՛խ, ճագար, դ՛ու ես, ի՛նչ գիտէիր թէ քեզ եմ փնտռում. բաղդդ բերաւ, շուտ տեսայ: Ասածու ողորմութիւնով ձագուկ եմ ծնել. Սրտիս փափագն է, որ դու կամ նապաստակը լինէք իմ կնքահայրը: Դուք մօրաքրոջ տղէք էք, չէ՛: Երկուսիդ էլ սրտանց սիրում եմ, նորածնիս արեւը վկայ: Անչափ կըբաղդաւորացնես ինձ, եթէ գաս հէնց հիմի գնանք իմ որջը, ձագուկս խտիտդ առնես և քու սրտի ուզած անուն էլ դնես: Նրանից ետը մենք կըլինենք մշտական ազգական:

—Չ՛տ բարի. շ՛տ բարի, սանահայր աղուէս, մեռտնից ինչպէս կարելի է փախչել. շատ ուրախ եմ, որ այդ բաղդն առաջ ինձ ընկաւ. գիտեմ նապաստակը կընախանձուի, բայց մեղն իմը չէ: Գնանք քանի ցերեկ է, սանիկիս երեսը տեսնեմ. այսուհետև նա իմ աչքի լոյսն է: Մենք էլ իւրար համար կըլի-

նենք սանահայր-կնքահայր, և այնպէս սիրով կ'ապրենք, ինչպէս կաթն ու կորեկ:

Այս խօսքերի վրայ աղուէսի բերանը ջրակալեց: Միամիտ ճագարը հրճուելով ցած եկաւ, խոնարհ գլուխ առաւ և իւր փափրիկութիւնով աղուէսի խելքը տարաւ: Սանահայր ու կնքահայր ճամբայ ընկան, գնացին:

Նոր էին հասել որջի դուռը, աղուէսն ասաւ.

—Կնքահայր ճագար, եկ այստեղից սկսենք մեր ազգականութիւնը:

—Սկսենք, հաւանութիւն տուաւ ճագարը. բայց ինչո՞վ. դեռ սանիկ չկայ, որ խտտեմ:

—Համբոյրո՞վ, ճագար, բարեկամութեան անմեղ նշանով. աշխարհիս կարգն այսպէս է. ներսն էլ սանամայրը պէտք է քո ոտը համբուրէ:

—Աշխարհի օրէնքին հակառակօղ չեմ. բարեկամական համբոյրին էլ յօժար եմ, ասաւ ճագարն ու կուացաւ. աղուէսը նրան խտիտն առաւ ու պինդ սիմած սանամօր մօտ որջի խորքը տարաւ...:

Մի անգամ էլ նոյն աղուէսը ձորաբերանում կկուրին տեսաւ կվկվալիս: Սիրտն ուզեց նրան ուտելը. դարձաւ, ասաւ.

—Ո՞վ կկու, որ իմանաս սրբան դուրեկան է քու երգեցողութիւնը, սիրտս խաչեց, խորովեց քու աննման, անուշ ձայնը: Աստուած է վկայ, սոխակը իւր գովական տեղով քո կըկտցը չի ունենալ: Բայց... ո՛ւր էր թէ անուշ, քնքուշ ձայնի հետ զթոտ սիրտ էլ ունենայիր...:

Կիտուն այս գոգասանքի վրայ իւրան թափահարեց, ուռաւ ու դարձաւ աղուէսին ասաւ.

— Զը՛, աղուէս եղբայր, ինչ կայ, ինչպէս երևում է սրտումդ մի վիշտ ունիս, ասա՛, տեսնեմ, կարելի է ճար եմ գտնում:

— Զապա չկայ, քաղցրաձայն, երկնաձայն կկու, բայց ինչ ասեմ, որ վիճակս մեղմանայ. ողբայլ է, ողբայլ. . . : Որսորդների ձեռից այս ըսպէիս փախայ յուսահատ, արիւնջուայ: Ծարաւութիւնից տանջվում եմ, քիչ է մնում հոգիս տամ: Ճամբին ինչքան արարածի պատահեցի, մի հոգեսէր չեղաւ, որ կաթիլ ցուրտ ջուր տայ: Թ՛նդ անեղ դատաստանին պարտական մնան այդ անկարեկիցները: Բայց դու, հրեշտակաձայն կկու, ինչ կըլինի մօրդ հոգին միաբերես, ձորը գնաս, կտուցովդ մի կում ջուր բերես: Ռ՛հ, դիտես թէ ինչ մեծ վարձք կանես:

— Է՛հ, այդքան աղաչանքիդ համար մի փոքր ծառայութիւնն ինչ է, որ խնայեմ: Զամբերիւր, գնասմ, բերեմ:

Ասաւ թեթեաղութիւն կկուն ու թուաւ ձորը, կըտուցը ջրով լիք վերադարձաւ ու միամիտ սրտով ուղեց թափել աղուէսի բաց բերանը. բայց նենգ աղուէսը «հափ» արաւ, վիզը ճանկեց, հուփ տուաւ ատամների մէջ ու կերաւ. . . :

Նոյն աղուէսը մի օր էլ ցարուտի (փշերի) մէջ մանգալիս մի կաքաւ ճանկեց պատահմունքով առանց չարչարանքի և ուզում էր ուտել: Կաքաւը բարձրաձայն կըկըղաց.

— Օրհնեալ է Աստուած, որ ինձ էլ վերջապէս արքայութեան արժանացրաւ: Կազատուիմ այս չար աշխարհից, ուր գիշեր ցերեկ հանգիստ չունէի: Մանաւանդ շնորհակալ եմ քեզանից, սանահայր աղուէս, որ անգութ մարդկանց ձեռից ազատում ես: Նրանք ինձ ուտելու համար պէտք է կրակի վրայ այրէին, խորովէին: Բաղդաւոր եմ, որ քեզ բաժին ընկայ. կրակի վրայ չես տանջելու. անքի, ինձպէս դու էլ գոհութիւն տուր Աստծուն ու արդար բերանով որոզ անուշ արա:

Կաքաւն ասաւ ու գլուխը քաշ արաւ: Աղուէսը նրան խղճաց ու խօսքերին անկեղծ հաւատարով գնաց մի թմբի վրայ կկըղեց, աչքերը երկինք գցեց ու բերանը բանալով նըւնըաց.

— Չնորհակալ եմ Քեզանից, բարերար Աստուած, որ այսօր իմ փորիս հոգսը քաշեցիր:

Այս ասելու միջոցին նրա բերանից կաքաւը թռաւ, փախաւ:

Աղուէսը ծկլթաց, արածի վրայ ափսոսաց ու վերջը երկու թաթով իւր գլխին ամուր խփեց.

— Զի՛ւն գայ խելառ գլխիդ, անուէս. անք ինչու մոռացար քո պապական սովորութիւնը, չէ որ առաջ պէտք է փորդ կշտացնէիր, ետով Աստծուն գոհութիւն մատուցանէիր:

Ա Ն Ա Ց Ն Ե Ր

Խոփը քարին դիպաւ.
Գայլի անունն է կտորած, աղուէսն աշխարհ քանդեց.

Ամեն օր գետը գաթա չի բերիլ:

ՄԲՏԱՅԱՐ ԳԱՅԼ

(Ազգային սոսակ)



Հին ժամանակ մի հաստավիզ գայլ կար, տաւարատէրերին զարհազարն էր բերել. անասուններից ոչ սաղն էր նրա ճանկից պըծնում, ոչ կաղը. ամենի բկից բռնում, անկշտում փորն էր ածում, բայց էլի աչքը ծակ, ծակ:

Նրա ահից հանգում ոչխար ու տաւար չէին պահում, ամենն էլ ժողովել էին գհուկների, գոմերի մէջ: Զներն անգամ ահի մէջ էին այդ եաւղուզաղ, խոշոր գայլից, ինչ թէ խոտաճարակները: Հովիւ ու տաւարած սպասում էին, որ քաղցից ստիպուած գայլը մի օր սիրտ անի, շէնամէջ, թաղամէջ մտնի, այն ժամանակ իւրանք գիտեն, թէ շների օգնութիւնով նրա կաշին ինչպէս կը հանեն: Բայց գայլը այդքան միամիտներից չէր. թէպէտ նա այնքան ուժեղ էր, որ ահագին մտդին շարակն առած փախչում էր, բայց առժամանակ լաւ էր համարում դուրսը սոված օռնակ, վնգստակ, քան թէ թաղամէջ գնալ ու հարիւրաւոր շների ճանկն ընկնել:

Սոված փորով պոչը քաշ էր տալիս դաշտերում հաստավիզ գայլը. յանկարծ հեռում աչքովն ընկան մի բանի շորքոտանիք: Դրանք ամառուայ աշխատանք քաշած, սայլում, կալում՝ լծան տակ չորացած եզներ էին, որոնք ծեծուած ջաններն առել, հեռացել էին շէնամիջից, որ կանաչ խոտերում մի քիչ հանգիստ օր քաշեն: Նրանցից մինը սև էր, մինը կարմիր, միւսը ճերմակ, գլուխները կախ արածում էին: Գայլն այնպէս կարծեց, թէ անպող անասուններ—աւանակներ են. սինգ-սինգ տալով վազեց, որ չուտ հասնի ու փորը կշտացնի: Բայց թուրք սառաւ, երբ մօտենալիս տեսաւ, որ սրապող եզներ են, որոնք մէջք մէջքի տուած, հրացայտ աչքերով, փըշչացնելով իւրան սպասում են: Գայլն խսկոյն վեր ու դիր արաւ, տեսաւ, որ ուժի տեղը չէ. «արի խելքի ու կեղծաւորութեան դիմեմ, այս պողաւորների հախիցը գամ», ասաւ ու ժպիտն երեսին նրանց դարձաւ.

—Օրհնեալ հագիր, ինչ էք ահագին պողերով ինձ սրտաճար անում. ձեր եզների աշխարհում հիւրին այդպէս են ընդունում: Նոր չի իմ ծանօթութիւնը, ինչ մեղքի տէր եմ, որ ինձ վրայ խեթ աչքով էք նայում: Ես ինչ եմ, որ յանկարծ ինձանից վախեցաք. միթէ ձեզ պէս չորսոտանի չեմ. ձեզ նման ոտներ, ախանջներ ու պոչ չունիմ: Միթէ նմանը նմանին մէկ վնաս կըտայ, խսկի տեսնուած բան է: Հասակս կովի հորթի չափ չկայ, ինչո՞ւ էք մտքներովդ անցկացնում, որ ինձպէս փոքր ու տկարից ձեզ մի վնաս կը գայ: Ես գարմանում եմ, Աստուած է վկայ, որ դուր տեղը սրտներդ ահ էք գցում: Մի

քիչ առաջ սիրուն արածում էիք, ինչո՞ւ էք ախորժակներդ կտորում: Ես ընկեր էի փնտռում, էնդուր դէսն եկայ, թէ չէ իմ եղած տեղն աւելի լաւ խոտ կար: Երեւի Աստծու կամքն է, որ ձեզ պէս լաւ բարեկամներ գտայ:

—Քու անունն ի՞նչ է, կարելի է իմանալ, հարցրին եղները:

—Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, ձեր խոնարհ ծառայ Ծաղկակոխ, ասաւ գայլն ու գլուխը քաշ անելով սկսաւ եռանդով արածել:

—Ծաղկակոխ, սիրուն անուն է, ասին զմայլուած խելառ եղները ու սրտներից ահը հանելով, առաջուայ պէս միամիտ արածեցին, առանց ուշ դարձնելու գայլին, որ խոտ պսկելով բլրուղը լցնում էր, զգոյշ աննկատ կերպով թափում և քաղցր, անուշ զըրոյց անում սև ու կարմիր եղների հետ:

—Բարեկամներ, ասում էր, ափսո՞ս, հազար ափսո՞ս, որ երկար չէք կարող այս սիրուն խոտերում արածել:

—Ինչի՞, ինչի՞ չենք կարող զարմանքով հարցրին եկները:

—Ի՞նչ ասեմ, սիրտս ցաւում է ձեր կեանքի ապահովութեան համար, թէ չէ վատամարդ լինել իսկի չէի ուզիլ:

—Ճամարախօսները, Ծաղկակոխ ընկեր, աշխարհումս միշտ վատամարդի են հռչակում, այդ փոյթ չէ. վերջում երկնքի վարձքը նրանցն է: Ի՞նչ ունիս սրտումդ, համարձակ ասա, տեսնում ենք, որ մեր բարին ես ուզում:

Գայլը ձայնը քաշացնելով շնչաց.

—Ես ինչպէս տեսնում եմ, սրտակից բարեկամներ, ձերմակ եղը ձեզ մեծ փորձանքի մէջ է գցելու:

—Ո՞նց, ի՞նչպէս, ա՞ն ու գողով հարցրին նրան:

—Այ ասեմ ինչպէս, դուք ձեր թուխ ու մոյզ գոյներով ցերեկն էլ չէք երևում, իսկ ձերմակ եղը զիչերն էլ ձրագի պէս լոյս կըտայ: 2էք լսել, որ աշխարհումս աւանակների ետեից պտտող գայլեր կան:

—Լսել ենք, այ՛ն, կան, լսել ենք, պատասխանեցին եղները:

—Այդ գայլերը լոյս ասած բանը ատելով ատում են, շարունակեց իւր խօսքը գայլը: Նրանք ձերմակ եղան վրայ բարկացած կը գան, թէ նրան պատժեն, հա՞ դուք էլ կընկնէք նրա պատուհասի մէջ: Ես իբրև սրտացաւ, ուզում եմ ձեր գլխից այդ մեծ փորձանքը հեռացնել, չեմ իմանում, ի՞նչ կամք կը տար:

—Վա՛, վա՛, ի՞նչ ես ասում, Ծաղկակոխ բարեկամ, մի՞թէ մենք մեր գլխի վնասն ենք ուզում: Եթէ այդ պատուհասը կայ, ինչո՞ւ առաջը չ'առնենք: Կալի ու սայլի տանջանքից ազատուել ենք, որ զանք աւանակի թշնամի գայլի ճանկն ընկնե՞նք: 2է, այդ անողը չենք: Առանց այդ մենք վրէժ ունինք ձերմակ եղան դէմ. մեր սէրը նրան աւելի էր սիրում ու խնամում, իսկ մեզ, որ քիչ ծուլութիւն էինք անում, ծեծում էր ու ճիպոտի տակ չորացնում: Համաձայն ենք քու խորհրդին, Ծաղկակոխ բարեկամ, գնա՛, ինչ ուզում, ես ա՛րա:

—Չա՛տ բարի, ա՛նչքիս վրայ ձեր առաջարկի կատարումը, ասաւ գայլն ու վագեց մենակ արածող ձերմակ եղան բիկից բռնեց: Եղը գայլի ատամներից մղկտարով բարձրաձայն բառաչեց ու վրից կախուած

գաղանին քաշ տուաւ: Միւսները օգնելու տեղ խըն-
գում էին: Գայլը եղան զէս ու զէն օլորելով աւելի
խոր հախուեց բկից ու փռեց արօտի վրայ:

Խեղճ անասունը տակից գոռում, բղղում էր.

—Օգնեցէք, սայլի ու կալի ընկերներ, զուր խա-
բուեցինք ծաղկակոխ անունով. սա իսկական գայլ
է, օգնեցէք, թէ չէ մի օր էլ ձեր բկին կը չորի:

—Կորիւր, անպիտան, ասում էին ընկեր եղները.
ուզում ես՝ գանք քեզ ազատենք, վերջն անշահ գոյ-
նովդ մեզ կրակի մէջ գցես: 2է, այդքան էլ միա-
միտ մի կարծիլ. ինչ անում է, քեզ արժան է, գնան,
գլխներիցս հեռացիր:

Գայլը ոչ մի տեղից երկիւղ չունէր. ատամները
աւելի խոր թաղեց անպաշտպան եղան կողորդի մէջ
ու շունչը կտրացրաւ: Արիւնաշաղախ պինչը խոտե-
րին քսելով վազեց եղների մօտ.

—Այսուհետև ամեն փորձանքից ազատ էք, արա-
ծեցէք ինչքան կամենաք:

Եղները խնդարով գէպի ցած խոտաւէտ տեղը
գնացին:

—Այս ըտպէիս գալիս եմ, ասաւ գայլը ու դար-
ձաւ ձերմակ եղան մօտ, ատամներով ձեեց կաշին,
մտով կշտացաւ ու թռչկոտալով գնաց եղների մօտ:
Մէկ կարմրի վզով փարուեց, մէկ գնաց սևի պինչը
լիզեց, համբուրեց:

Ծաղկակոխը օրը երեք անգամ վազում էր մօտ
մօտ, փորը կշտացնում ու գալիս եղների հետ խա-
ղում. նրանց խաբելու համար մի երկու խոտ պո-
կում, գլխներով, մէջքներով ծլունգ լինում, ինքը
կերածը մարսում, նրանց էլ զուարճացնում:

Եօթն օր այդպէս լիառատ ապրեց, մինչև որ
ձերմակ միտը վերջացաւ. ոսկորների վրայ մնացած
ջլերն էլ ութերորդ օրը կրծելուց ետը, մնաց կանաչ
խոտի յուտով: Մի երկու օր համբերեց գայլը, բայց
սովածութիւնից փորն ուզում էր իւրան ուտի: Հէնց
որ կարմիր եզը մի կողմի վրայ թերուեց, ծաղկա-
կոխը պոչը քաշ տալով սեին մօտեցաւ ու ականջի
տակն ասաւ.

—Մի բան եմ ուզում յայտնեմ, չեմ գիտում ինչ-
քան սրտովդ կը լինի: Սիր չես իմանում սրտացաւ
որմինի դրութիւնն ինչքան գէշ է լինում, երբ տես-
նում է իւր սրտակից բարեկամի գլխին փորձանքը
պատուելիս, և բարեկամը տեղեկութիւն չունի:

—Ի՞նչպէս, ինչ փորձանք, սարսափած հարց-
րաւ եզր:

—Հատվան, անքի լոյս, ափսոսում, շատ եմ ափսո-
սում, որ անգութ երկրագործի ձեռին տանջուելուց
ետը այնքան միջոց չես գտնելու, որ հանգիստ շունչ
քաշես, կերած խոտը ջանովդ գնայ: Սրանից ետը
պէտք է չաղանայիր, ցից-ցից ոսկորներդ մտով ծած-
կէիր, յանկարծ անիրաւ փորձանքը եկել է գլխա-
վերեզ տնկուել:

Այս տեսաւ ու լռելով զլուրը կախեց: Սև եզը
կրակը ջանն առած հարցրաւ.

—Ի՞նչ փորձանք է, որ եկել է գլխավերև արն-
կուել, ծաղկակոխ բարեկամ, շուտ ասա, ինդրում եմ:

—Ի՞նչ ասեմ, որ սիրող վշտանալու է, գիտեմ
որ ընկերիդ աչքի լոյսի պէս ես սիրում:

—Ի՞նչ անենք, որ սիրում եմ, հօ գլուխս նրա
համար կորցնելու չեմ: Ի՞նչ բարի պատուը կամիրն է

սայլում լծած ժամանակ, որ պճեղս սոթ էր պըրծ նում, խնայելու տեղ նա ինձ վըայ էր հարում, ահան տակը գցում: Չէ, ապահով ասա, ես վշտացողը չեմ. ուղիղ է, ընկերին սիրում եմ, բայց այնքան էլ յիմար չեմ, որ պուխս նրա համար գոհեմ: Ամեն բանին չափ կայ:

— Դէ որ այդքան խելքդ պարզ կտրում է, ինչն չես հասկանում, որ մշտական չի կարելի կարմիր եզան հետ ընկերութիւն անել:

— Ի՞նչպէս, ինչի՞ համար չի կարելի:

— Այնպէս չի կարելի, որ նրա գոյնը անշահ է. վաղ թէ ուշ քեզ փորձանքի կը հանդիպեցնի: Քու բանն ուրիշ է, Աստուած քեզ սիրել է ու շահաւէտ գոյնով ստեղծել: Իսկի լսել ես գայլերի անունը, նրանց շատ տեսակը կայ. մարդագայլ, շնագայլ, գոմշագայլ, եզնագայլ. քեզ բաւական է, որ վերջինի ճանկն ընկնես, իսկոյն կը քըքրի, կ'ուտի: Ես այդ լաւ գիտեմ, դրա համար քեզ վըայ ափսոսս գալիս է: Երկու երեք օր է, ուզում էի քեզ յայտնեմ, որ քու օգտի, սիրոյ համար անձս ամեն վտանգի ենթարկելու պատրաստ եմ, քաշվում, ամաշում էի: Հիմի էլ եթէ դու շտաիպէիր, ասողը չէի: Սըանից դէնը դու գիտես. ուզում ես ընկերիդ պատճառով յօժարակամ գնա եզնագայլի ճանկն ընկիր, ուզում ես՝ ինձ իրաւունք տուր—փորձանք բերող ընկերից քեզ ազատեմ, որ բոլորովին ապահով արածես այս արօտներում ու շաղանաս: Արօտները միայն հօ սըանք չեն, այն կողմը անառաքեքանում այնպէս խոտեր կան, որ տեսնես, աչքերդ կը գնայ: Կը տանեմ, քեզ այն արօտները ցոյց կը տամ, մենակ կարածես: Փառք Աստու,

այնպէս գոյն ունիս, որ քիչ է մնում ես էլ շտեսնեմ, ինչ թէ եզնագայլը:

— Զատ բարի ես ասում, Ծաղկակոխ ջան, տեսնում եմ, որ իմ օգտին ես ման գալիս, ինչն եմ ուրիշի համար կեանքս փորձանքի մէջ գցում: Համաձայն եմ ասածիդ. միամիտ կաց, ես էլ կաշխատեմ մի օր քու լաւութեան տակից դուրս գալ:

Գայլն այս օր լսեց. մտքի մէջ ծիծաղելով քայլերը դէպի կարմիրն ուղղեց. յանկարծ վզից բռնելով կոլոլեց տակը ու ժանիքները ցցեց կոկորդի մէջ: Խեղճ անասունը տակից բառաչեց.

— Լծան ընկեր, սևուկ ընկեր, հասիր օգնութիւն. խեղդեց ինձ այս անիրաւը. վա՛յ, մեր լսած գայլերիցն է եղել. քանի շունչս վըէս է, հասիր, պողերիդ ծայրը հանիր, թէ չէ մի օր էլ քու բկից կը բռնի:

Սև եզը հեռու կանգնած, խոտի փունջը բերանին ցնծալով ասաւ.

— Յիմար եմ, ինչ է, որ գամ պողերիս ծայրը հանեմ Ծաղկակոխին—իմ բարերարին: Կորիր զլիւիցս. հաղիւ քեզանից կազատուեմ ու այն ընդարձակ դաշտերում, ուր լաւ խոտ կայ ես կը գնամ, մենակ կարածեմ:

— Ա՛յ, լծան ընկեր, շարունակում էր աղերսել կարմիր եզը վերջին շնշում, թո՛ղ միամտութիւնը ու անի այս սուտ սրտացաւին սպանիր, որ իմ մահից ետը դու գոնէ ազատ կեանք քաշես, թէ չէ գղջալդ ուշ կլինի: Ճերմակ ընկերս, որ ասում էր, ես չէի հաւատում. անի, սպանիր, հէնց սա է եզնագայլը, մեր ցեղի թշնամին:

Սև եզը կարծես ահանջները բուրդ դրած՝ չէր լսում իւր ընկերի աղաչանքին, գլուխը կախած դաւար խոտը ագահութիւնով պոկում էր ու կուլ տալիս:

Գայլը կամաց-կամաց եզան շունչը հաւաքեց ու ժանիքները մի անգամ էլ պինդ խրելով խրթուլակը, շնչափողը դուրս ճոթեց: Փափկամսերից կուշտ ուտելով վազեց եկաւ սև եզան մօտ, ուրախ աչքերով դէս ու դէն թռչկոտաց: Երբ քաղցեց, վազեց մսի մօտ, կերաւ, կրկին եկաւ սև եզան պողերի, պոչի, պնչի հետ խաղաց:

Այս կեր ու խնդումը շարունակեց մի եօթը օր, մինչև որ կարմրի միսն էլ վերջացրաւ: Մնաց էլի կանաչ խոտի յուտով. երկու օր շարունակ եզան հետ շրջում էր արօտներում ու ամաչում իւր փորացաւը նրան յայտնի: Խոտ պոկելով ու ծածուկ թափելով բերանը յոգնել էր:

—Այս ինչ աւելորդ նամուս է, որ ես բանացնում եմ, ասաւ ինքն իւրան գայլը. չաղ ու պարարտ եզը կողքիս գրօսնում է, ես մսի կտորի համար յոգոց ու թառանչ եմ քաշում: Աւելի լմու չի մի հնար մտածեմ, ասեմ փորս ու գլուխս ցաւում է, տեսնեմ ինչ կասի:

Այսպէս վճռելով հեռացաւ, նստաւ քիչ հեռու ու թոյլ օտներով դէպի եզն եկաւ, անխօս, անձայն պառկեց խոտի վրայ ու մռնչաց:

—Այդ ինչ է պատահել քեզ, Ծաղկակոխ ընկեր, ինչու ես մռնչում:

—Ո՛հ, էլ մի խօսեցնիլ, սաստիկ վատ եմ, փորս ու գլուխս միասին են ցաւում: Ծնօտներս բռնուել

են, բերանս չեմ կարողանում բանամ: Երևի այս արօտներում թունաւոր խոտ կար, որ ինձ վնասեց:

—Բն ինչ է լինելու դրա ճարը, չգիտես, միամիտ հարցրաւ եզը:

—Է՛հ, ինչ պէտք է լինի, հիւանդ կեանքը այն գլխից ատելի է ինձ. եթէ քու հոգսը չլինի, եթէ իմանամ, որ կարող ես անձդ գայլերի դէմ պաշտպանել, այսօր եեթ կուզեմ շունչս փչել:

—Վն, այդ ինչ ես ասում, սրտացաւութիւնով վրայ բերաւ սև եզը, առանց քեզ մի բոպէ կեանք շունենամ: Ասա, ինչ սր սիրտդ ուզում է, գնամ, ճարեմ. աղաչում եմ, քնջ կաց, դրանք հեշտ ցաւեր են, շուտով կանցնեն:

—Է՛, սրտեղ շուտով կանցնեն, ինձ սպանում են ս... լալազին թոնթորաց գայլն ու պինչը արօտի մէջ թաղեց, սուտ փշշացրաւ: Սև եզը կողքին նստաւ, իւր սէրն ու երախտագիտութիւնը ցոյց տալու համար սկսաւ լիզ տալ գայլի աչքերը, ահանջները, քներակները: Օրը իրիկնադէմ էր ու արևը դուրեկան, խելառ եզը գայլի փորացաւը իւր համար դարդ շինելով նստած որոճաց, որոճաց, մինչև որ բերանը յոգնեց ու քնեց:

Գայլը եզան փշշոցը որ լսեց, աչքերը պլըզացրաւ. սրտի ցնծութիւնից օղիկ-մօղիկ գալով տեղիցըն զգոյշ վեր կացաւ, բոլոր ուժն ու թափը հաւաքած վրայ ընկաւ եզանը, պկիցը պինդ ու ամուր բռնեց, առանց թափէթափ տալու սուր ժանիքներն այնպէս խոր ցցեց, որ եզը հազիւ կարողացաւ աչքերը մի անգամ բաց ու խուփ անել. յուսահատ

խոխոց հանելով թուլացաւ սրտացաւ գայլի ճիրան-
ների տակ ու ստները մեկնեց:

Ազգային առածներ

Խելառ եզների գերեզմանը գայլի փորն է:

Խեկն հացը՝ խելօքին փորը:

Ազուաւի տեսած սերմը ճիրոջն օգուտ չի:



Է՛ Լ Ի ՈՂՈՐՄ Ի ՅՕՐԸ

(Ազգային առակ)



Վաղ ժամանակ մի մարդ կար շատ ազահ ու
քաջ: Սա ինչ գրփողութիւն ու գէշութիւն ասես, որ
չէր բերել իւրանից սկարների գլխին: Մինի հողն
էր խել, իւրան համար արտ ու հանդ շինել, մինի
ձորն ու ջուրն էր սեպհականել ձորն ի վեր անթիւ
ջաղացներ սարքել: Հող ու ջրով ամենի տէր ու տի-
րականն էր դառել. իշխանն էլ էր նրա ոտը գալիս,
վարնորդն էլ. Բացի կարողութիւնից օր օրի վրայ
զարմով ու սերունդով էլ էր հարստանում, գետի բե-
րանից սկսած մինչև ակը նրա որդիքն ու թոռներն
էին տիրապետում:

Ինքը հարիւր տարեկան աւել կը լինէր, էլի
աչքն անկշտում. ինչքան էլ իւրանից դժբաղդացած-
ներն անիծում, նդովում էին, նա ուշ չէր դարձնում,
չարունակում էր զրկողութիւնը: Համարեա թէ դա-
ռել էր աշխարհի ամենահարուստը:

Բայց աշխարհի հետ սով է յաւիտեան եղբայր
դարձել, որ ջաղացատէրը դառնար: Ծերութիւնից

կծղեց, վէր ընկաւ, հիւանդացաւ. նոր իմացաւ որ աշխարհի հարստութիւնը ոչինչ բան է: Գիտում էր որ իւրանից վնասուածները յաւիտեան շարունակելու են իւրան նդովելը, հայհոյելը: Հոգեվարք էր, երկար խրընդում էր ու չէր մեռնում: «Կարելի է, մտածեմ էր նա, Աստուած ուզում է, որ արած անիրաւութիւններիս համար տանջուեմ... այդ ս'ը կը գնայ... եթէ ամեն մի գրփողութեան ու գէշութեան համար մի բոպէ խրընդալու լինիմ, հոգեվարքս տարիներ կը քաշի: 25, լաւ կը լինի ժառանգներիս պատուիրեմ, ինձանից ետը իւրանց գործը այնպէս տանեն աշխարհում, որ հոգուս տեղ ու դադար լինի միւս կեանքում»:

Կանչեց ընտանիքի բոլոր անդամներին իւր մահ-
ճի շուրջը և ասաւ.

— Միրելի որդիք ու թոռներ, այսօր ուզում եմ ձեզ յայտնել իմ վճիռն ու կտակը: Վաղուց շունչս փշած կը լինէի, եթէ անողոք խիղճս հանգստութիւն տար... ինձ օր ու գիշեր շամփրում, տանջում է: Եթէ այսպէս իմանայի յափշտակութեան վերջը, ոչ մի պայմանով հոգիս այնքան չէի գրկիլ: Միակ վաստակը, որ տանելու եմ այս աշխարհից, նդովքն է ու անէծքը: Վայ իմ մխիթարութեանը...

Լաց եղաւ հիւանդը և խօսքը շարունակեց.

— Մինչև հիմի ես էի կառավարիչը բոլոր հարբստութեանս ու կալուածներիս, նախնական սովորութեան համեմատ իմ տան կառավարչութիւնը մահիցս ետը անցնելու է քեզ, իմ աւագ որդի: Մի բան՝ որ ես երկար փորձուելուց ետը իմացայ, շատ լաւ կը լինի, որ դու այսօրուանից իմանաս, քանի ջա-

հէլ ես.— այդ այն է, որ ինչքան գրփես, գրկես, աշխարհի ապրանքն աշխարհում է մնալու: Ի սէր Աստուծու, այնպէս բան բռնիր, այնպէս վարուիր, որ քո պատճառով մի բերան ողորմի լսեմ ժողովրդից, որին ես այնքան գրկել եմ: Խեղճ մարդիկը երբ ջադացը ազուն էին բերում, հին սովորութիւնով 20 խանից մէկն էին շնատ տալիս. վայ հոգուս, ես չինեցի 10-ից մէկը:

— Հայր իմ, սուրբ է քո կամքը, խօսեց մեծ որդին, ու չօքեց աջը համբուրեց: Քեզպէս երախտաւոր նահապետին ողջ-տնովի յաւիտեան կը սիրենք ու կը պաշտենք. ամեն մի թոռ ու ծուռ քո անունը պարծանքով կը յիշի. միամիտ կաց: Քու ասը օտար մարդկանցից է, վախենում ես շարունակեն քեզ անիծելը: 25, հայր իմ պաշտելի, անհոգ կաց, ես այն պէս բան կը բռնեմ քու մահից ետը, որ ժողովրդի ողորմին ու օրհնանքը գերեզմանիցդ անպակաս լինի:

Հիւանդը պինջը չուած, աչքերը պլզացրած, բոլոր ուժը ժողոված պատրաստուեց որ լսի որդու անելիքը: Որդին շարունակեց.

— Իմ շատ անելիքներից հէնց միայն միին ասեմ: Եթէ դու ազունատէրերին ջադացի դռանը կանգնացնում էիր, քու շնատը (տասանորդը) առնում, ետով ներս թողնում, ես, հայր իմ, թողիլ էլ չեմ ջադացին մօտենան:

Գետի այն կռանը՝ կամրջի խելումը կառնեմ իմ ուզած շնատը՝ 10 խանից չորսը և ոչ թէ 10-ից մէկը, ետով իրաւունք կը տամ ջադաց մտնեն ու ազունն ազան:

Երկրորդ որդին մօտեցաւ հօր աջն առաւ ու կանգնեց ասաւ.

— Հայր իմ, քու կամքը ինձ համար սուրբ է, վճռիդ համեմատ հնազանդ կը լինիմ մեծ եղբօրս: Բայց եթէ տան կառավարչութիւնը իմ ձեռք ընկնի, եղբօրս չափ դանդաղ չեմ լինիլ: Օրինակ՝ ինչ հարկաւորս է դուր ժամեր կորցնեմ. կամըջի խելում կանգնեմ, ինչ է աղունատէրը պէտք է բերած ցորենը չափի, որ իմանամ քանի խան է ու 10-ից իմ բաժին չորսը ստանամ: Դա միամտի գործ է. ես չեմ անիլ: Մի բան հաստատ գիտեմ, որ վարնորդը, գլխաւորին մի բեռ ցորենը հատիկով ուտողը չի, անպատճառ պէտք է աղայ, ալիւր շինի: Այդ գիտեհալով ուղղակի պայման կը դնեմ, որ էջի վրայ բարձած հախներից մէկն ինձ տայ: Եթէ կը յօժարի, լաւ, թո՛ղ իւր մի հակն աղայ ու տանի, եթէ չէ, գլուխն իւրանը քարը, ուր ուզում է՝ գնայ: Նա հօ մի երկու բեռ ցորենի համար ջաղաց շինողը չի: Ասեմք շինեց էլ, ո՞վ ջուր կը տայ, չէ՞ որ գետը տակից մինչև ակը մեր սեպհականութիւնն է: Ողորմի ես ուզում, հայր իմ, այդ ժամանակ գերեզմանումդ հանգիստ պարկէր ու լսիլ:

Հերթը երրորդ որդունն էր, կուսցաւ հօր աջն առաւ ու ասաւ.

— Հայր իմ, ինչպէս ուզում ես ինձ վրայ բարկացիր, եղբօրտանցս ոչ մէկի ասածի հետ համաձայն չեմ:

Եւ ետով գլուխը թափ տալով բարձրաձայնեց. — Այդ ինչ խելք է, որ դրանք ուզում են բանացնել, մինն ուզում է 10 խանից միայն չորսը վերցնի, միւ-

սը երկու հակներից մէկն էլ տիրոջն է տալիս, այս ինչ աւելորդ սրտացաւութիւն է. ես չեմ հասկանում: Եւ դեռ դրանք ասում են, որ քեզ սիրում են, այդպէս բաներով ինչ ողորմի կարող են վաստակել քեզ համար: Եթէ մեր տան կառավարչութիւնը իմ ձեռն ընկնի, այնպէս բան կանեմ, որ, հայր իմ, գերեզմանդ ուխտատեղի դառնայ ժողովրդի համար: Աղունով բարձած էջը, որ կը գայ ջաղացիս դուռը, էլ ինչո՞ւ եմ թողնում, որ ետ գնայ, գլխիս ձի է քացի տուել, թէ՛ խելքս հացի հետ եմ կերել: Սյն ցորենը մեր հանդերից չի քաղւած, մեր գետի ջրով չի հասած, այն բեռնակիր էջը թէ՛ ջուրին մեր հանդի խտերով չեմ ապրւած. . .

Դեռ երրորդ որդին խօսքը չէր աւարտել, հիւանդի մեծ թոռը առաջ խիզախելով գոռաց.

— Այդ ինչ սլնդի խոստումներ է, որ անում էք. հօ դրանով պապիս տունը քանդում էք. չէ, պէտք է զօրեղ մնայ: Պապիս համար ողորմի վաստակելու համար ինչ էք մանր բաների ետեից ընկնում, շհատ, հակ, էջ, ջորի բերան բերելով կանգնողներիս գըլխացաւանք պատճառում:

— Բաս ինչ ես ուզում, ինչ ես անելու, հարցրին ամենքը:

— Ես ինչ եմ ուզում, գոռոզ ու վստահ վրայ բերաւ սրտամեծ թոռը՝ վզից հրացանը հանելով, եթէ մեր տան իրաւունքը իմ ձեռն ընկնի, ես այնպէս բան կանեմ, որ պապիս գերեզմանի փոշին տանեն, սրբութեան տեղ ջուր անեն խմն:

— Ախր ինչ կանես է, հարցրին նորից. կալուածների ու գանձերի կառավարչութիւնը այն կողմը

մնայ, հէնց միայն այն ասա,— Չաղացն ազուն բե-
րողները հետ ինչպէս կը վարուես:

— Իսկի կը թողնեմ ազունատէրը Չաղացից շունչը
վրէն տուն գնայ. բն ամօթ չի իմ տղամարդու-
թեանը. բն այս հրացանը ուսիս զնր կմ ման ամոնմ:

— Զն... այդպէս, ես չէի իմանում, հանգիստ
կերպարանք առնելով խօսեց հիւանդը: Եթէ սը-
ղիք, մտաղիք էք այդ հանգի բաներ անել, ես կա-
րող եմ այսօր ետթ հանգիստ մեռնել ու յաւիտեանս
յաւիտենից օրհնանք ու ողորմի լսել ժողովրդից...

Ասա ծերունին, յոգնած աչքերը փակեց ու
քիչ խախտալով տանջուած շունչը փչեց:


Տան ծառաները, որոնք անկիւններում կուշ
եկած լսել էին բոլոր խօսակցութիւնը՝ զողով ու լա-
լով շնչացին՝

Հազար բերան ողորմի հօրը,

Ո՛չ ու փուշ լինին որդիքն ու թուր:

Ա ո ա ծ

Ալին որ տեսնես, Վալին կը մտռանաս.



ԽՈՏՈՒՄԱԿԵ ԽՈՏՈՒՄԱԿ

(Ազգային առակ)



Մի լիճ կար՝ ներս ու դուրսը լի շնաւորնե-
րով. սողուն ասես, գեռուն ասես դժվժում էին ամեն
կողմ, որը ազգալով ծաղկից էր կենում, հիւթ ծծում,
որը սովածութիւնից բզգալով օգի մէջ ման ու ման
անում: Չայնաւորներից երկուսը՝ ճուակն ու գորտը
ամենասրտաբացն ու ուրախն էին. նրանք շարունակ
թռչկոտում էին ու երգում, մինը գեռունների համար
էր ճուռում, միւսը սողունների համար կռկում: Սը-
րանց երգելու միջոցին միւսներից՝ որը լուռ ախանջ
էր զնում, որը քթի մէջ ծոր բռնում. ծանրագոգոթ
կրիան անգամ գլուխը ջրից հանելով ափին նստում
էր ու սաղ արած լսում:

Բայց նրանց մէջ կային խայթիչ ու թունաւո-
րիչ արարածներ էլ, ինչպէս կարիճն ու օձը: Մէկից
սողուններն էին սարսափում, միւսից գեռուններն ու
պղտճները. ամեն մինը իւր ցեղի անն ու մահն էր.
սով կարող էր նրանց անվախ մօտենալ:

Երկար ժամանակ կարիճը մեն մենակ մնալուց
ձանձրացել էր. չէր գիտում, ո՞ւմ մօտենայ, որ շան-

Թի: Իւր ցեղակիցներից երեսատեղը հատել էր, մի օր հեռուից տեսնելով գորտի լիտիկ մէջքը մօտեցաւ սողունների երգչին և ասաւ.

—Քաղցրաձայն գորտ, մի բան եմ ասելու:

Գորտը իւր խոշոր աչքերով նայեց դիմացի խօսողի պատկերին և սիրով պատասխանեց.

—Յանքի լինի մեր տեսութիւնը, կենպոչ հարևան, մէկի տեղ երկուսն ասա:

Կարիճն սկսաւ.

—Իմ կարծիքով դու ամենախելօքն ես ձեր ցեղի մէջ. սոսա, տեսնեմ, մինչև երբ սողուն ու զեռուն իւրար կշտի պէտք է ապրեն լճի մօտ ու իւրար անծանօթ մնան: Աստուած խելքն ու բանականութիւնը մի՞թէ նրա համար է տուել, որ իւրար խորթ աչքով նայեն, իւրարից հեռու մնան: Ինչո՞ւ նախանձին ու յիմարութեան լսելով իւրար մէջ խտրութիւն գնենք, քանի որ Արարիչը մեզ միաւորելու համար մեր աւունները միատեսակ է ստեղծել. տես՝ սողուն, զեռուն: Այս հանգամանքը նրա համար է, որ մենք իւրար սիրենք, մինչև անգամ խնամի դառնանք, աղջիկ տանք, աղջիկ առնենք:

Գորտը չկարաց իսկոյն իմանալ թէ ինչ պտուղ է իւր հետ խօսողը. միամտի պէս քաղցր լեզուից գրաւուեց ու ասաւ.

—Չատ լաւ առաջարկութիւն է արածդ, հաւան եմ. ես էլ զարմանում եմ, թէ ինչո՞ւ մի լճի բնակիչներս ցեղական չնչին պատճառներով իւրարից հեռու, սրտով անծանօթ ենք մնում: 2^է որ կարող ենք մէկ մէկու օգնել, զուարճացնել, կարճատե կեանքներս քաղցր ու խաղաղ անցկացնել: Այդ բարեկա-

մութիւնը, ուղիղ ես ասում, հարկաւոր է. ա՛ժէ, որ դրա օրինակը մենք հասկացողներս տանք. մեզ հետևողներ շատ կը լինին:

Ասաւ կռկռան գորտն ու իբրև նշան համաձայնութեան քներակներն ուռցնելով լիարբերան մի կուշտ կռկուաց: Սողուն թէ զեռուն ամենն էլ նրան նայեցին և ապշելով զարմացան, որ թունաւոր կարիճին նրա կողքին տեսան. . .

Կարիճն ու գորտը իբրև նորաթուխ բարեկամներ մէկ երկու օր իւրար հետ շատ սիրով զրոյց արին և ընկերութեան ուխտը այդ միջոցներում կռեցին. առաջին պայմաններն էին՝ անխաղաղա սէր և փոխադարձ օգնութիւն:

Բայց կեռպոչ ընկերի խորհուրդն ուրիշ էր. . .

Մի իրիկնադէմ գորտը երկար կռկուալուց յոգնած պպրղած էր լճի ափին: Կարիճը կեռ պոչն իւրան հաւաքած սորոք տալով մօտեցաւ նրան և ասաւ.

—Գիտես, քաղցրաձայն ընկեր, ի՞նչ նորութիւն կայ:

—Ի՞նչ նորութիւն, կեռպոչ ընկեր, ասա՛, լըսում եմ:

—Մեր ընկերութեան վրայ շատերն սկսել են ըխել, զարմանալ. կարծում են թէ մենք մշտական բարեկամ չենք մնալ, նախանձից ուզում են արաքուեն, որ մենք այսպէս սիրով ենք: Արի նրանց ջգրու մի բան անենք:

— Ի՞նչ անենք, հարցրաւ գորտը:

— Ահա թէ ինչ, թե թեի տուած ւրի գնանք դիմացի ավը, լիասիրտ գրօնենք, զուարճանանք: Մեզ նախանձողներին գիտում եմ այդ բանը շատ տեղ կը գայ, աւելի լաւ: Բայց ափսոս որ լողալ չեմ գիտում. եթէ ջուրն ընկնեմ, վախում եմ՝ խեղդուեմ:

Միամիտ գորտը նայեց ընկերին և ասաւ.

— Ոչինչ բանի համար ի՞նչ ես հոգս անում, սիրելի կեռապոչ, ի՞նչ անենք, որ լող տալ չես գիտում. ես այստեղ չեմ, անհոգ կաց: Քու սրտի ուղեկիքը դիմացի ավ գնալն է. ինչ գժար բան է, ւրի, շալակիս նստիր, տանեմ ու բերեմ:

— Այ գլուխդ ապրի, քաղցրաձայն ընկեր. ինչ բարի սիրտ ունիս: Ես բոլորովին մոռացել էի, հաւատա, որ կարելի է քու մէջքին նստել ու ապահով անցնել: Չատ շնորհակալ եմ այս ծառայութեան համար, կաշխատեմ փոխարէնն անպատճառ հատուցանել:

Այս ասաւ կարիճը և կկրգած գորտի թիկունքըն ելաւ:

— Պինդ կաց, լաւ նստիր, կեռապոչ ընկեր, գոռաց գորտը. թաթիկներդ հուպ տուր, որ չընկնես:

Այս պատուէրները տալուց ետը կռկռան ընկերըն ընկաւ լիճը և ջրի երեսին ոտնալող տալով գնաց:

Լայն թիկունքի վրայ կարիճը բազմած ցնծագին նայում էր աջ ու ձախ և զուարթանում:

Յանկարծ կարիճի սիրտը մի բան ուզեց: Նրա ուղեկիքն էր, որ գորտի լիստիկ մէջքը կծի, խայթի: Սրտին չկարաց ընդդիմանալ, խայթը հանեց ու կծեց: Գորտի կաշին ցաւեց, բայց ուշ չզարձրաւ. «կարելի

է թաթիկները ամրացնում էր, որ վէր չընկնի» ասաւ ու ոտնալողը շարունակեց:

Խայթը երկրորդ անգամ մէջքը խրեց: Թէպէտ խիստ ցաւ տուաւ գորտին, բարկութիւնն էլ շատ եկաւ, բայց էլի համբերելով վճռեց միայն մէջքը թափահարել, որ զգուշանայ կարիճն ու իւր տեղը խելօք նստի: Եւ գորտը մէջքը թափահարեց առանց ձայն ու մուռնչ հանելու:

Արդէն մօտենում էին ավին:

Կարիճի նպատակն էր սատկացնել գորտին. նկատելով նրա հանդարտութիւնը՝ կարծեց թէ խայթը պնջել է, չի ազդում. «չէ, պէտք է թոյնով սրա կաշուի տակ լցնել ուռցնել, որ ավ հասնելուն պէս սատկի»:

Ասաւ կարիճն ու որքան ուժ ունէր, պինդ խրեց գորտի փափուկ մարմնի մէջ: Սողունների երգիչը շանթահարի պէս սեփ սեփ արաւ և դառնացած սրտով գոռաց.

— Կա՛րիճ. . .

— Ի՞նչ է, քաղցրաձայն ընկեր. ի՞նչ:

— Չոռը քեզ պէս ընկերի պի՞նչ. . .

— Ինչի՞ բարեսիրտ ընկեր, ինչ է պատահել, անմեղ ձևանալով հարցրաւ կարիճը:

— Ասածու կրակ է պատահել գլխիդ ու արե՛լիդ: Մէկ չէ, երկու չէ, ինչ ես խայթում ու շանթում մէջքս, ինչ վատութիւն եմ արել քեզ. լաւութեանս փոխարէնն այս է: Արարմունքդ ընկերութեան սր պայմանի մէջ է գրուած. չես ամաչում:

Կարիճը գորտի մէջ այդքան ոյժ չէր սպասում, կարծում էր շուտ կը թուլանայ: Ուղենալով գորտի

բարկութիւնը մեղմացնել և մի կերպ ցամաքին հասնել, կակուղ լեզուով վրայ բերաւ.

—Քողցրաձայն ընկեր, ներողութիւն արա, արարմունքովս մեղաւոր եմ քու առաջ: Բայց եթէ բանի էութիւնն իմանաս, այնքան չես նեղանալ: Ինչպէս երևում է, դու անտեղեակ ես մեր ցեղի բնութեանը: Կարիճների սովորութիւնն այնպէս է, որ երբ մի փափուկ մարմին են տեսնում, նրանց մէջ մի անզուսպ փափագ է ծնւում, որ անպատճառ մօտենան և իւրանց խայթը փորձեն: Այդ բանը նրանց համար բընական պահանջ է, մինչև դրանով սիրտները չհովացնեն, հանգիստ չեն մնալ: Աստծուն է միայն յայտնի, թէ քեզ ինչքան եմ սիրում. ուղեցի հիմի փորձել խայթս, ուրիշ ո՛չ չինչ: Այս խոստովանութիւնից ետք, յուսով եմ, քաղցրաձայն ընկեր, կը ներես արարքս իբրև բնական թուլութիւն ու առանց ուշ դարձնելու կը շարունակես լող տալը. ահա ասին մօտեցել ենք:

—Այդպէս հա՛, կեռպոչ ընկեր, վրայ բերաւ հանդարտւած գորտը. ես կարծում էի թէ չարամտութիւնով ես արել, էնդուր բարկացայ: Ա՛խր քեզ պէս ընկերից նենգութիւն սպասելը՝ խելքի մօտիկ բան չի: Քու արածը ուղիղ որ բնական պահանջ է ու ներողութեան արժանի՝ թէկուզ թշնամու կողմից, իսկ ես հօ քու սրտակից բարեկամն եմ: Ինչ ասել կուզի, որ ներում եմ. բայց մի բան աստուծում եմ, որ այսքան ժամանակ ընկերութիւն անելով մի օր միջոց չունեցայ քեզ ասեմ, թէ ինչ սովորութիւն են ունեցել իմ պապերը: Նրանք էլ բնական պահանջով հետևում էին այդ թուլութեանը: Ի՞նչ ասել կուզի,

դու իբրև սրտակից ընկեր, կուզես տեղեկանալ իմ պապական սովորութեանը:

—Ի՛նչպէս չէ, ի՛նչպէս չէ, հաւանութիւն տուաւ կարիճը գորտի առաջարկին, ամեն ցեղ իւր բնական յատկութիւնն ունի և յաւիտեան անկորուստ պահում է: Էլ ինչի՞ ընկեր եմ, որ չհետաքրքրուեմ քու պապական սովորութիւնով: Պատմիր լսեմ:

—Պատմելով լաւ չեմ կարող հասկացնել. կուզես օրինակով ցոյց տամ:

—Դրան էլ դէմ չեմ, քաղցրաձայն ընկեր, օրինակով ցոյց տուր:

—Կեռպոչ ընկեր, խօսեց գորտը հանդարտ ձայնով, պէտք է իմանաս, որ իմ պապերը ջրի երեսին շատ լաւ էին լողում:

—Հաւատում եմ, կարելի է, հաստատեց կարիճը:

—Մենակ այդ չէ, նրանք ջրի տակն էլ լողալու սովորութիւն ունէին: Ես հիմի իբրև նրանց արժանաւոր թու, ուզում եմ նախնական սովորութիւնը փորձեմ, տեսնես թէ ի՛նչքան լաւ գրօսանք է: Դէ, պինդ կաց, կեռպոչ ընկեր, վէր չընկնես:

—Վա՛յ, վա՛յ, այդ ի՛նչ ես ասում, քաղցրաձայն ընկեր, սրտապատառ ճուսաց կարիճը. ի՛նչ վատ սովորութիւն են ունեցել քու պապերը: Թող ի սէր Աստծու, հիմի ժամանակ չէ, ետով կը փորձես, աղաչում եմ, թո՛ղ: Յամաքը մօտիկ է, լո՛ղ տուր, հասնենք. ջրի տակ շունչս կը կտրուի, կը խեղդուիմ: Յատուկ խընրում եմ, գորտ ընկեր, ձեռ վեր կալ այսօր քու պապական սովորութիւնից. աղաչում եմ լո՛ղ տուր, ցամաք հասնենք:

Գորտն առանց ուշ դարձնելու նրա աղաչան-

քին երեսը թերեց դէպի լճի խորքը և ասաւ.

— Զուր տեղը լեզուդ մի ցաւացնիլ, քեզ լսողը չեմ.
լու հասկացայ, ինչ պտուղ որ ես: Խոտորնակին խո-
տորնակ է հարկաւոր. ես այնքան էլ յիմար չեմ, որ
քեզ պէսի ձեռին իշի մարտիրոս դառնամ: Ի՞նչ օ-
գուա աշխարհին, որ քեզ շարակած ափը հասցնեմ.
այսուհետև գնա, որտեղ քունն ասես, այնտեղ էլ
իմը . . .

Ասաւ գորտն ու ոտները չռելով սուզուեց ջրի
տակը: Գարիճը սարսափահար եղած պոկուեց գորտի
մէջքից ու մնաց ջրի երեսին բալդի-բալդի անելիս:
Ալիքների մէջ դէս պարանուեց, դէն պարանուեց,
լողալու շնորհք շունենալով տեղն ու տեղը խեղդուեց
գնաց:

Ա ռ ա ծ ն ե ը

Սոխի դէմ սխտոր պէտք է թակել:

Օձն իւր շապիկը կը փոխի, բնութիւնը ոչ:

Էծն ինչ արաւ թրիմին, թրիմն էլ արաւ էծին:



ԱՅԳՊԷՍ ԷԺԱՆ ՉԻ

(Ազգային սոսակ)



Մի գայլ ուզիլը երեք օր էր ոչինչ չէր կերել.
նիւթը կտրած շրջում էր. քաղցից խեղճի փորը եկել
մէջքից էր կպել: Գոչը քաշ տալով սար ու ձոր շա-
փում էր ու թառանչ հանելով ասում.

— Հախս է այս պատիժը, որ ես կրում եմ. Աս-
տուած, ինչո՞ւ առատութեան միջոցին քու ողորմու-
թեան արժանիքը չէի իմանում: Առաջ տասն օրուայ
բաժինը մի ժամում էի կլանում, այժմ այնպէս նեղ
տեղն եմ, որ քարից կակուղ ինչ ձանկա ընկնի, կու-
տեմ ու Քեզ փառք կը տամ:

Այսպէս խօսելով գնում էր գայլը գլխակախ՝
անկարծ տեսաւ իւր աղաքին մի շուն: Զճճն եմ ա-
սում է՝ . . . չաղութիւնից մէջքի մազը լիւլխում,
օրօրում էր: Զան փափուկ կողքերի վրայ գայլի
սրտի ջուրը գնաց: Մէկ ուզեց այդ գաղաղած ժա-
մին վրայ ընկնի, գայլի հանգը քրքրի ու կուշտ փո-
րով ուախ՝ մէկ էլ միտքը փոխեց մտածելով՝ վա՛յ
թէ ուժս չպատի, այն ժամանակ . . .

Չունը գուռ արջի չափ բան էր, եթէ ուզենար, գայլին մի ըսպէում կը բղէր, կը խեղդէր: Գայլն այդ լաւ էր գիտում, դրա համար էլ պոչը ժաժ տալով նրան մօտեցաւ.

—Ա՛խ, դաշտեցի ազգական, այդ դ՞ն՛ էս. ի՞նչ արմանալի տեսք, սիրուն կերպարանք ես ստացել: Կարծեմ քու պապերը անտառումն ապրելիս, իսկի այսպէս չազ չին եղած:

—Ա՛ն, բարով տեսանք քեզ, սարեցի ազգական, սրտով ուզենայի, չէի կարող քեզ պատահել, որ զըրոյց անելով արիւնակցութեանս կարօտն առնեմ: Ինչ որ ծմակից հեռացել են պապերս, սարեցի ազգականներիցս ոչ մինին չեմ տեսել: Հը՛, մնց էս:

—Այ, այսպէս եմ, դաշտեցի ազգական, ուրիշ մնց պէտք է լինիմ. չորրորդ օրն է, բերանս նիւթ չեմ դրել: Քեզ վրայ նայելով քէֆս գալիս է. ա՛յ, ի՛նչ է նշանակում հանգիստ, ապահով կեանք: Երանի՛ քեզ:

—Ինչո՞ւ ես ա՛խ քաշում, սարեցի ազգական, ո՞վ է մեղաւորը. մեր պապերի հետ ձերոնց էլ մարդամէջ հրաւիրեցին, որ հանգիստ իւրանց համար կեանք վարեն, ինչո՞ւ գոռոզութիւն արին, անբնակ սարից, խոր ծմակից դուրս չեկան: Զուր ես իմ չաղութեան վրայ բխում, նախանձում: Եթէ պապերիդ սխալմունքը խոստովանում ես, աչքիս վրայ քեզ օգնելը այսօր ևեթ բարեխօս կը լինիմ տիրոջս դրացն՝ մօտ և դու ինձ նման կունենաս խաղաղ, հանգիստ կեանք: Ա՛խ քաշելդ դուր է, հէնց հիմի ւրի գնանք ինձ հետ:

—Ո՛ւր, սիրուն ազգական, հարցրաւ գայլը աղերսող աչքերով:

—«Քա՛ղա՛ք, մարդամէջ, սարեցի ազգական. դաշտ տեղերում, գետերի ափին շարուած են մարդկանց շինութիւնները ու լուսաւոր աշխարհքի վայելքն ու երջանկութիւնը: Մեր դրացու մօտ եթէ երկու օր ապրես, այնպէս կը շաղանաս ու կը փոխուես, որ բարեկամներդ անգամ չեն կարող ճանաչիլ: Զարմանում եմ, թէ ի՞նչ մտածեցին քու պապերը, որ բարի մարդկանց խնդիրն ու առաջարկը մերժեցին, իմ պապերից բաժանուելով մնացին ամայի սարերում ու ձորերում: Ի՞նչ օգուտ ստացան այդ անտեղի յամառութիւնից: Զեր քաշած կեանքի մասին լսել եմ. օ՛, ի՛նչ պատուհաս բան են ասում. զարմանում եմ, թէ ի՞նչպէս էք համբերում: Պատմում են, որ դուք առաւօտից մինչև իրիկու շարշարվում էք մի սարից միւս սարը վազվզելով, որ ի՛նչ է, փորնեղդ կշտացնէք: Զեր ճանկած-գտածը մի կաղ նապաստակ է լինում կամ լղար ոչխար, այդ էլ հազար ա՛հ ու դողով էք ուտում, որ ուրիշ գազան չգայ, խլի: Ինչքան լսել եմ, դուք ձեր կեանքում հանգիստ սրտով մի կտոր բան չէք վայելում. միշտ կռիւ, միշտ անբաւականութիւն: Եթէ իրաւ այդպէս է, ուրեմն ձեր ապրուստը իսկական դժոխք է, և ոչ թէ կեանք:

Հէնց օրինակը քեզ վրայ բերենք. այդ ի՛նչ ես դառել. չնայած, որ իմ արիւնակիցն ես, բայց այնքան բարակել ես, որ եթէ փչեմ, վեր կընկնես: Օրերով սոված մնացողն ի հարկէ այդպէս կը լինի: Քու պապերի մեղքն է, ս՛ չինչ չկայ, քաշի. ասած է՛ պապերը շոր կերան, թոռների ատամներն առան. հէնց այս առակը ձեր գլխին է կատարվում:

«Ի՛նչ մի ըսպէ քեզ թող, ինձ մտիկ. տես, ի՛նչ

գուարթ ու բաղդաւոր եմ: Այս բոլորը իմ խելօք պապերի շնորհքն է, որ վաղօրօք խելքի եկան, անտառի ծառերը թողին, բանական մարդկանց հետ գործ բռնեցին: Պեանք որ ասել են, մերն է: Յերկք է, որ մտքովս մի համով կերակուր անցկենայ ու սիրտս ուզի, իսկոյն պատրաստ է: Ճաշուայ ուտելիքս մի տեսակ չիմանաս. լակելուն ջոկ է, կրծելուն ջոկ, ուտելուն ջոկ: Միս, ոսկոր, կերակրաջուր այնքան են թափում աղաքս. որ աչքերս շաղում են, չեմ դիտում, սրն ուտեմ, սրը թողեմ: Սուտ հօ չի ասած թէ՛ ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է: Իմ ապրուստը սրտեղ, քունը սրտեղ. տանից դուրս եկողը ինձ է փաղաքշում, մինը ձեռն է գլխիս քսում, միւսը մէջքս է շոյում, երբօրդը պոչս թափահարում, չորրօրդը վրէս ժպտում ու թուշը պնչիս կպցնում... Այսպէս բաներ դու սարում, ծմակում ո՛ւմնից կը տեսնես:

Բնակութիւնից հեռու մեծացած գայլը շան ճարտար լեզուի վրայ խելքահան եղած թուքը կուտ աւելով լսում էր: Պեմում էր կենում սիրտը վեր խմելով շանը երանի տալիս, իսկ իւր պապերին նդովում, որ բարի մարդկանց առաջարկը մերժելով մնացել են խաւար ծմակի մէջ ու իւրան զրկել լուսաւոր աշխարհի աննման վայելչութիւններէր: Հատ ան ու վրէշ անելուց ետը մինչև անգամ լաց եղաւ ու վերջը հանդարտուելով շանն ասաւ.

— Դաշտեցի ազգական, շատ շնորհակալ եմ քու զրուցից. նոր եմ իմանում, թէ ինչ փառքերից եմ զրկուած եղել մինչև հիմի: Խոտակեր անասունն անգամ կը հասկանայ, որ մարդկանց մէջ ապրելը հա-

րիւր անգամ ձեռնտու և շահաւէտ է քան ծմակի մամուտ ծառերի տակ թրև դալը: Խոր գնան իմ պապերը, որ ինձ անբաղդացրել են: Քու կենցաղավարութիւնը իմանալուց ետը զլուսս քարս՛վն եմ տուել, որ էլի սարն ու ծմակը միտ բերեմ: Որ մեռնիմ, չեմ գնալ: Միայն դու, սիրելի ազգական, ինձ այս բանը լաւ հասկացրու: Մարդիկ որ այդքան լաւութիւն են անում ձեզ, կուշտ ուտացնում, խմացնում են, նա փոխարէնն ինչ են պահանջում ձեզանից: Աշխարհս մի բանով անիծուած է, որ որմինի ձրի ոչինչ չեն տալիս. այդքան ճաշ ու փայփայանքներ որ ստանում ես տիրոջիցդ, փոխարէնն ինչ ծաւայութիւն ես կատարում, իսկի ձեր մէջ պայման, բան չկայ:

— Ի՞նչ պայման, սարեցի ազգական:

— Պայման էլի՛, չես հասկանում:

— Հասկանում եմ. բայց ուզիղն ասած պայմանի անունը որ լսում եմ, ծիծաղութալիս է:

— Ինչո՞ւ, դաշտեցի ազգական, չի՞նի հարցս յիմար բան է թվում: Ե՛հ, ի՞նչ արած, պէտք է պակասը բաշխես. ծմակներում եմ ապրել, իմ կուպիտ խելքն էլ այդքանն է կտրում:

— 2է, ո՞վ է ասում, քու հարցը յիմար հարց չէ, բայց իմ տիրոջ հետ ունեցած պայմանն այնքան թեթեւ բան է, որ պարտականութիւն անուանելը չաժի: Որ լաւ նայենք, կը տեսնենք որ իմ արածը զուարճութիւն է, քան թէ ծառայութիւն: Օրինակ՝ պատմեմ թէ ինչ է իմ անելիքը. մի մեծ բազում կանգնած եմ, օտար մարդ անցնելիս որ տեսնում եմ, ունքերս կիտում եմ ու մոռում: Եթէ որմին վրէս

խէթ նայում է, դէմը հաշում եմ. իսկ եթէ ուզում է ներս մտնի, արգելում եմ: Բակի բնակիչներին երբեմնապէս դուարճացնելու համար երգում եմ հաշելով կամ օւնալով: Եթէ բաղաձայն ես, անհոգ կաց, քեզ չեն թողիլ այդ նեղութիւնը քաշես: Տէքս ու տիրուհիս որ բակն են մտնում, գիշեր լինի թէ ցերեկ, միննոյն է, պառկած տեղից վեր եմ կենում, պոչս բուլղի-բուլղի անելով գնում փոստիկով փաթաթվում: Ուրիշ ոչինչ. . . Սրանից էլ հեշտ բան:

Գայլը այս բացատրութիւնը լսելով ցնծաց սըրտում և բացականչեց.

— Այսպէս հեշտահոգի ապրուստ է եղել աշխարհումս, ես անտեղեակ. ցեխը գլխից, միամիտ աւարած:

Հրապուրուած սրտով դարձաւ, շանն ասաւ.

— Քու ապրուստի մի կտորն ունենալու համար քաղաք չէ՛ որ մինչև աշխարհի վերջը կը գամ, դաշտեցի ազգական: Բըխչակ լինին ու անտէք մնան սարն էլ, ծմակն էլ, որ ինձ անօթի հախելով մազ շինեցին: Ջրկանքներն ու ծոմ պահելը սրանից շատ չէր լինիլ. քու ասած պայմանով յօժար եմ մարդամիջում ապրել՝ քաղաք լինի թէ գեղ. գնանք: Վաղ ուշ իմ ցեղակիցներն էլ խելքի կը գան, ծմակից կը փախչեն. օրինակը թող ինձանով սկսուի, շնորհակալ եմ քեզանից որ պատճառ եղար լուսաւոր աշխարհ մտնելուս: Յիմար կը լինիմ. եթէ դէպքը ձեռից թողեմ, գնանք:

Խօսքն աւարտեց գայլը և շան հետ պագուելով ճամբա ընկաւ դէպի քաղաք:

Գնում էին. ճամբին անկարծ մի բան ընկաւ

գայլի աչքով ու նրան սոսկումի մէջ գցեց. շան վզի բուրբը երկու մատնաշափ տեղ բուրբն այնպէս պոկուած էր, որ տակի կաշին պոկուած պանրը երևում էր: Կասկածի եկաւ ու հետաքրքրութիւնից ստիպուած հարցրաւ.

— Այս ի՞նչ բան է, դաշտեցի ազգական, ինչո՞ւ է վզիդ բուրբը պոկուած, ի՞նչ է եղել:

Չունը՝ առանձին ուշադրութեան արժան չհամարելով նրա հարցը, գլուխն էլ չբարձրացրաւ, այլ ճամբէն շարունակելով խօսեց.

— Ոչինչ, ուշ մի դարձնիլ, դարդակ բան է, գնանք:

Գայլը կանգնեց ու կասկածանքով շան վրայ նայելով ասաւ.

— Ո՞նց թէ ոչինչ, դաշտեցի ազգական, վզիդ վրայ երևող շերտը թէ ցեղական նշան է, ես էլ պէտք է ունենամ իբրև քու արիւնակից. բն ինչո՞ւ իմ վրդին պոկուած տեղ չկայ: Եթէ մօրուց է քեզ վրայ, ինչո՞ւ խիստ քերթուած է: Չէ աչքի լոյս, երևում է մի բան կայ և դու ինձանից ծածկում ես: Սիրաս կասկած է ընկել, ա՛րի մի խօսքով փարատիր, ետով մտնենք քաղաքը:

— Ի՞նչ ունիմ ծածկելու, սարեցի ազգական, սումնից եմ վախենում: Բայց մէջտեղը մի առանձին ասելու բան էլ չկայ. չեմ գիտում ի՞նչ հանգի սիրտ է քու սիրտը, որ դարդակ բանից կասկած է ընկնում: Դու հարցնում ես թէ ի՞նչու է վզիս մազը քերուել. երբեմնապէս վիզս թոկ գցած է լինում, այդ նրանից է:

— Ի՞նչ, թ՛մ կ, վախեցած հարցրաւ գայլը:

— Ի՞նչ ես ստրտափում դարդակ խօսքից. հն թ՛մ կ:

— Ո՞վ է գցում վիզդ, սարսափահար ետ կենայով հարցրաւ գայլը:

— Իմ տէրը. ինչ կայ որ... հանդարտ պատասխանեց շունը:

— 2է որ քու տէրը քեզ սիրում, փայփայում է, ինչո՞ւ է վիզդ թոկ գցում:

— Իմ օգտի համար է անում, որ ուրիշ տեղ թրև չգամ, բակում նստեմ: Կապուած ժամանակ թոկը քսուել է վզիս ու բուրդը պոկուել, դրանից ինչ վնաս:

— Ուրեմն բակի մէջն էլ կապուած ես լինում թոկով. այ թէ ինչ նոր բան իմացայ: Մի՛թէ: Հապա ինչ նշանակութիւն ունին այն առատ ճաշն ու փայփայանքը, սր գերու պէս ամեն օր կապուած ես, ինքնակամ չես:

— Ինքնակամ, ինչ ես ասում, սարեցի ազգական. քաղաքը հօ ծմակ չէ, որ ամեն ժամանակ ազատ, ինքնամ չըջեմ, ո՞վ կը թողնի:

Գայլը գլուխը կախ, կծկուած մտածում էր. Չունը խօսքը շարունակեց. . .

— Ի՞նչ հարկաւոր է, որ միշտ պարտապ սարտապ, իմ կամքի լինիմ: Եթէ օրուայ մի մասը կապուած շղթայի երկարութիւնով բակում վազվրդեմ, ինչ պակասութիւն է. թող վզիս բուրդը մի քիչ էլ պոկուած լինի, ինչ վնաս, նրանից հօ մահ չի առաջանում: Քու վիզը որ բրդոտ է, ինչո՞վ ես ինձանից աւել, ո՞ւմ աչքերն են սովից կուլ գնացել: Թեթեւ բաների վրայ ուշ մի գարձնիլ, սարեցի ազգական, կերակուր ու հանդիստ կեանք ուզիր, թէ չէ սեպհական կամքս ո՞րն է, ազատութիւնս ո՞րը:

Գայլը լսած խօսքերից յուզուած էր, աւելի էլ

լղար էր երևում. դարձաւ շանը պատասխանեց.

— 2է, դաշտեցի ազգական, ինչպէս ուզում ես համոզիր, քու այդ վերջի խրատը իմ գլուխը չի մըտնում: Գու հաւատացնում էիր առաջ, թէ տիրոջդ հետ ծանր պայման չունիս, այն ինչ դու յօժարութիւն ես տուել, որ վիզդ թոկ գցեն: Դրանից էլ ծանրը պայման: Հիմի երևում է, թէ ինչ գնով ես ձեռքերել քո սիրուն ապրուստը: Պատրաստ կերակուրի ու հանգստութեան հետ փոխել ես ազատութիւնդ, սեպհական կամքդ: Քու պապերդ այդպէս ստրուկ չէին լինիլ, չէին թողնիլ վզները թոկ գցուի:

Չունը լուռ էր. գլուխը ցից արած սպասում էր, թէ վերջն ինչ պէտք է լսի:

Գայլը հպարտ գիրք բռնելով առաջ տարաւ խօսքը.

— Գաշտեցի ազգական, իմ պապերին ես չեմ տեսել, բայց հօրիցս լսել եմ, որ նրանք էլ ինձպէս դժուարութիւնով են կերակուր ճարելիս եղել. նրանց վիզը միշտ հաստ է եղել, որովհետեւ ծմակում ոչ որի գլուխ չեն թեքել: Սիրել են ազատ թրև գալը սարերում, ձորերում ու մեղ էլ աւանդ, սովորութիւն թողի: Երբ դու վիզդ թոկի սովորեցրել ես, էլ ես քու ազգականը չեմ. գնա՛ քու սիրած քաղաքն ու հանդարտ սրտով վայելիր ճաշն ու փայփայանքը, որ վաստակել ես ազատութեան գնով: Քաղաքի, դաշտ տեղերի պայմանը կարելի է այդպէս է, դէմը ոչինչ չունիմ. բայց մեր սարերում, ծմակներում ազատութիւնն այդպէս էժան չի: Գնա՛, էլ ես հետդ եկողը չեմ. թէպէտ սովածութիւնից չըջելու ոյժ չունիմ, բայց աւելի լուռ կը համարեմ անօթի մնալով պա-

պահան սովորութիւնս պահպանել ու ծմակում սովամահ լինել, քան թէ քեզ պէս գերի դառնալով վիզըս թող գցել ու առատ կերակուրներով լիանալ:

Այս ասաւ ազնուարիւն գայլը և պոչը քաշ տալով սոված փոքրով դէպի ծմակը գնաց:

Առաձնեք

Ի՞նչ կանեմ ոսկէ ամանը, որ մէջն արիւն պէտք է թրեմ:

Ուտելիքս գարի ըլի, լսելիքս բարի:



ՏԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱԻԱՍՏՐԴԸ

(Նուէր հայ ուսուցիչներին)



1892 թ. նոյեմբերի 21 էր: Ա. քաղաքի ուսուցիչ ընկերներս՝ պատարագից ետը հրաւիրեցի ինձ մօտ:

— Այսօր դպրոցական տօն է, հաղիւ մի քիչ ազատ շունչ կը քաշենք, թո՛ղ տուր՝ գնանք, մտերմաբար չեմ ու չում արաւ ճվճվան ընկեր Խաչիկը:

— Ի՞նչ պէտք է ուտեցնես, որ գանք, ձեռները հաղաղելով հարցրաւ միւսը:

— Այսօր ուսուցչական ժողով պէտք է ունենանք. մի տղայի ահանջի բլթակ է պոկուել, եթէ թոյլ վերաբերուենք, ուրիշ անգամ մեր դպրոցում ամբողջ ահանջը կը պոկուի, տխրութիւնով այն կողմից յարեց աւագ ուսուցիչը:

— Գեռ թէյ չենք խմել, ո՛ր գնանք, սրտապատառ հարցրաւ մի այլ պաշտօնակիցս, որին անուանում էինք «քնքուչ»:

— Եղբայր, պատասխանեցի ես, թէյ էլ կը սամ, գինի էլ, ի՞նչ էք վախեցնում: Ժողովք էք ուզում,

այսօր ինձ մօտ արէք: Մինչև երբ իւրարից օտար մնանք մի դպրոցում ծառայող մարդիկս: Փոքրիկ քաղաք է, ժողովարան կամ մշտական թատրոն չկայ, որ իւրար յաճախ պատահենք, դուարձանանք: Աւելի լաւ չէ սկսենք իւրար մօտ ժողովուել. ասենք, խօսենք, դատենք, ուսուցչի միատեսակ կեանքի մէջ փոքր փոփոխութիւն գցենք:

— Ի՞նչ էք հաւարուել իւրար կուշտ, եկեղեցու գաւթի դռնից մեզ նկատելով ժպտադէմ հարցրաւ դպրոցի երիտասարդ հոգաբարձուն: Մեծ խորհրդի վրայ էք. բայց ես 25-ից վաղ ձեզ ուժիկ տուողը չեմ, մտքներէդ հանեցէք:

— Ծօ ջանմ, այդ չէ, մօտ արի, կանչեց նրան ճվճվան սիրելի ընկերս. սա մի առաջարկութիւն է անում, որի միջից ուտել-խմելու հոտ է փշում. կը գան գնանք:

— Է՛, ձայնը երկարացնելով խօսեց հոգաբարձու Զ., մարդու ուտել-խմելու հրաւիրեն և չգնայ, այն էլ ուսուցչի տուն, որի կծու սոխը հարստի մեղրից տասն անգամ քաղցը է:

Այս հանարի վրայ փառ-փառ ծիծաղն ընկաւ պաշտօնակիցներին մէջ:

— Զանմ հոգաբարձու, հէնց քու խօսքի վրայ մենք հրաւէրն ընդունում, գնում ենք, վրայ բերաւ Խաչիկ ընկերս, բայց վախենում ենք քու գոված սոխից շատ ուտացնի:

Շնորհակալ եմ հոգաբարձուից, նրան ամենքը լսեցին և թեթեւի տուած ութ հոգով հասանք փոքրիկ օթկանս: Ներս մտնելուն պէս նրանց չգրաւեց ոչ անկիւնում թշտոգ հեշտաեռը, ոչ մրգերով, ուտելիք-

ներով, գինի ու «կենդանարար ջրով» բեռնաւորուած սեղանը, որքան պատին կպած լուսանկար պատկերի կողքի ժապաւէնաձև թուղթը, որի վրայ ծաղկատառերով գրած էր հետեւեալը,

«Շնորհաւոր Նաւասարդ»:

Ամենքն էլ աչքներն ու խելքները սրեցին, որ ինձ դատափետեն, ապա բաց թողեն: Մինը հ. Ալիշանի «Յուշիկներ»-ից խօսեց, միւսը Գարինի սովորութիւններից. երրորդը դէտից դէնից, ամենի նպատակն այն էր, որ համողեն ինձ անտեղի բան բռնելու մէջ և պատից վէր բերել տան այդ թղթի կտորը: Նրանց կարծիքով ես խիստ երեւակայել էի: Դարձեալ հոգաբարձուն էր, որ կարգի հրաւիրեց ընկերներին:

— Պարոններ, ախր ս՛վ չի ասիլ, որ վարժապետներ էք: Հիւր էք եկել այս մարդու տուն, հիւրի նման կացէք: Ի՞նչ էք հրաման ու պատուէր կարդում. այսպէս արա, այնպէս արա: Երևի մի խորհուրդ կունենայ այդ թերթը, որ կպցրել է. մի քիչ համբերեցէք, ի՞նչ եղաւ ձեզ, հէր օրհնուածներ:

Մի քիչ լռեցին. թէյ ածուեց, թէյը խմեցին, վերջացրին, շարուեցին սեղանի շուրջը, մրգին, բանին ձեռ մեկնեցին ու աղօրիքները բան գցեցին. հերթը հասաւ գինուն: Հոգաբարձուն բաժակը վերցրաւ, խօսեց:

— Ոնց տեսնում եմ, պ. Ք. դիմեց ինձ, այս համեստ սեղանը դպրոցական տօնի աւիթով չի կազմուած: Ինչպէս երեւումէ, բացի եկեղեցու դռան խօսակցութիւնից այլ նպատակ ունիք. ասացէք, ի՞նչ խմանք:

— Սրափնս էք ուզում իմանալ, հարցրի ես:

— Այ՛ս, ուղիղ սրտինդ, ասաւ հոգաբարձուն:

— Իմ պատուական ընկերներին, իբրև հայերի, ասում եմ «Չնորհաւոր նաւասարդ». եթէ կարելի է համբուրւենք ու ոտի վրայ խմենք, որովհետեւ նաւասարդը շատ հին սրբազան տօն է:

Այս խօսքերին հետեւեց շշուկ, քրթմնջիւն:

— Ի՞նչ նաւասարդ. ի՞նչ սրբազան տօն, ի՞նչ ֆիլան, ի՞նչ ֆիլդիդ, ասին սեղանի ամեն կողմից:

— Պարոններ, վարժապետութիւն մի անէք, դարձեալ շեշտեց երիտասարդ հոգաբարձուն, (ինչպէս երևում էր մի քանի երեսպարզ տղայք ուսուցչի վարկը ձգել էին նրա աչքում, բայց չէր իմանում, որ նրա խրաքանչիւր նկատողութիւնը սիրտս տրորում, ճըմբւում էր). ձեզ հաճելի չէ նրա ասածը ձեր կամքն է, ոչ խմեցէք, ոչ համբուրւեցէք: Իսկ ես տեսնում եմ, որ Ք. շատ խոր համոզուած է առաջարկում. պէտք է խնդրեմ նրանից նաւասարդ տօնի էութիւնը պատմի, գոնէ մի նոր բան կը սովորեմ:

— Մենք էլ համաձայն ենք, թող պատմի, լսենք, բաժակները սեղանին դրած ետ կացան չորս հոգի:

Ես անծանօթ կամ գրի վրայ սովորած նիւթի մասին չպէտք է խօսէի, որ ճառելիս կմկմկայի: Պէտք է նկարագրէի հայ գաւառներում իմ տեսած, ճաշակած և զգացած նաւասարդի տօնը, հանդէսը:

Եւ արի, որքան լեզուս ոյժ ունէի, իմ խօսակցութեան վրայ նրանց երեսը պայծառացաւ, քէֆներն եկաւ. հէնց այն է սպասում էի, որ կասեն— խմենք նաւասարդի կենացը, յանկարծ մէկը թէ՛— հրաշալի նկարագրութիւն էր, անգամ արժանի տպագրութեան՝ ոճերի, լեզուի ճոխութեան կողմից. բայց ես չեմ հաւատում, որ հայ ժողովուրդ լինի երկրա-

գնդիս վրայ, որ պ. Ք-ի առաջարկած նաւասարդը այսօր, այս շաբաթ օրը տօնելիս լինի: նաւասարդը, հայի նոր տարին գնանց, կորւա:

Իրա խօսքի վրայ ամենքն էլ թերահաւատուեցին, իսկ մի քանիսը իւրար ականջում չչնջում էին որ նաւասարդ ամիսը սկսւում է Օգոստոսի 11-ին. Անգամ մինը համարձակուեց երեսիս ասելու, որ զաւանցում եմ, որ հայ աշխարհին անծանօթ է նաւասարդ անունն անգամ: Բայց այդ ասողը հայ աշխարհի պառնգը չէր տեսել: Տ հոգի էին, Տ էլ կոօ, հետները կուռել չէր լինիլ, թէ հիւրերս էին և թէ ընկերներս: Մնացել էի մենակ մի հատ Խաչինեցի կար քաղաքում, շատ անգամ մարդ ման ածի, որ զայ ինձ օգնի, իւրանց աշխարհի սովորութիւնը պատմի, չգտնուեց:

— Այդ Խաչինեցին 6—7 տարի է մեր քաղաքում, բա ինչո՞ւ մի անգամ բերանից չհանեց, թէ իւրանց աշխարհում նաւասարդ կայ: Իսկ սա (ինձ համար էր ասում) երեք ամիս չկայ, եկել է, նոր տօն է ուզում հաստատել:

Այս ասողն էր մի ջահէլ կարճիկ ուսուցիչ:

Ես շէի դադարում նաւասարդի տօնի այս ու այն նկարագիրն անելուց, բայց ոչ ոք չէր ուզում «չնորհաւոր նաւասարդ» ասել և բաժակիս շխկացնել: Այն ժամանակ ականայ բերանիցս դուրս թուաւ:

— Վայ խեղճ նաւասարդ. ահա քո ազգի ուսեալ որդիքը, որոնք աշխարհի տակ ու գլուխը գիտեն, բոլոր ազգերին ճանաչում են, բացի իւրանց աշխարհի ժողովուրդից. գուր չի ասուած թէ՛ ով ուզում է հայրենիքը սիրել, պէտք է նրան ճանաչի:

Այս յանդիմանախառն խօսքերից ետը, երբ ուզում էի միայնակ խմեմ նաւասարդի կենացը, աւագ ուսուցիչը՝ հասակաւոր ընկերս իմ թեկից ձգեց.

— Սպասիր, ես էլ եմ ընկերանում, խմենք նաւասարդի կենացը: Դու ինչ որ Քեաշկայի անուն տուիր, նրա նման խօսք մեր Գիւմրու լեզուումն էլ կայ, մօրս կը հարցնեմ:

— Ես էլ եմ ընկերանում, Ք. Չան. քո նաւասարդի կենացը, խօսողն էր ճիճվան բարեսիրտ Խաչիկը:

— Զուտով ձերն էլ կը դառնայ Խաչիկ եղբայր, քիչ սպառիր, ասի նրան:

Այս խօսքումն էի, որ միւս ջահէլ, խրոխտաբան պաշտօնակիցս կանգնեց, որոտալով հետեւեալն ասաւ.

— Պարոններ, հեռու հնութիւն և իւր տօներ. նոր լուսաւորութիւնը նոր շքեղ տօներ է բերում: Ինչ կարիք կայ նաւասարդի մամուլները թափթփել, փթած հին կեանքը վերանորոգել, ահաւասիկ յունվարը կը գայ, հետը կը բերի գողինաղ, մուրաբա, տօնածառ:

Ես սարսեցի տեղս ու տեղս, այդ խօսողը հայ ուսուցչի բերան էր: Ամենն էլ խոփոռ նայեցին նրա վրայ, միայն մէկը նրան հաւանութիւն տուաւ:

Եւ այդ մէկն էլ «քնքուշ» յորջորջւողն էր, որ այնքան հայոց պատմութեան տեղեակ էր, որ չգիտէր, թէ մենք Փիլիպպոս կաթողիկոս ունեցել ենք, թէ ոչ:

Ղափուղը (գրտի դուռը) բաղխող կար. շտապեց մէկն իմանալու թէ ո՞վ է:

— Հեռագիր, ճշացին դրսից. աշքդ լոյս, Ք.:

Բայց ես այնքան տխուր էի, որ կարծես չսեցի: Հեռագիր ցրողը մի կաթողիկ հայ ծերունի էր, որ միտս ձգեց մի առած. «Թաթերն ինչ արին, թէ տօտերն ինչ անեն»: Հայ լուսաւորչական ուսեալ երիտասարդները կողքիս ինչ սրտով էին վերաբերում իւրանց ազգային տօնին, թէ կաթողիկը, որ պուռնիկների վրայ միայն հայ բարբառն է պահել, ինչ սրբտով վերաբերուի:

Բայց տայ Աստուած, որ բոլոր կաթողիկ հայերն իւրանց վրայ ունեցած աննպաստ կարծիքը այնպէս ցրելու ճգնեն, ինչպէս արաւ այդ օրը ծերունի Յագոն:

— Խէրով բան է, սրտով բաց, աղա, գինի ալ պէտք է խմցունես ինձի:

Ջանազան ենթադրութիւններ լսուեցին:

— Մինն ասաւ՝ հօրիցն է. միւսը թէ՛ եղբօրիցն է. երրորդը թէ՛ եարիցն է:

Զորբորդը հաւաստեց որ մեր հասարակութիւնիցն է, կանչում են տանուտէր լինելու:

— Զատ էլ խելօք բան կանեն, որ ուսուցիչ մարդուն գիւղում ոռճիկով տանուտէր ընտրեն, ասաւ պ. աւագ ուսուցիչը: Նա ամենից լաւ է ճանաչում գիւղի և գիւղացու կարիքները: Բարեխիղճ ուսուցիչն անշուշտ կը լինի պատուական տանուտէր:

— Այդ լաւ բան է, խնդաց ընկերներիցս մինը, կենսաթոշակ չունի հայ ուսուցիչը, այդ էլ մի յոյս է, որ ուսուցչութիւնից յոգնած ժամանակ տանուտէրութիւն կստանայ: Ուրեմն խմենք ապագայ տանուտէր Ք-ի կենացը:

Կողքիս ընկերը ցնծագին խմում և խմացնում էր բարեխիղճ ուսուցիչ տանուտէրի կենացը, կար-

ծելով անշուշտ որ հեռագիրը մեր գիւղիցն է ու այս բովանդակութիւնը պէտք է ունենայ. «ընտրուեցիք տանուտէր այսքան ռոճիկով, խնդրում ենք ձեր համաձայնութիւնը»:

Նրա կարծիքով եմ ասում. որովհետեւ ընկերս տեսել, կարդացել էր նախընթաց օրերը այդ մասին ստացուած հեռագիրները, որոնց ես անպատասխան էի թողել: Բայց Խաչիկը, որ ուսու լեզուի ուսուցիչն էր, հեռագիրը կարդալուն պէս, սփարթնեց ու թեքուելով դէպի ինձ մեղմաձայն շշնջաց. «ընկեր, կարելի է թոյլ տաս, համբուրեմ քեզ»: Պատարեցի խնդիրը, նա յուզուած էր: Դարձաւ սեղանակիցներին.

— Պարոններ, խմենք այն երիտասարդների կենացը, որոնք իմ աչքերից մի փառ հեռացրին: Հաւատում եմ որ այսօր Նաւասարդ կայ. ահա ձեզ ապացոյց, հեռու տեղից խմում են մեր ընկերի կենացը: Չէք հաւատում, ահա հեռագիրը կարդացէք:

Դարձեալ լոյս ընկաւ մի շնչահաւատ Թովմա եւ ասաւ.

— Ո՞վ գիտէ ինչ ջահէյներ են հեռագիր դրկողները, թարկը տուէք, գնանք:

Այս խօսքի վրայ երկրորդ հեռագիրն եկաւ Գանձակից, որի մէջ գրած էր.

«Սիրելի Ք»...

Ուսարով, դստրով, թոռներով նստած պապական քաղցր Նաւասարդն եմ տօնում. քեզ էլ շնորհաւոր լինի.

«Քեզ սիրող ծերունի»:

— Ջահէլ տղերանց հեռագրին չէիր հաւատում, ահա քեզ ծերունու վկայութիւնը, վրաբերաւ հոգա-

բարձուս եւ նրան ծաղրելու համար աւելացրաւ. — էլի վարժապետի պէս պէտք է ընդդիմանանս:

Սիրտս ու հոգիս տրորում էր, երբ հողաբարձուն այդչափ քամահրանքով էր վերաբերում դէպի ուսուցիչ անունը, զգացած վրդովմունքս վանելու համար թախանձեցի.

— Պարոն Զ... ի սէր Աստուծոյ, այդքան էլ ուսուցչի վարկը միք զցի:

— Ո՞հ, սիրելի Ք... պատասխանեց պատուական երիտասարդը, մեռնելուս էլ լինիմ՝ վատին վատ պէտք է ասեմ, իսկ լաւին հոգուս բուջաղում (անկիւն) պահեմ: Դու ասելուս մի նայիլ, լաւ ուսուցչին եթէ ուրիշները սիրում են, ես պաշտում եմ բոլոր էութիւնովս:

— Խմենք ուրեմն հայ ծերունիների կենացը, որոնք շատ առաքինութիւնների հետ աւանդում են մեզ Նաւասարդը, ազգային տօնը, առաջարկեցի ես:

— Խմում ենք, խմում ենք, վրայ տուին ամենքը մի կողմից, անգամ շնչահաւատ Թովմասը բաժակը բարձրացնելով սկսաւ տաքացած երգել «Մեր նախնիքը ազգի համար»:

— Ա՛խ, լաւ պառանքների ու ծերերի հոգուն մեռնիմ, վրայ բերաւ աւագ ուսուցիչը, նրանք որ չլինին, ջահէլ հարսներին ու տարգուխ երիտասարդներին պարկեշտութիւն, բարեպաշտութիւն չը քարողեն, խսկի բարոյակաւութեան հոտը կը մնայ աշխարհիս վրայ:

Ետով զպացուած սրտով զիմեց ինձ այդ ասողը եւ հարցրաւ Նաւասարդ շնորհաւորող ծերունու անունը:

— Անունը չեմ ասիլ, բայց իւրան կը կանչեմ այստեղ, պատասխանեցի ես:

—Ո՞րնց թէ այստեղ կը կանչես, այնքան հեռու տեղից:

—Հորէս այստեղ է, պատի վրայ, բւրեկամ: Այս ասելս էր, որ սեղանի մօտից չորս հոգի վեր թռան իւրար հետ և շտապով պատից շմփեցին լուսանկար մի պատկեր, ուր տեղ նշմարուեմ էին չորս ծերունի՝ որը տրեխով, որը շուքուխը ձեռին, որը քթոցը տակը նստած բռնոթի քաշելիս:

Ոգեորուած տղերքը սկսան համբուրել կամ մէկին կամ միւսին:

—Սրգեօք սրն է հեռագրողը, հարցրին իւրար:

—Երեւի այս լաւ հագածը, ասաւ մէկը:

—Չէ, հէնց այս տրիսաւոր կոծի հայը (փոքրահասակ ծերունի) կը լինի, պատասխանեց միւսը:

—Սուրբ է ծերութիւնը, նորից խմենք հայ ծերունիների կենացը, առաջարկեց մի ոգևորուած ձայն:

Արդէն խառնուելու ժամն էր. գինին այնքան էր բարեխառնել ընկերներին, որ երգելու հերթը պառաւել էր, մնում էր պարելը: Պարն էլ սկսան: Եալլիրաչին առաջ անցաւ, միւսներն էլ սորոր տալով ժաժ տուին իւրանց կռներն ու ոտները:

Նստել էինք առաւօտը, այժմ ճաշից անց էր:

Ամենքն էլ պարից կշտացած թոփ եղան սեղանի շուրջը, որի վրայ թափուած կային մրգերի մնացորդն ու կերակուրների թեթեւ կրճոնքը: Ամուրի մարդու տուն, սով պէտք է իսկոյն վեր քաղէր: Տները ցրուելու պատճառով ուղեցին շտապով մի մի բաժակ էլ վերցնել շնորհակալութիւն անել տանուտիրոջ (այսինքն ինձ) և գնալ: Բայց Խաչիկը՝ ճվճվան ընկերս այսպէս հարց տուաւ:

—Պարոններ, նաւասարդ անուան հետ հաշտուեցի՞ր:

—Հաշտուեցինք, եղաւ ընդհանուր պատասխանը:

—Այժմ հարկաւոր է, այսինքն մեզպէս մարդկանցից պահանջելի է, որ տօնի հետ էլ հաշտութեան ուրիտ կապենք:

Չհասկանալով թէ խօսողն ինչ պէտք է ասի, կողքից մինը վերցրաւ ու ասաւ.

—Խմենք այն գաւառների կենացը, որոնք հայ նաւասարդը այսօրուան օրը տօնում, նրա ծէսն ու սովորութիւններն էլ անխախտ պահում են:

—Հէնց այդ, հարցրաւ նախկին խօսողը:

—Էլի բան կաւելացնեմ: Ծերերին ու պառաւնեւրին արքայութիւն եմ խնդրում, ջահէչներին արիութիւն, ապրին, մեծանան: Թէ բաւական չէ, էլ ասեմ:

—Պէտք է այս էլ աւելացնէիր, խօսեց մի ուրիշը, որ շնորհակալ ենք մեր պաշտօնակից Ք-ից, որ նաւասարդ տօնի նկարագիրն անելով ծանօթացրաւ:

—Ոչ, պարոններ, սպասէք, մի խօսք ունիմ, ձայնեց նախկին խօսողը, այսինքն Խաչիկը: Խմելն ու ուտելը ամեն մի մարդ իւր տանն էլ կարող է, մինը հարուստ ճաշ կուներնայ, միւսը աղքատ: Դրա վրայ չի իմ խօսքը: Կան ճաշեր, որ վայելելուց ետը մոռացում են, հէնց որ փորը նորից քաղց է զգում, բայց կան և աղքատիկ ճաշեր, որոնք եղել են բարեբաւարի սերմի պէս մի ահագին հաստատութեան առաջին կորիզը—սկզբնապատճառը: Այսօր իւրաքանչիւրս մի մասնաւոր բանով պէտք է զբաղուէիրք, բայց խեղճ հայի Աստուածը այս մարդուն ասել էր

երևի, որ մեզ ժողովի իւր աղքատ բնակարանը: Եկանք և առիթ ունեցանք մի քանի երջանիկ ժամով բերկրուելու, փառաւորուելու, աւելի հոգով քան թէ մարմնով: Այդպէս էլ վայել էր ուսուցիչ մարդուն: Մենք լսեցինք մի տօնի մասին մեր պաշտօնակից Ք-ից, որ իւրան սեպհականը չէ, այլ ազգինը: Մենք նոյն ազգի անդամներն ենք, բայց տեղեկութիւն չունէինք: Մինչ օրս լրագրութեան մէջ աւելի շատ է գրուել տօնածառի մասին, քան թէ հանուր ազգի Նաւասարդի մասին, որ ստեղծել և հիմնել են մեր պանծալի նախնիք: Այդ տօնը երևի վերջին ժամանակները, երբ մերայինք զանուել են յունաց տիրապետութեան տակ՝ հարկադրուած թողել մոռացել են և Բասիլիոսի նոր տարին (Յունվարին կարկանդակ են թխում, անունը գնում Բասիլի) ընդունել: Չարմանալու ինչ կայ, չէ որ հայերէն աշխարհաբարը խճոգուած է այս ու այն ազգի բառերով: Նայելով թէ մեր ազգը զարեբի ընթացքում սւմ հետ է շփուել, կամ սրբի տիրապետութեան տակ ընկել, ակամայ նրանից էլ իւր հիւթերն է ծծել, ինչպէս փոփոխութիւն են կրել մեր ազգի լեզուն, հագուստը, վեր ու նիստը, կերակուրները, անունները, նոյնպէս կարող է տօնն էլ փոխուած լինի: Այժմ լեզուն մաքրելու, զտելու ջանքեր լինում են, որի համար ժողովածուներ են լոյս տեսնում: Մեր երկիրն ու մեզ ճիշտ ճանաչելու համար եւրոպացիք ամիսներով մեր կողմերը ճանապարհորդում, ուսումնասիրութիւններ, պեղումներ են անում: Մի թէ դրանք գրգիռ ու խթան չպէտք է լինին, որ մենք բացի մեր պապերի կենացը խմելուց, որոնք այս փառաւոր տօնը, նրա

ծէսն ու աւանդութիւնը դարուց ի դարս անմտաց պահելով հասցրել են մեր օրերը, այլև...

—Այլ և ինչ, խօսքը բերանից խլեց խրոխտաբան կարճ պաշտօնակիցս.

—Որ համբերես, կիմանաս, հանդարտ պատասխանեց պէժ ու կրակ Խաչիկը և շարունակեց: Եթէ պեղումներ անելով հետաքրքիր մարդիկ քարի կոփուածից և անշունչ առարկաների կտորտանքներից իմանում են որևէ ազգի անցեալը և զանազան դարերի քաղաքակրթութեան աստիճանը, մի բևեռագրերով ծածկուած սալ կամ քար անհուն խնդրութիւն է պատճառում հնախոյզին, հնապա հայ ժողովուրդը, որ մեր սիրուն աշխարհում է ծնած, նրա քաղցր օգովն և ջրով սնուած, որ հագտը կրակի միջից անցել է, խանձուել, բայց առանց մոխիր դառնալու շունչը բերանին մեզ է հասել, դեռ նրա խորովուած կրծքի տակ այնքան սիրտ է մնացել, որ կարողանում է իւր բերանով հազար-հազար տարի առաջ ծնունդ աւած Նաւասարդը մեզ պատմել, նկարագրելով թէ կենդան լեզուով և թէ ծէսով,— բնւ Աստուած կը տանի մեր դատապարտելի արարքը, որ փոխանակ այդ աւանդապահ հայ ժողովրդի ոտքի տրեխը, նրա կուրը համբուրելու, նրա պահպանած ազգային տօնը փառաւորելու, ընդհանրացնելու, մենք հակամտում, յօժարում ենք կամ յունվարի 1-ը իբրև նոր տարի ընդունել կամ մուրացիկի պէս տօնածառ—անտեղի պատուաստը փոխ առնել: Այդ սեղանի վրայի օրացոյցը տուէք, տեսնեմ: Այստեղ շատ տօներ կան, որոնք ձեի համար են գրւում: Ժողովուրդը չգիտէ դրանց անունը, չի էլ կատարում,

որովհետև հնութեան դրոշմ չեն կրում: Հին տօների մեծ մասը ազգային են և հեթանոսութեան ժամանակից մնացած. քրիստոնէութիւնը շատ աշխատեց բնաջինջ անել դրանց հայ մարդի յիշողութիւնից ու սրտից, բայց չյաջողեց: Օրացոյցներէ՛ր սր երեսն ուզում էք, բաց արէք, ինչ Առնկիանոս ու Պրոկոպիոս սրբերի տօներ ասէք, կան: Քրիստոնեայ աշխարհի ամենավերջի նահատակի անունն էլ կայ այստեղ. բայց կարծէք օրացոյց կազմողների ձեռները կը ցաւեն, եթէ հեթանոսութիւնից մնացած ժողովրդական տօների համար էլ մի մի խօսք գրեն: Ինչո՞ւ հայ մարդը օրացոյցին նայելով չիմանայ թէ այս ինչ հայ գաւառում ինչ օրա, ինչ ուխտագնացութիւն կամ ինչ ժողովրդական տօն կայ: Եթէ օրացոյցը բանալով տեսնում ենք, որ Յիսնակի շարաթ օրը նշանակած են Նիկողայոս հայրապետի ու Միւսոնայ եպ. անունները, որոնց մասին մեր ժողովուրդը շատ հեռուոր ծանօթութիւն կամ ունենայ կամ չէ, ինչու նրա կողքին չեն անելացնում Նաւասարդ կամ Նախրաթող խօսքերը, որոնք ընդհանրացած են գրեթէ ամբողջ Կովկասի հայերի բերանում, բացի մեզանից, որովհետև մենք գաղթել ենք Կարնոյ կողմերից: Վերջապէս էլ ինչ խօսքս երկարացնեմ, դուք սեմնում էք, որ Նաւասարդից ազգային շունչ է փրչում, միթէ, սիրելի ընկերներ, չէիք յօժարուիլ այսուհետև սովորութիւն գցել, մեր քաղաքումն էլ տօները: Եթէ ուզում էք, որոշենք հէնց այդ օրն էլ մանկական երեկոյթ սարքել ամենայն տարի: Գասազրբեր կազմողներն առանց այդ բանն աչքի առաջ ունենալու յօդուածներ են գետեղել, որոնցից

մինը ժողովրդական Նաւասարդի նկարագիրն է, որ մինչև օրս չի հետաքրքրել մեզ:

—Յօժար ենք, ընդունում ենք, ձայնեցին ամեն կողմից:

Ամենն էլ բաժակներ ձեռ առան:

—Տիրքան եղբայր, մի «ամէն» ասա, գոչեց սեղանապետը, համբուրենք և ուխտենք, որ ամենայն տարի տօները աշնան ժամանակ ամենիս համար սիրելի Նաւասարդը: Ինչպէս երևում է, միշտ պատահում է նոյեմբերի վերջերքում, երբ կարելի է մանկա կան երեկոյթ էլ անշուշտ տալ:

—Ուղիղ էք ասում, պարոններ, հարցրի ես:

—Ուղիղ, սղիղ, սիրելի Ք. անսուտ երգումով խոստանում ենք. քանի այստեղ էք, կը տեսնէք, թէ ինչպէս ենք տօնում, երբ կը գնաք, կը լսէք լրագրով թէ մենք տեղացիներս ինչ շուքով ենք հիմնաւորում քաղաքացիների սրտերի մէջ հայ նոր տարին:


—Երբ որ այդպէս է, տեղից կանգնելով խօսեց հոգաբարձուն, իմ վատ կարծիքս փոխում եմ ուսուցիչների մասին: Այսուհետև իմ ձեռներս էլ, գլուխս էլ ձեզ զուրբան, երբ որ միարանութիւնն ու սէրը մէջտեղ բերիք: Երբէք չմտածէք թէ դպրոցն անպահով է: Հէնց որ ամսի 25-ը լրանայ, եկէք ձեր ոտճիկը ինձնից ստացէք: Թէ սէր տեղից կը ճարեմ, այդ իմ բանն է: Արկղում փող չլինի, տներս գրաւ կը գնեմ: Տունը բաւական չլինի, որդիքս հօ այնտեղ են, կը ծախեմ, լաւ վարժապետների ամեն ուղածը կը կատարեմ: Այժմ գնանք իմ տուն և շարունակենք Նաւասարդի տօնը, առաջարկեց անուշութիւնով հոգաբարձու Զ... 2^է որ դա հնումը կատարուելիս է

եղել ընկերովի, թաղովի: Տայ Աստուած, աշխարհովի էլ դառնայ:

Ամբողջ խմբով գնացինք փութաջան հոգաբարձուի տուն: Այնտեղ ինձ առաջարկուեց Նաւասարդի մասին իմ գիտեցածը գրել: Որքան տկար ոյժերս ներում էին, գրեցի:

Անցան ամիսներ. աշունը դարձաւ ձմեռ, ձմեռը ամառ և ես պաշտօնակիցներս, հոգաբարձուիս ցատեութիւն ասելով ելայ Ա. քաղաքից, բայց ինչ ինչ հանգամանքներով անկարող եղայ վերադառնալ հետեւեալ տարին այնտեղ:

Մինչև օրս տեղեկութիւն չունիմ, թէ ւրդեօք պատուական պաշտօնակիցներս ու նրանց ուխտին համակրողները հաւատարիմ մնացին իւրանց խօսքին. տօնեցին Նաւասարդը, թէ ականջ ի վեր արին, ինչպէս շատ լաւ խոստումներ ու երդումներ:



Ն Ա Ի Ա Ս Ա Ր Դ Ի Տ Օ Ն Ը

(Նուէր Խաչումեանց վաղամեռիկ Յովհաննէսին)

Այս տօնի մասին յիշատակութիւնները շատ կցկտուր են ազգային մատենագրութեան մէջ: Մատենագիրներից ոմանք Նաւասարդի մասին ժամանակ առ ժամանակ խօսել են՝ մէկ մէկուց փոխ առնելով տօնի վերաբերեալ համառօտ պարագաները, առանց իւրանց ապրած ժամանակի, ժողովրդի կեանքից որևէ բան աւելացնելու:

Ճ. Չամչեան, Յ. Ինճիճեան, Յ. Ալիշան ամենն էլ Նաւասարդ ամսի հետ Նաւասարդի տօնն էլ զնում են օգոստոս ամսին, թերևս առանց իմանալու թէ ժողովրդի մէջ կենդան Նաւասարդի տօն կայ, բայց Նաւասարդ ամիս չկայ: Գրագէտ հայերի մի մասի ականջին այնքան սովորական է դարձել օգոստոսի 11 լսելը, որ նա առ ժամ շուարում է լսելով, թէ հայ աշխարհի շատ գաւառներում այժմ գոյութիւն ունի մի աւելի զօրեղ Նաւասարդ, որ հարկադրում է այդ աշխարհի մարդկանց իւրար գլխով անցնել, նոր տարու առիթով կերուխում սարքել տնովի, գիւղովի, աշխարհովի: Նա լսելով գոյութիւն ունեցող Նաւա-

սարգի թէկուզ համառօտ նկարագիրը, սկսում է թե-
րահաւատունել մատենագիրների յիշած նաւասարգի
վրայ, երեսը դարձնել դէպի ժողովրդային նաւա-
սարգն ու ինքն էլ ցնծալ ցնծողների հետ:

Հ. Չամչեանն ու Հ. Ինճիճեանը ի միջի այլոց
են գրում, իսկ Հ. Ալիշանը իւր սրտագրաւ ՅՈՒ-
ՀԻԿՆԵՐԻ ծոցում առանձին գրուի է գետեղել նա-
ւասարգ խորագրով:

Նաւասարգի սկզբնաւորութեան և բացատրու-
թեան մասին Հ. Ինճիճեանը գրում է իւր հանգի, իւր
պէս. Հնաւասարգ համառօտեալ յանուանէս նաւաստ-
աւարտ, զի յայնժամ եղև համօրէն մարդկան և
տապանակիր նաւուն նաւաստութեան աւարտ, որով
իմս ի նոյն իսկ ի նոյեանց արդեօք արձանացեալ
ցայս անուն: (Նրա համար ասում էի թէ «իւր հան-
գի»): Այս յայտ առնէ թէ յիշատակ այնր մեծի ջըր-
հեղեղին ուրոյն իմն օրինակաւ մնացեալ կայր ի վա-
զընջուց յազգի և յաշխարհի մերում, ուր բնակեցան
կլեալքն ի տապանէն և որդիք և թոռունք նոցա...
Ձի արդարև արժան էր նոյեանց անդուտ սկ-
սանել զսկիզբն նոր տարւոյ, որոց նոր կեանք և
նոր օր:

«Ի նոյեանց սկսեալ ի շնորհակալութիւն Աս-
տուծոյ վասն վերծանելոյ ի ջուրցն հեղիցէ կամ ի յի-
շատակ տարեդարձի այնր հռչակաւոր ողջակիզին,
զոր նոյ յետ ելանելոյ ի տապանէն ի շայաստան
աշխարհիս մատոյց ի շնորհակալութիւն Աստուծոյ
իրր ի դիմաց համօրէն մարդկութեան... Խուուն այլ
և այլութիւնք իբաց ի գործս և ի հանդէսս և յա-
նունն իսկ երևելի ամսոյս նաւասարգի առ մեզ՝ բե-

րէ արդարև իմաստնոց խորհիլ և ինչ ինչ իմաստա-
սիրել—»:

Դեռ 1885 թ. էր, որ ես իբրև Արցախու հայ
ժողովրդի զաւակ նկարագրեցի այժմ տօնուող կեն-
դան նաւասարգը*) որից արդէն նմուշ են վերցրել
հայ լեզուի դասագիրք կազմողներից մի քանիսը:
Պատիւ դասագիրք կազմողներին, որ միջոց են տա-
լիս սանիկների սրտերում վառելու ու մարմնացնե-
լու նաւասարգի յիշատակը: Բայց ուսուցիչներից քա-
նիսը կան, որ արժան են համարել մտնել քաշիկ
ցեքերից գիւղացու անշուք օջաղը, ծխոտած նահա-
պետական տունը, ուր շուրջ բոլոր նստած անհուն
ցնծութիւնով վայելում են նաւասարգի Քեաշկէն:
Մենք գրագէտներս աղքատ ու հպարտ ենք, դժուար-
անում ենք մասնակցել գիւղացու, գաւառացու ու-
րախութեանը, որովհետև դժբաղդաբար վատ ենք
դաս առել, գեշ կրթուել. գիւղացին ծալպատակ է
նստում, իսկ մեր ոտները ամբարտաւան են զարգա-
ցել, չեն ծարում ժամումն անգամ ծունը դնելիս: Նա
մատներով է ուտում բաժինը, այն ինչ մեզ երեք
ձղանի եղան է հարկաւոր պատառը բերաններս տա-
նելու համար:

Վերջապէս ինչ ասեմ, մենք հայերս մեծամար-
դացել ենք, մեր հայրական տներում, մեր պապա-
կան սովորութիւններում չենք տեղաւորում: Նորա-
սիրութեան տենչը մեր սիրտը մաշում է:

Կապակոտոր ձիւ պէս չափարից թռչելը սըրտ-
ներս ուղում է, բայց այնքանը չենք մտածում, որ

*) «Նոր-Գար № 210.

հէնց այդ չափարի տակ սպասում է մեզ պատառող
գայլը . . :

Հայ ժողովուրդը, իբրև քաջ աւանդապահ՝ անց-
ներով սրի, կրակի միջից, կորցնելով ամեն նիւթա-
կան շահի հետ և իւր արեան մերձաւորները, շի մո-
ռանում իւր որդուն, իւր յաջորդին պահ տալ խօսքը,
զրոյցը, տօնը, սովորոյթը, նախապաշարմունքը: Կոր-
ծանուեցին բազինները, դեռ այսօր էլ ժողովուրդը
եղբւում է Բապարանի աստուածների անուններով—
կրակով, լուսնով, ջրով, արևով և այլն: Այրուեցին,
կրակի մատնուեցին հեթանոս պապերի գրութիւն-
ները, քրիստոնէացած հայ ժողովրդի սրտի մութ-
մութ խորշերում պահուած մնացին և մնում են հե-
թանոսական կեանքի վերարեբեալ անթիւ տեղեկու-
թիւններ: Անցան, անյայտացան հեթանոս հայ աշ-
խարհի քաղաքական շուքերն ու փառքերը, մնացին
ե մնում են քրիստոնէայ հայ ժողովրդի մէջ սրբագ-
նացած, քաղաքականացած տօները, ծէսերը:

Ժողովուրդը որքան ոյժ ունի պատերազմելու,
մաքառելու յանուն իւր տօնի, իւր ծէսի, յամառու-
թիւնով պատերազմում է մինչև շնչասպառ լինելը:
Հայ ժողովուրդը, անպի նրա տօնուն ու դիմացիուն
երակն ու դանգը, մինչև օրս անմոռաց պահպանել
է մի տօն, Նաւասարդի պէս սրտի մօտիկ տօն: Քա-
նի հազար տարի է, որ քաղցրութիւնով կրում է այդ
բեռը: Մատենագիր վարդապետները օգոստոսի 11-ը,
իբրև Նաւասարդ ամսի սկիզբն, փառաւորել սկսան
(օրինակ հ. Ալիշանը), իսկ ժողովուրդը անտեղեակ

տօմարին ու մատենագրութեան, իւր Նաւասարդը
աշնան մէջ հանապազ տօներով, աղիղացներով բերաւ-
հասցրաւ մինչև 1882 թ. և հայոց ընդհանուր ուսուց-
չական պատկառելի ժողովին ներկայացրաւ: Կարծէք
հարցնելիս լինէր յարգոյ ժողովականներից.— Մեծար-
գոյ պարոններ, չէք փափագում, որ ձեր պապական
տօնը, որ առաջ մեծ էր և աշխահովի, այժմ գոնէ
դպրոցովի դարձնէք, որպէսզի այսուհետև աղքատ
թէ հարուստ, գիտուն թէ տգէտ միատեղ տօնենք,
միասին ուրախանալով յիշենք մեր ապուղապերը,
մեր ատուտատերը, փշելով, պերփելով մըճեղի տակից
լոյս աշխարհ հանենք նրանց արած գործերը զրու-
ցի, հէքեաթի միջոցով:

1882 թ. յիշում եմ, երկար խօսակցութիւն ե-
ղաւ ուսուցչական ժողովի նիստերից մինում տօների
առիթով: Տօն ե՛ր խորագրով մի բեֆերատ կարգա-
ցուեց, առաքուած էր Արամեանց մեծ. բժշկի կող-
մից: Յ. բժիշկը իւր գրութեան մէջ առաջարկում էր
ժողովին որոշել, դպրոցական դարձնել մի քանի աղ-
գային ու եկեղեցական տօներ: Պ. նախագահը խընդ-
րեց, որ ժողովականներն իւրանց կողմից ասեն, թէ
հայ գաւառներում ինչ տօներ կան աւելի սրբազնա-
ցած ու ժողովրդական դարձած և որոնց են տալիս ար-
ժանապատուութիւնը ազգային տեսակէտից վերցրած:
Այդ հրաւէրին պատասխանողներ շատ եղան իւրար
առաջ կարելով. անթիւ տօներ ասուեցին, բայց աւե-
լի կարևորները մեծամասնութեան կարծիքով 12 թէ
13 էր: Կատակասէր մարդիկ շարունակում էին միջ-
նորդել, որ Ծմինդա Նինոյի նման տօներն էլ ցան-
կի մէջ ընկնեն: Ժողովականներից մինը վրդովուած

ձայնով հետեւեալն ասաւ. «Խնչ էք ասում, պարոններ, ոչ միայն յանձնաժողովը, այլ և կաթողիկոսը իրաւունք չունի նոր տօն ստեղծել»: Իսկ երբ հերթըն եկաւ Նաւասարդ տօնի մասին, մի ձայնը հարիւրաւոր հաւանութեան ճիւղեր ստացաւ: Ով ասես որ չէր գովում, ով ասես, որ բացատրութիւն չէր տալիս այդ հայկական տօնի կատարման եղանակների մասին հայ գաւառներում: Ամենի վկայութիւնով դուքս եկաւ, որ դա հրաշափառ տօն է, թէև եղան Նաւասարդին հակառակողներ, փնտրողներ, որոնք իւրանց կողմից ջատագովում էին յունկարի գողինախը: Ճաշակի բան էր, ինչ արած: Երկար վիճարանութիւններից ետը ժողովը որոշեց դպրոցական տօն դարձնել միմիայն Ս. Մեսրոպայ, Ս. Վարդանանց և Նաւասարդի տօները:

Պատիւ և փառք ընդհանուր ուսուցչական ժողովին. առաջին անգամ այնտեղ արծարծուեց կենդան Նաւասարդին իւր նախկին, համազգային կերպարանքը տալ գոնէ դպրոցների միջոցով:

Այդ ժողովին մասնակցող ուսուցիչներից և ուսուցչուհիներից արդեօք քանիսը կարողացան իւրանց խոստման համաձայն տօնել Նաւասարդը դպրոցում սանիկների ու ծնողների ներկայութիւնով:

Ո՞վ ներութիւն քաշած, տօնը կատարած լինի ինձպէս, նա փորձով կը վկայի, թէ սրբան խոր և քաղցր տպաւորութիւն է անում հայ մանուկի ու հայ մարդի սրտի վրայ:

Բայց նայենք թէ Նաւասարդն իրաւ կոյ, տօնւմ է ժողովրդի մէջ և ինչ հետքեր ունի յիշատակելու արժան, որ ընթերցողը փոխանակ զուր զըլ-

խացաւանք համարելու իմ ասածները, ընդհակառակը աւելի եռանդի գալով աշխատի իւր կարողացածի շափ նորոգել, ուժեղացնել այդ հին, քաղցր տօնը, որ կեղծ լուսաւորութեան պատճառով քիչ է մնում ջնջուի հայ ժողովրդի մտքից ու մոռացութեան մատնուի իսպառ, ազգային ուրիշ նշանների պէս:

Ժողովուրդը Նաւասարդը տօնում է այդեկութից ետը, այդ ժամանակ պահունի մրգերն առանձին արկղներում, տոպրակներում են լինում պահած, չիրն ու շիջողն առանձին. զինին կարասները լիք, Աստծու տուած միւս բարիքներն էլ տան պուճախներում խլխլութում են: Աշունքակէսից անց միջոցին, երբ վաղուց դուռ ու կտուր եղեամով, բանջարաբուկներով զարդարուած են, հայ զիւղացին զգում է որ Նաւասարդը մօտեցել է:

Արցախ, Ուտիք, Միւնիք, Աղուանք, Այրարատ աշխարհների ժողովուրդները թէ մասնաւոր, թէ ընդհանուր տնտեսութեան մէջ ունենում են ծառաներ-մղղուրներ:

Գեղում թէ գաւառներում մղղուրները վարձում են տարով, բայց նրանց մեծ մասի ծառայութեան ժամանակամիջոցը սկսում է ոչ թէ յունկարի մէկից, այլ Խաչի պասից (Առաջաւորաց), կամ Մեծ-պասի երկուշարթից: Եթէ տանու ծառայ է, ժամանակամիջոցն է Նաւասարդից մինչև Ջատիկ կամ մինչև գարու հունձը: Եթէ բաղի դորուխի (այգուն աչք բռնող) է, Սուրբ Խաչից մինչև բուն բարեկենդան, կամ մեծ պատ-մոտ: Եթէ հօտաղ է, մինչև Վարդավառ. եթէ կայուոր է, մինչև խաղող օրհնանքի պաս բացուելը. եթէ հորթարած ու նախարած է,

նրա ժամանակամիջոցը սկսում է մարտի 20-ից և տևում է ութ ամիս, այսինքն մինչև նախրաթողի պաս բացուելու օրը, որ է նաև սարգը: Նախրապանի պաշտօնը սուրբ է համարում: Եմանեցնում են հայր Աբրահամին: Նա իւր վարձն ստանում է կալուկասին, բայց նախիրն արձակում է Յինանց շաբթապասի ուրբաթ իրիկիապահին, որ ինքն էլ զնայ իւր տունը, իւր ընտանիքի հետ նաև սարգի թաղարիքի—պատրաստութեան ետնից կենայ, որ առաւօտը ուրիշների պէս նա էլ խնդայ, նոր տարին շնորհաւորի: Վերոյիշեալ գաւառների, նահանգների աւանդապահ ժողովուրդը՝ իբրև մղղուր, իբրև նախրապան, իբրև ջրի տէր—սուչի, յօժարում է դաշտում, հանդում անց կացնել Զատիկի, Վարդավառի, Աստուածածնի պէս տօներին, բայց նաև սարգին աղքատ թէ հարուստ իւր ունեցածն Աստծուն ապաւինած անշուշտ տուն է դառնում, դեռ պատահած օտարականին էլ իւր տուն հրաւիրում:

Այդ տօնը ուրիշ առանձին վեհութիւն ունի ժողովրդի համար. ամենն էլ սրտաբաց են, ամենի երեսն ու ճակատն էլ խնդումից փայլում է: Ետին գիւղականին էլ այդ օրը տեսնողը կը կարծի թէ թագաւորութիւն է գտել, այնպէս լիասիրտ է, ձեռնաբաց և անդարդ: Բացառութիւն կազմում են միմիայն Գուռը չանէսները, ժանգի պուլիկները: Առանց չաղալի անտառ կը լինի:

Նաև սարգին անուանելով նոր տարի, սկսում են իւրար շնորհաւորել: Առաւօտանց իւրար տես են զնում: Գնացողները մարդ լինի, թէ տղայ, գրպաններում ունենում են տանու պատրաստած չոր մըր-

գեր, իսկ երեխանց ծոցերը լիք շիջողով, չամշով, տանձ ու խնձորով: Տեսնելիս, պատահելիս համբուրում են իւրար բարեմաղթում. «Քաղցր պառաւես նաև սարգի պէս, շնորհաւոր նոր-տարի, որդով, դրստրով բարով մէկ էլ էս օր հասնես»:

Ընկեր հարևան ուր էլ հանդիպեն, թէ այդ օրը թէ հետևեալ, անպատճառ պարտաւոր են բարովել համբուրելով:

Ամեն տեսակ անբաւականութիւններ, խռովութիւններ այդ օրը ուղղում, ոչնչանում են: Հայ մարդը խռով սրտով նաև սարգի Քեռակէն չի վայելում: Աշնան սկզբին շատ դէպքերում խոյս են տալիս անախորժ խօսք ու զրուցից, վախենալով մի գուցէ կռիւ, խռովութիւն ծագի ու ստիպուած լինին քեռակայ չտտել: Իսկ այդ կերակուրն այնքան սրբազան է եղել, որ այսօր էլ նրա զօրութիւնով երգուողներն անթիւ են գաւառներում:

Տարէք-բերէքը, այսինքն մնալան, լինում է ամեն տեսակ մրգերով, քաղցրեղէններով. սանահօրանց սանամօրանց տանից դէպի կնքաւորանց—պէլունցտուն, նորահարսանց տանից խաչկորօրանց տուն: Տան փոքրերը տղայ, աղջիկ՝ ծնողաց ձեռն են համբուրում նրանցից ընծաներ ստանալիս, իսկ հարսները զնում են ծունկ չորում սկեսօր ու տան նահապետի ձեռները համբուրում: Նոյնպէս արհեստաւոր աշակերտները իբրև նշան խորին պատկառանքի ու խոնարհութեան ընծայ են բերում իւրանց վարպետի տուն ու ձեռը համբուրելով, օրհնութիւնը ըստանում:

Եթէ նկարագրելու լինինք նաև սարգի մի օրը,

քաղցր վէպիկ կը գոյանայ, միայն կարճ այսքանն ասենք, որ Նաւասարդի առիթով դուք կը տեսնէք օտարին ու տեղացուն, ծառային ու աղային, աղքատին ու հարստին, քէօխովին ու գզրին իւրար հետ եղբայրացած, իւրար հաւասարուած. ամենն էլ Նաւասարդի հաստատ մնալն են մաղթում, որ ազգն էլ նրանով շատ տարիներ տեսնի ու կենդան մնայ:

Օրհնարեք Նաւասարդն է, որ իրաւունք է տալիս գուռնաշիններին—փողհարներին ծվանները մաքրել և ութ ամսուայ լուսթիւնը խզել, որովհետե Մեծ պաս մտնելով գուռնի ծվանն էլ դռուլն է մտնում, գուռնաշիքն իւրանք էլ գործի տէր մարդիկ են, ցըրւում են դէս ու դէն: Ո՛վ էր լսել ամառը գուռնի ձայն ինչպէս հիմի է, դա անվայել բաների թուփն էր պատկանում, մանաւանդ լի օրերը: Ջուռնէն բան էր ընկնում Նաւասարդին: Նաւասարդից ետը սկսում են հարսանիքների, պսակների հանդէսները, զբանից վաղ սկսուածը հայկական հարսանիք չէր: Արցախում, Ուտիքում և միւս հայ գաւառներում այդ օրից ետն են բացւում կերուխումն ու խրախճանները:

Նաւասարդն իբրև համազգային տօն կերակրի մէջ էլ երևացնում է միատեսակութիւն, միաւորող կապ:

Այդ տօնը թէ իսկութիւնով կատարող և թէ յիշատակութիւնը մոռացող հայ գաւառները գործ են ածում միևնոյն բանը—*կորկոտը*: Նախիջևանը, Երևանն իւրանց շրջակայ գիւղերով եփում են այդ օրը *հարիսա*: Արցախի, Սիւնիքի գաւառներում, գաւառակներում եփում են կերակուրներ սովորականներից, իսկ մէկը յատկապէս Նաւասարդի տօնի ա-

ռիթով: Քեաշկէն տարուայ մէջ միայն տօնի օրը կեփեն անարատ կերպով առանց հարելու կամ շերեփ դիպցնելու, և այն էլ անպատճառ ոչ թէ տան կրակի վրայ, այլ թորնի մէջ: Ով փորձել է՝ նա կարող է վկայել, որ այդ կերակուրը հարիսի պէս չէ, նրանից շատհամեղ է:

Քեաշկան պատրաստելու համար կորկոտի հետ տաւարի միս պէտք է լինի, ընտիր տեղերը ջոկած: Իսկ սր գաւառ անտառոտ, կաղնոտ է, ինչպէս Ջրաբերդ, Խաչէն, որտեղ խողի երամակները վլտում են, տանտէրը մի գէր խող է մորթում ու մաքրած գլուխը քեաշկայ դնում: Թէ ինչո՞ւ են թորնի մէջ եփում, կարիք չկայ առանձին բացատրութեան: Թորոնն ինչպէս առաջ, այժմ էլ ունի իւր սրբազան դերը գաւառներում: Նրա զօրքով են երգում կարևոր դէպքերում. կարծէք թորոնը մտաբերել է տալիս հայոց կռապաշտական զոհից մշտավառ սեղանը, կամ ատրուշանի նմանակ բան, ուր քրմերն էին ծառայում և սրբազան կերակուր պատրաստում, որոնցից մի տեսակը լինելու է պատկանելի հնութեան դրոշմ կրող համով Քեաշկան կամ Ղարաբաղցոց «Պենջարը»: Ինչպէս ասացի, Նաւասարդի տօնին ամեն տեղ կորկոտ կամ հատիկ (օրինակ հարիսի մէջ) են գործ ածում:

Թիֆլիզեցիք անագով վերաբերուելով այդ օրին անուանել են *կորկոտ օքա*, կարծէք թէ իւրանց յունվարի—*պաստա նոր տարու*, գողինաղը շատ ագնիւ բան է:

Ընթերցողի համար ահաւասիկ մի հետաքրքիր երևոյթ Նաւասարդի ընդհանրութեան և քաղցրու-

Թեան: Նիժեցիք իբրև աւանդապահ մնացորդ ուտիական տոկուն ազգի՝ շատ գեղեցիկ սովորութիւններին հետ մինչև օրս պահել են Նաւասարդի յիշատակի տօները:

Վեցցեն ուտիները, որ իւրանց յատուկ հաւատարմութիւնով ոչ միայն յիշում են Նաւասարդի անունը, այլ և յիշատակը արժանաւորապէս տօնում են. աչքովս տեսածն է, որ պատմում եմ.

Նրանց մօտ այդ տօնը կոչում է *քեաթա ախսիբայ* (գաթայի դատիկ): Նիժեցիք առհասարակ բոլոր տօներին անուանում են *ախսիբայ*, իբր դատիկ, ազիզ օր, իսկ Յարութեան տօնին ասում են *քալա կամ ճոճա ախսիբայ*, այսինքն մեծ Չատիկ:

Նաւասարդի օրը իւրաքանչիւր նիժեցի պարտք է համարում իբրև նախնական սովորութիւն ունենալ եղահունց սիրուն գաթաներ, որ պատրաստում է ուրբաթ իրիկունը: Չարաթ լուսանալուն պէս դռանչները ընծայ են ուղարկում փեսացուների տները: Գիւղացիք իւրար շնորհաւորում են խնձոր տալով, իւրար տուն են գնում, հիւրասիրում մրգերով, օղիով, գինիով, այս խօսքերով բարեմաղթելով՝ «խուժիստան դան բաքի էֆ քեաթա ախսիբայ (շնորհաւոր լինի ձեր գաթայի դատիկը) և միմեանց համբուրում: Թագեցիք (գեղամասի ժողովուրդը) խմբուելով գնում են իւրանց թաղի գլխաւորի տունը: Ետով մասնաւոր խմբերը միանալով խուսն բաղմութիւնով գնում են գիւղապետի-իւղրաշու տուն, շնորհաւորում նրա նոր տարին և գաթայ, օղի, միրգ անուշ անում:

Յունիսը ամսի նոր տարին ոչինչ նշանակութիւն չունի աւանդապահ նիժեցու համար: Ուրեմն

Նաւասարդի տօն յիշատակողների մէջ միայն նիժեցին է, որ կորկոտ չի գործ դնում: Ուտի ծերունիք և պառուները չկարողացան խելքի մօտիկ բացատրութիւն տալ ինձ այդ մասին: Մեծ կորուստ չէ, եթէ այդ տօնին յատուկ կերակուրը չեն եփում. գոնէ գաթայ թխում են, որ նոյնպէս ցորնից է և տօնում են ինչպէս հարկն է:

Հապս ինչ ասենք այն հայերին, որոնք անշնորհքի պէս և տօնի անունն են մոռացել և կերակուրը: Էրզրումից եկած հայերը, Ախալքալակցիք, Ախալցխացիք, Ալէքսանդրապօլցիք Նաւասարդի անունը մտահան անելով, հազիւ կարողացել են բերաններում պահել տօնին յատուկ կերակրի անունը, այսինքն *Քեաշկակ*: Քացախներին բարաքեաթ կեցցեն: Այդ *քեաշկակ* կերակուրը, որին Արցախում, Միւնիքում և այլ տեղերում (Չուլաէրում, որ այժմ Գուգարքումն է, բայց բնակիչները Չամշադնի գաղթականներ են) *քեաշկա* են ասում, Էրզրումից եկող հայերը եփում են ազիզ օրերին, բայց ոչ երբէք Նաւասարդի օրը, որովհետև Նաւասարդ խօսքը բոլորովին անծանօթ է նրանց ականջին. շատերը վեր են թռչում, երբ իմանում են թէ բացի օգոստոսի 11-ից (որ իւրանց համար դարձեալ նշանակութիւն չունի) ուրիշ ևս Նաւասարդ կայ: Թէև դրանց պապերը Էրզրումի կողմերում այնքան սիրելիս են եղել Նաւասարդի տօնը, որ մարդկանց սովորական անունների շարքում դրել են Նաւասարդ անունը, ինչպէս պատահեցի Ախալքալակու մի մագաղաթէ գրչագիր ակտարանի յիշատակարանում: Այդտեղից կարելի է ուղիղ եզրափակել, որ վերոյիշեալ գաղթականների

ապուլպապերն ու ատուտատերն էլ տօնելիս են եղել Նաւասարդը, ինչպէս մենք, բայց երկալը դարեր սուլթանների ձեռի տակ ծնուելով, սնուելով ստիպուած են եղել ազգայնութեան հիմնաքարերից մինը մոռանալ: Եւ ո՞վ գիտէ սրբան եռանդով մասնակցելիս են եղել նրանց նախնիք Բապրեանդայ տափաստանների վրայ:

Կարնոյ գաղթականները չնայելով որ սրբազան քեաշկան սովորական կերակրների շարքն են գցել, բայց չեն մոռացել նրա համով ու ճաշակով պատրաստելը: Այն *Քեաշկակը* համով է, եթէ փորձ ձեռով է շինած: Դրա մէջ ևս օրհնեալ կորկոտը կայ: Կորկոտը եփելիս դնում են թոնրի մէջ, պղնձի վրայից էլ մի պլոկած չաղ ուլ քաշ անում, նրա մարմնի իւրը հետզհետէ կաթկթում է պղնձի մէջ և կերակուրը իւղակալացնում:

Երբ սրանք եփուած են լինում, առանձին կոթաւորով եռածեծ սոխ են շինում (տապակում) ու քեաշկակի վրէն ածելով վայելում: Սա աւելի անարատ է քան թէ հարիսան: Պառանները պատմում են, որ առաջուայ ժամանակ մեծ մասով գիշերն էին եփում քեաշկակը և այն էլ թորնում, բայց հիմա, նրբանց ասելով, աշխարհս փոխուել՝ ջահէլանոց է դառել. հարսի քէֆն ուզած ժամանակ առանց սկեսօր հրեամանի օջախի վրայ եփում է առանց ուլ կախելու,

Աիշտ է այժմ մենք չունինք Այրարատեան աստուածահրաւէր գունդը, 20,000-ի չափ ազգային աշխարհապահ զինուորները, որ իւրանց իշխանների ու

հայ թագաւորի հետ Նաւասարդի տօները տօնեն, բայց որ ուրիշի դարուփաւը չունինք, ինչ խելք է, որ մեր ձեռի ցամաք հացն էլ դէն գցենք: Ցաւելով է յիշում ամեն մի բանիմաց հայ, որ քրիստոնէութիւնը մեր մէջ ամուր հիմքերի վրայ դնելու համար հին կարգերից, սովորութիւններից շատերը անգոսնուելով հանուեցին ժողովրդի սրտից. հին հեթանոսականի տեղ քրիստոնէական նոր տօներ հաստատուեցին: Բայց մօտ երկու հազար տարի անցնելուց ետը, այսօրուան օրը երևում է մի ահնյայտնի փաստ. — այն՝ որ ժողովուրդը եկեղեցու միջոցով կապուելով քրիստոնէութեան և իւր անունը հայ-քրիստոնեայ կպցնելով, չդադարեց եկեղեցական տօները զարդարել, չբեղացնել իւր նախկին հեթանոսական, միս և արիւն դարձած աւանդներով: Օրինակ. առաջաւորաց պատին մի քանի գաւառներում Ս. Սարգսի պաս են ասում, իսկ շատ տեղ *խաշլի* պաս են անուանում, որ նոյնպէս սրբազան կերակուրներից է թւում: Պայծառակերպութեան տօնին շարունակում են Վարդադառ կամ Վրդիվեր, Վարդաւոր ասել, իսկ ուտիացիք *Վառվարթն ախսիբայ*:

Համբարձումը հասարակ ժողովրդի մէջ կոչում է *Վիճակ*, և թէ նա շատ սիրելի տօն է, զլիաւոր պատճառներից մինն էլ վիճակի խաղերն ու ջանգիւլումներն են:

Ս. Աստուածածնի վերափոխման տօնին *խաղող օրհնանքի պաս* են ասում:

Ս. Խաչին՝ բաղաբաղի կամ այգեբաղի: Իսկ ինչ վերաբերում է *Յիսնակի պասին*, միայն օրացոյցի

մէջ է այդպէս կարգացում, ժողովուրդը դրան նաւասարդի պաս է ասում և վերջացնում:

Գիտէի առաջուց, որ հին հեթանոս հայերը մեծահանդէս տօն ունէին և այդ տօնը նաւասարդն էր, ուստի ես կարողացածիս չափ նկարագրեցի, աչքի առաջ ունենալով կենդան մնացած նաւասարդի պատկերը: Հարցը զայլիս է նրա սկզբնաւորութեանը, որի մասին տարբեր կարծիքներ կան: Հ. Ինճիճեանը, որի կարծիքով Աստուած էլ հայերէն էր խօսում դրախտի մէջ, նաւասարդը Նոյի կամ Նոյեանց տոհմի գրած է կարծում. հ. Ալիշանը ենթադրութիւններ ու համատեղութիւններ անելուց ետը ասում է, որ այդ տօնն այնքան հին է, որի սկիզբն ու անունը մշուշի ու մութ ամպերի մէջ է ծածկուած, որոնց հասնելը անհնարին դժուարութիւն ունի, որովհետև այդ ամպերն այնքան բարձր են, որքան բարձր է Նոյի տապանակիր գազաթ Մասիսը: Իսկ ես կաւելացնեմ, որ հայ ժողովուրդը, այդ չորս հազար տարեկան կազնու տոկոն սաղարթը իւր սօսափիւնների մէջ պահած աւանդութիւններով ու զրոյցներով ամպաթաթախ կատարներից էլ վեր է թռչում և մեզ յայտնութեան ձիթենի մատուցանում: Ահա լսածս սոսափիւններից մի քոնձոտ հատուած, որ թերևս ճշմարտութիւն է պարունակում: Ժողովուրդը յիշածս գաւառներում նաւասարդը տօնելիս իւր նահապետների կամ պառաւ նաների բերանով աւանդում է որդկերանց, թոռներին հետևեալը:

— «Բալէք ջան, էս տօնն ուրիշ տօների նման չի. սա մեր ապ ու պապի օրից է սկսուած, որ մի սրտուկ—սրտոտ մարդ էր, ուրիշին գլուխ չվէր բե-

րող: Նա կուրս արաւ ու յաղթեց: Յաղթելուց ետը ուրախութիւն սարքեց անովի, ցեղովի, թոռներով, ծոններով, ուսարով, դասրով ու ասաւ, որ ամեն տարի յիշեն էդ աղիզ օրը, ուրախութիւն անեն իւրար քաղցր պառաւես ստելով: Սս մեծացել, պառաւել եմ, էս բանը ձեզ ասում եմ, դուք էլ Աստուծով պառաւէք ու ձեր որդկերանցն ասէք: Մեր ապ ու պապը որ չլինէր, մեր անունը հայ չէր ըլիլ»:

Ծերունի հայերի կցկաուր վկայութիւններից երևում է, որ նաւասարդի տօնը սկսուել է ազատասէր հայկի ժամանակից: Գուցէ այդ հիման վրայ հ. Ալիշանը հին նաւասարդին սրտի բերկրութիւնով անուանում է Օր հայկական, և կարծում է թէ օգոստոսի 11-ին է եղել, և իսպառ լսուել, ջնջուել է ժողովրդի սրտից ու յիշողութիւնից: Ո՛րքան պէտք է լինի բազմերախտ հայր Ալիշանի անկեղծ ուրախութիւնը, երբ տեսնի, որ իւր ազգային տօն յորջորջած նաւասարդը դեռ տօնուում է բնիկ ազգի մի մասի մէջ:

Փոքր ու պատիւ այն հայ գաւառներին, որոնք հազարաւոր տարիների ընթացքում անցնելով բիւր թէժ կրակի միջից, հազար անգամ իւրանց գլխին պսպղող սրբերի տակից, ամեն երկրաւոր բան կորցնելով, մեռնելուց առաջ քաղցր պարտք են համարել յետնորդներին նաւասարդի անխափան կատարելը, տօնելը կտակել:

Չանազան ժամանակներում մեր պապերը բնակավայրերը փոխեցին, տիրող բռնաւորների անագո-

րոյն կամքը կատարելու համար մի գաւառից միւս գաւառ, մի աշխարհից միւս աշխարհ տեղափոխուելիս՝ քարը քսուեցին, ամեն ապրուստից զրկուելով մաղին հակը դառան, սովից ու ծարաւից տառապեցին, արգելանքների մէջ վրշացին ու տնքացին, բայց Նաւասարդի պէս ազգային տօնը մասներից չզցեցին: Դա պարզ ցոյց է տալիս, որ հայ ժողովուրդը սուկուն է: Այժմ էլ չնայելով իւր շուրջը վիտոզ հազարաւոր պատրանքներին, դայթակղիչ միջոցներին, Նաւասարդն իբրև անզուգական տօն կատարում է, տօնում, հանդիսացնում է անձանձիր: Մի են լինում Նաւասարդ տօնողների սրտերը, ինչպէս մի է քեաշկայի, քեաշկալի, պենջարի, հարիսայի կորկոտը: Ո՛ր ազգի մէջ աւելի պանծալի ու հին տօն կայ քան մեր Նաւասարդը, ինչ բոյս կայ աւելի օրհնաբեր ու հին քան ցորենի հասկը, որից պատրաստում է կորկոտը, հատիկը:


Չուտով վերջացնեմ իմ խօսքը, որ ընթերցողին ձանձրութիւն չտամ:

Դառն հանգամանքների շնորհով դարերի ընթացքում հայերս շատ բան ենք փոփոխելով կորցրել: Սեպհական շատ քիչ բան ունինք, վերցրէք օրինակ հագուստի տարաղները, տների ձևերը, կերակրների անուկները, կայլն, մեծ մասով փոխ ունովի են: Մեր ժողովրդի գործածական լեզուն հօ այնքան օտար բառերով խճողուած է, որ իսկական տափը դժուար է շոկոււմ: Զերծ են մնացել ծէսեր, սովորութիւններ, տօներ և կենցաղավարութեան մի քանի եղանակներ: Դրանցով երեսպարզ ենք, ուրոյն գոյն ունինք: Դժբաղդարար այդ էլ մեր անհոգու-

թիւնից թէ միամիտ լուսաւորասիրութիւնից կորցնում ենք: Նորասիրութեան բահ ու քլունգը ձեռք առած քանդում ենք աջ ու ձախ: Ժողովրդի ասելը չլինի, այս արևին ձիւն չի դիմանալ: Հայերիս տարագամութեան անմիտ սովորութիւնը մեզ տակով, տակուքով կործանելու վրայ է: Նկատելի է մանաւանդ այն օրից, երբ այդ հոսանքի զօրութիւնով հայ կնանիք յանկարծակի ազատամտութիւն ստացան. գաւառներում տեղ-տեղ այնպէս թունդ է նրբանց ազատամտութիւնը, որ ինչ ասեմ, էլ չեն ուզում պաշտած խաչի առաջ ծուր դնել: Աստուած շանէ, եթէ այդ վնասակար հոսանքի մէջ, սկուեն, տարուին հայ կնանիք, էլ պրծաւ, այն ժամանակ մնաք բարով պէտք է ասել շատ զգուելի ազգային առանձնայատկութիւնների: Կարելի է մի կերպ համաձայնիլ, եթէ ուզում են, որ կորչին, անհետանան նախապաշարմունքները, աւելորդապաշտութիւնները, (թէև դրանք ժողովրդազրական նիւթերի մէջ իւրանց կարևոր տեղն ունին). թէպէտ այդ տեսակ բաների սիրողն ու ժողովողն եմ, բայց ես էլ համաձայնութիւնս կը տամ. բայց միթէ թողնենք մոռացուի, անհետանայ Նաւասարդն էլ. թողնենք հայկական այդ պանծալից տօնն էլ նորասիրութեան ախտին դոհ գնայ: Միթէ այդ մեր անհուն անհոգութիւնը չի ցոյց տալ, եթէ աւելին չասեմ: Նաւասարդը որ կայ, հայի կենդանութեան մասերից մինն է, եղունգ չէ, որ մարդ կտրի և անհոգութիւնով դէն գցի, անգին զգայարանքներից մինն է. աչքի լոյսի հետ կարելի է միթէ խաղալ, անհոգ վարուել: Ի՞նչ կարիք կայ զանազան նոր-տարիներ ու Տօնածառեր փոխ

առնել ուրիշներից, երբ մեր ազգայինն ունինք, որ հին է և ընտիր: Միթէ կարիք կայ կամ խելոքութիւն է ամեն կէտում համակերպուել, գերի դառնալ ուրիշին:

Ինչո՞ւ մեր մատներով մեր ականջները կալում ենք, որ չլսենք հառաչաձայն շունչը առաքինի թագաւորի. «Ո՞ տայր զծուխ ծխանի և դառաւօտն նաւասարդի, զվազելն եղանց և զվազելն եղջերուաց. մեք քոզ հարուաք և թմրկի հարկանէաք»:





ՇՒԿ ԼՅԿ

ՀՀ Ազգային գրադարան



NL0585520

